**«ԵՎՐՈԹԵՐՄ»**
**ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ**

**Երևան 2023**

**ԱԶԴԱԳԻՐ**

**«ԵՎՐՈԹԵՐՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**
Թողարկողի ֆիրմային անվանումը, կազմակերպաիրավական ձևը
Հայաստանի Հանրապետություն, 0002, ք.Երևան, Ամիրյան 15/2
հեռ. (+374 60) 686-060
էլ.փոստ՝ info@euroterm.am,
ինտերնետային կայք՝ www.euroterm.am, www.noyan.am

**«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**
Գլխավոր տեղաբաշխողի անվանումը, կազմակերպաիրավական ձևը
Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Վազգեն Սարգսյան 26/1
հեռ. (+374 10) 511-211
էլ.փոստ՝ post@conversebank.am
ինտերնետային կայք՝ www.conversebank.am

**ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ**

| | |
|---|---|
| Արժեթղթերի տեսակը՝ | Անվանական, արժեկտրոնային պարտատոմս |
| Արժեթղթերի ձևը՝ | Ոչ փաստաթղթային |
| Արժեթղթերի անվանական արժեքը՝ | 10,000 (Տասը հազար) ՀՀ դրամ |
| Արժեթղթերի թողարկման ընդհանուր քանակը՝ | 50,000 (Հիսուն հազար) հատ |
| Արժեթղթերի թողարկման ընդհանուր ծավալը՝ | 500,000,000 (Հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ |
| Արժեթղթերի արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը և վճարման պարբերականությունը՝ | 12.5 %<br>Վճարման պարբերականությունը՝ կիսամյակային |
| Արժեթղթերի թողարկման օր՝ | 28 նոյեմբեր 2023թ. |
| Արժեթղթերի մարման օր՝ | 28 նոյեմբեր 2026թ. |
| Արժեկտրոնի վճարման հստակ օրերը՝ | 28 մայիս 2024թ.<br>28 նոյեմբեր 2024թ.<br>28 մայիս 2025թ.<br>28 նոյեմբեր 2025թ.<br>28 մայիս 2026թ.<br>28 նոյեմբեր 2026թ. |
| Տեղաբաշխման ձևը՝ | Չերաշխավորված |

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ ........ 5**
**ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ ........ 6**
1.1. Թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն ........ 6
1.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը 8
1.3. Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները ........ 10
1.4. Համառոտ տեղեկություններ Թողարկողի աուդիտն իրականացնող անձանց մասին ........ 11
1.5. Թողարկողի կառավարման մարմինների, բաժնետերերի և աշխատակիցների վերաբերյալ տեղեկատվություն ........ 11
1.6. Առաջարկվող պարտատոմսերի պարտատոմսեր հիմնական վիճակագրական տվյալները ........ 12
1.7. Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը ........ 13
1.8. Այլ էական տեղեկություններ ........ 15
1.9. Ամփոփ ֆինանսական տվյալներ ........ 15
**ԲԱԺԻՆ 2. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ........ 19**
2.1. Ռիսկային գործոններ ........ 19
2.2. Հիմնական տեղեկատվություն ........ 20
2.3. Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն ........ 20
2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները ........ 28
2.5. Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը ........ 33
2.6. Լրացուցիչ տեղեկատվություն ........ 34
**ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ........ 36**
3.1. Անկախ աուդիտորներ ........ 36
3.2. Ռիսկային գործոններ ........ 36
3.3. Տեղեկատվություն Թողարկողի մասին ........ 38
3.4. Բիզնեսի նկարագիրը ........ 39
3.5. Թողարկողի կառուցվածքը ........ 41
3.6. Թողարկողի հիմնական միջոցները ........ 41
3.7. Զարգացման վերջին միտումները ........ 42
3.8. Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները ........ 42
3.9. Կառավարման մարմինների գործունեությունը ........ 46
3.10. Հսկող անձինք ........ 46
3.11. Թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսի վերաբերյալ ........ 47
3.12. Լրացուցիչ տեղեկատվություն ........ 47
3.13. Էական պայմանագրեր ........ 48
3.14. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը ........ 48
3.15. Այլ տեղեկատվություն ........ 49
**ՀԱՎԵԼՎԱԾ 1. Հայտ-հանձնարարականի տիպային ձև (իրավաբանական անձ).. 50**

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Հայտ-հանձնարարականի տիպային ձև (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) ........................................................................................ 52
ՀԱՎԵԼՎԱԾ 3. Թողարկողի վարչակազմակերպական կառուցվածքը .................. 54
ՀԱՎԵԼՎԱԾ 4. Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը............ 54
ՀԱՎԵԼՎԱԾ 5. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի մասնաճյուղերի ցանկը .......................... 56
ՀԱՎԵԼՎԱԾ 6. Ֆինանսական հաշվետվություններ ................................................ 58

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել Ազդագրի բովանդակությունը:

**Ստորագրող անձինք**

| | | |
|---|---|---|
| «Եվրոթերմ» ՓԲԸ-ի բաժնետեր Էդիկ Ղազարյան | | 30.10.2023թ (ամսաթիվ) |
| «Եվրոթերմ» ՓԲԸ-ի բաժնետեր Ռիփսիմե Կաուկչյան | | 30.10.2023թ (ամսաթիվ) |
| «Եվրոթերմ» ՓԲԸ-ի տնօրեն Վահե Ղազարյան | | 30.10.2023թ (ամսաթիվ) |
| «Եվրոթերմ» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահ՝ Լյուդմիլա Սարգսյան | | 30.10.2023թ (ամսաթիվ) |
| Տեղաբաշխող «Կոնվերս Բանկ» ՓԲԸ՝ ի դեմս Անդրանիկ Գրիգորյանի | | 30.10.2023թ (ամսաթիվ) |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ · REPUBLIC OF ARMENIA CONVERSE BANK CJSC · РЕСПУБЛИКА АРМЕНИЯ ЗАО «КОНВЕРС БАНК» · 00000291



Է. Ղազարյան

# ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**Սույն ամփոփաթերթը դիտվում է որպես Ազդագրի ներածական համառոտ նկարագրություն և առաջարկվող արժեթղթերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ազդագրի վրա:**
**Ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու դեպքում (այդ թվում նաև թարգմանությանը վերաբերող մասով) ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձինք կրում են քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:**

Ներդրողը կարող է ձեռք բերել սույն փաստաթուղթը և դրան կից փաստաթղթերը թղթային տարբերակով Կոնվերս Բանկի Գլխավոր գրասենյակում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ Կոնվերս բանկի և Եվրոթերմ ՓԲԸ-ի ինտերնետային կայքում՝ համապատասխանաբար www.conversebank.am , www.euroterm.am :

## 1.1. Թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

### 1.1.1. Թողարկողի տվյալները և կապի միջոցները

**Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝**
**հայերեն՝** «Եվրոթերմ» փակ բաժնետիրական ընկերություն
**ռուսերեն՝** “Евротерм” закрытое акционерное общество
**անգլերեն՝** “Eurotem” CJSC
**Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է՝**
**հայերեն՝** «Եվրոթերմ» ՓԲԸ
**ռուսերեն՝** ЗАО “Евротерм”
**անգլերեն՝** “Eurotem” closed joint-stock company
**Թողարկողի պետական գրանցման վայրն է՝**
ՀՀ, 002, ք. Երևան, Ամիրյան 15/2
**Թողարկողի պետական գրանցման համարն է՝** 286.110.03236:
**Թողարկողի գտնվելու վայրն է՝**
ՀՀ, 0089, ք. Երևան, Ա. Քոչինյան 5
**Կապի միջոցները՝**
հեռ.՝ (+374 60) 686-060
էլ. Փոստ **info@euroterm.am ,**
Ինտերնետային կայք՝ **www.euroterm.am :**
**Թողարկողի հիմնադրման երկիրը՝** Հայաստանի Հանրապետություն,
**Ընկերության կազմակերպաիրավական ձևը՝** փակ բաժնետիրական ընկերություն (գրանցված 25.06.1998թ.):
Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապ հաստատել Կոնվերս Բանկի Ներդրումային դեպարտամենտի Կորպորատիվ և ներդրումային բանկային ծառայությունների բաժնի համապատասխան աշխատակիցների հետ՝ հետևյալ հեռախոսահամարներով.
(+374 10) 511-211 (ներքին) 2449 կամ 2454, էլ հասցե. KarimyanElen@conversebank.am, YeghiazaryanEmilia@conversebank.am, corpinvest@conversebank.am :

### 1.1.2. Թողարկողի համառոտ պատմությունը, բիզնեսի նկարագիրը և ռազմավարությունը

«Եվրոթերմ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Թողարկող կամ Ընկերություն) իր գործունեությունը սկսել է 1998 թվականից և 25 տարի գործունեություն է ծավալում ՀՀ շուկայում և դրա սահմաններից դուրս: Ընկերությունը զբաղվում է սննդային ապրանքների վերամշակմամբ և արտադրությամբ, ինչպես նաև ջեռուցման, ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի նախագծման, տեղադրման, սպասարկման և վերանորոգման իրականացման աշխատանքներով:

Սննդային ապրանքներն արտադրվում և վաճառվում են «ՆՈՅԱՆ» և «ՄԵՆՔ» ապրանքանիշով, իսկ ջեռուցման համակարգերը՝ «ԵՎՐՈԹԵՐՄ» ապրանքանիշով:
Ընկերությունն ունի սննդի վերամշակմամբ զբաղվող թվով 2 գործարան՝

1. ՀՀ, ք. Երևան, Ջրվեժ համայնք - մրգի և բանջարեղենի վերամշակման, ինչպես նաև բնական հյութերի և պահածոների արտադրության գործարան;
2. ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Վանանդ - մրգի և բանջարեղենի վերամշակման գործարան:

Ընկերությունը նաև նշանակալի դիրք է զբաղեցնում Հայաստանում ջեռուցման, ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի նախագծման, տեղադրման, սպասարկման և վերանորոգման ոլորտում:

1998թ. հեղուկ սննդամթերք փաթեթավորող սարքավորումների խոշորագույն արտադրողներից մեկի՝ շվեդական աշխարհահռչակ «ՏԵՏՐԱՊԱԿ» ընկերության հետ կնքված պայմանագրի համաձայն ներմուծվել և Երևանում գտնվող գործարանում առաջին անգամ ՀՀ-ում գործարկվել է ասեպտիկ փաթեթավորմամբ բնական հյութերի արտադրության հոսքագիծ: Այստեղ վերամշակման հզորությունն ու արտադրության ծավալները ընդլայնելու նպատակով 2001թ-ին ընկերությունը ներմուծեց ժամում 10 տոննա միրգ վերամշակող հոսքագիծ:

Սեզոնի ընթացքում վերամշակված միրգը՝ առաջնային հումքը, վերածվում է տվյալ մրգատեսակից պատրաստված խտահյութի, իսկ խտահյութ է պատրաստվում ամբողջ տարին անխափան արտադրություն ապահովելու համար:

Հյութերի արտադրության տեխնոլոգիական գործընթացը իրականացվում է ներկայիս ամենաժամանակակից մեթոդներով:

Հիմնադրման օրվանից ի վեր «Եվրոթերմ» ՓԲԸ-ի գլխավոր նպատակն է եղել արտադրել բարձրորակ բնական հումքից սննդամթերք և միաժամանակ նպաստել Հայաստանի տնտեսության զարգացմանը:

Արտադրության ընթացքում օգտագործվող հումքի մեծամասնությունը Հայաստանի տարածաշրջանի մրգերը և բանջարեղենն են, որի զգալի մասն աճեցվում է անմիջապես սեփական հողատարածքներում, ինչն էլ վկայում է, որ Թողարկողը մշտապես հավատարիմ է իր սկզբնական գաղափարախոսությանը:
Այսօր Ընկերությունը հանդիսանում է Հանրապետության ոչ միայն խոշորագույն արտադրողներից, այլև արտահանող ընկերություններից մեկը: Արտադրանքը հաջողությամբ իրացվում է ՌԴ-ում, ԱՄՆ-ում, Ուկրաինայում, Բելառուսում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Լիտվայում, Հունաստանում, Իտալիայում, Մեծ

Բրիտանիայում, Նիդեռլանդներում, Էստոնիայում, Լեհաստանում, Իսրայելում, Վրաստանում, ԱՄԷ-ում, Ավստրալիայում:

Նպատակաուղղված լինելով ձեռնարկել միջոցառումներ ուղղված ընկերությունում արտադրվող բնական հյութերի, մուրաբաների, պահածոների և խտանյութերի արտադրատեսակների որակի շարունակական կատարելագործմանը, հաճախորդների պահանջների բավարարմանը, անվտանգ սննդի մատակարարմանը, գիտակցելով որակի և սննդի անվտանգության կառավարման կարևորությունը՝ Ընկերությունը ներդրել է հետևյալ միջազգային ստանդարտները՝

- որակի կառավարման համակարգ՝ պահանջները ISO 9001:2015,
- որակի կառավարման համակարգ՝ պահանջները ISO 22000 : 2018, ներառյալ ISO/TS 22002-1 և FSSC 22000 հավելյալ պահանջները,
- Էկոլոգիական կառավարման համակարգ՝ պահանջները ISO 14001 : 2015,
- աշխատանքի և առողջության անվտանգության կառավարման համակարգ՝ պահանջները՝ ISO 45001:2018:

Ընկերությունը ապահովում է կառավարման ստանդարտների պահանջների կատարումը և շարունակական կատարելագործումը:

### 1.1.3. Թողարկողի կանոնադրական կապիտալը և դրա կառուցվածքը

Թողարկողի տեղաբաշխված կանոնադրական կապիտալը բաղկացած է 10,501 (տաս հազար հինգ հարյուր մեկ) հատ սովորական բաժնետոմսերից, յուրաքանչյուրը 50,000 (հիսուն հազար դրամ) անվանական արժեքով Թողարկողի մասնակիցների ցանկը ներկայացված է սույն Ազդագրի 1.5 կետով:

### 1.1.4. Ակտիվների որակը

2022 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Թողարկողի ընդհանուր ակտիվների մեծությունը կազմել է 7.26 մլրդ դրամ:

Նույն պահի դրությամբ ակտիվների շահութաբերությունը (զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / ընդհանուր ակտիվների միջին մեծություն) կազմել է 10%:

## 1.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Պոտենցիալ ներդրողը, մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը, պետք է շրջահայաց լինի և հաշվի առնի ստորև բերված ռիսկերը և սույն Ազդագրում ներառված այլ տեղեկատվությունը, ինչպես նաև իր փորձը, նպատակները, ֆինանսական ռեսուրսները, ռիսկի ախորժակը և եկամուտի սպասումները, ինչպես նաև հաշվի առնի, որ ստորև բերված ռիսկերը ոչ բոլոր ռիսկերն են, որ թողարկողը կարող է երբևէ կրել: Թողարկողը բացահայտել է միայն այն ռիսկերը, որոնք նա համարել է էական: Ենթադրաբար, կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք թողարկողն այժմ չի համարում էական կամ որոնք ներկայումս հայտնի չեն:

Ստորև ներկայացված են պարտատոմսերում ներդրումների հետ կապված թողարկողին և պարտատոմսերին առնչվող հնարավոր ռիսկերի հիմնական տեսակները.

## 1.2.1. Պարտատոմսերին առնչվող ռիսկեր

**Շուկայական ռիսկ:** Շուկայական ռիսկը շուկայական փոփոխականների (տոկոսադրույքներ, արտարժութային փոխարժեքներ կամ տոկոսադրույքներ) տատանման հետևանքով ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ իրական արժեքի տատանման և դրա հետևանքով վնաս կրելու հավանականությունն է: Անկախ շուկայական ռիսկի ի հայտ գալու հավանականությունից, թողարկողի կողմից վճարվող արժեկտրոնների և պարտատոմսի մարման գումարային մեծությունները չեն փոխվում:

**Տոկոսադրույքի ռիսկ:** Հայաստանի ֆինանսական շուկայում առկա տոկոսադրույքների տատանումը կարող է բացասաբար ազդել պարտատոմսերի եկամտաբերության և իրացվելիության ցուցանիշների վրա: Շուկայում տոկոսադրույքների բարձրացումը կարող է բերել նաև Թողարկողի պարտատոմսերի եկամտաբերության վերանայման (բարձրացման), ինչն իր հերթին կբերի գնի անկման և հակառակը:

**Դեֆոլտի ռիսկ:** Ներդրողն իր վրա է վերցնում ապագայում թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, պարտատոմսերի մայր գումարի կամ արժեկտրոնների վճարման անհնարինության, հավանական սնանկացման ռիսկը:

**Գնաճի կամ գնողունակության ռիսկ:** Գնաճի առկայության պայմաններում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրենց կողմից ստացվելիք իրական եկամտաբերությունը կարող է ավելի ցածր լինել (գնաճի չափով), քան Թողարկողի կողմից առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը:

**Վերաներդրման ռիսկ:** Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ պարտատոմսերից ստացվող արժեկտրոնների կամ մարումից առաջացած գումարը առնվազն պարտատոմսի նույն եկամտաբերությամբ վերաներդնելը կարող է հնարավոր չլինել:

**Իրացվելիության ռիսկ**: Շուկայական իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում կարող է առաջանալ իրացվելիության ռիսկ: Թողարկողը պարտատոմսերի իրացվելիությունն ապահովելու համար նախատեսում է պարտատոմսերը ցուցակել Ֆոնդային բորսայում և ունենալ շուկա ստեղծող: Այնուամենայնիվ, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ ներդրողը ցանկացած պահի կկարողանա իր համար շահավետ գնով վաճառել կամ ձեռք բերել պարտատոմսերը:

**Աշխարհաքաղաքական ռիսկ:** Աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և ներքաղաքական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում հնարավոր է առաջ գան այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ ընդհանուր մակրոտնտեսական իրավիճակի և թողարկողի ֆինանսական վիճակի վրա:

## 1.2.2. Թողարկողին առնչվող ռիսկեր

Թողարկողը իր գործունեության ընթացքում բախվում է տարբեր ռիսկային գործոնների հետ, որոնցից հատկապես կարևոր են հետևյալ տեսակները.

**Շուկայական ռիսկ: Երբ** ֆինանսական գործիքների օգտագործման արդյունքում Թողարկողը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես արժութային ռիսկի, որը բխում է ինչպես իր գործառնական, այնպես էլ ֆինանսական գործունեությունից:

**Արտարժութային ռիսկ:** Թողարկողը գործարքներ է իրականացնում արտարժույթով՝ ենթարկվելով արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը: Թողարկողը ենթարկված է արտարժութային ռիսկին արտարժույթային փոխառությունների և արտարժութային դրամական մնացորդների գծով:

**Վարկային (պարտքային) ռիսկ:** Վարկային ռիսկը հաճախորդի կամ այլ գործընկերոջ կողմից իր պարտավորությունները չկատարելու հետևանքով Թողարկողի կողմից ֆինանսական կորուստներ կրելու ռիսկն է: Այս ռիսկի ազդեցությունը Թողարկողի վրա առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը և փոխառությունները:

**Իրացվելիության ռիսկ:** Իրացվելիության ռիսկը իրենից ներկայացնում է այն ռիսկը, երբ ընկերությունը չի կարողանա կատարել իր պարտավորությունները:

Ընկերության քաղաքականությունը ներառում է իրացվելիության կառավարման զգուշավոր քաղաքականություն, որը նախատեսում է դրամական միջոցների եւ բանկային հաշիվների մնացորդների, ինչպես նաեւ բարձր իրացվելի ակտիվների բավարար քանակ՝ ժամանակին պարտավորությունների համար բոլոր վճարումները ապահովելու համար:

**Տնտեսական ռիսկեր:** ՀՀ և Թողարկողի կողմից ապրանքների արտահանման գործընկեր երկրներում մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար անդրադառնալ Թողարկողի ֆինանսական վիճակի վրա:

**Օրենսդրական ռիսկեր:** Հարկային կամ մաքսային ոլորտը կարգավորող օրենսդրությունում փոփոխությունները կարող են ազդել Թողարկողի ֆինանսական կանխատեսումների վրա:

**Մրցակցային ռիկեր:** Թողարկողի գործունեության ոլորտին բնորոշ է մրցակցության բարձր մակարդակը, հետևաբար շուկայում նոր մրցակիցների մուտքը կարող է նվազեցնել ընկերության շուկայական մասնաբաժինը և փոխել կանխատեսված ընդլայնման ռազմավարությունը:

## 1.3. Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

2022-2023 թվականի ընթացքում Թողարկողի արտադրած ապրանքների և մատուցած ծառայությունների մոտ 50%-ը արտահանվել է, իսկ մնացած մասը սպառվել է տեղի շուկայում: 2023թ.-ի հունվար-օգոստոս ամիսներին արտահանված ապրանքներից եկամուտը կազմել է մոտ 536 մլն դրամ, իսկ տեղի շուկայում սպառումը՝ մոտ 570 մլն դրամ:

Ապրանքների և ծառայությունների վաճառքում գերակշիռ դիրք են զբաղեցնում հյութերն ու պահածոյացված բանջարեղենը, որոնց կշիռը ընդհանուր վաճառքում կազմում է մոտ 86% (2023թ.-ի հունվար-օգոստոս ամիսների համար):

## 1.4. Համառոտ տեղեկություններ Թողարկողի աուդիտն իրականացնող անձանց մասին

2020-2022 թթ.-ի ընթացքում Թողարկողի արտաքին աուդիտն իրականացրել է «ՊՐՈԳՐԵՍ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ-ն՝ հասցե.

ՀՀ, 0010, ք. Երևան,
Վազգեն Սարգսյանի փող., 23/3
Հեռ՝ (+374 10) 541- 175
Կայք՝ https://progress-audit.am/

## 1.5. Թողարկողի կառավարման մարմինների, բաժնետերերի և աշխատակիցների վերաբերյալ տեղեկատվություն

### Թողարկողի բաժնետերերը

Էդիկ Սմբատի Ղազարյան

**Սեփականության ձևը**՝ ոչ պետական
**Բաժնետոմսի տեսակը**՝ սովորական
**Ռեզիդենտություն**՝ ռեզիդենտ
**Մասնակցության չափը.** 10,000 հատ (95.23%)

Ռիփսիմե Հայկի Կաուկչյան

**Սեփականության ձևը**՝ ոչ պետական
**Բաժնետոմսի տեսակը**՝ սովորական
**Ռեզիդենտություն**՝ ռեզիդենտ
**Մասնակցության չափը.** 501 հատ (4.77%)
Թողարկողի բաժնետոմսերը չեն շրջանառվում կարգավորող շուկայում: Թողարկողի բաժնետոմսերը թողարկված են անժամկետ:

### Թողարկողի կառավարման մարմինները

Թողարկողի կանոնադրությամբ սահմանված են կառավարման հետևյալ մարմինները՝
- Բաժնետերերի ընդհանուր ժողով, այսուհետ նաև Ժողով,
- Տնօրենների խորհուրդ,
- Գործադիր տնօրեն:

Թողարկողի գործադիր տնօրենի մասին տեղեկատվությունը ներկայացված է ստորև.

| Անուն/Ազգանուն | Պաշտոն | Փորձառությունը |
|---|---|---|
| **Վահե Էդիկի Ղազարյան** | Տնօրեն | Ընկերության տնօրեն է 2002 թ.-ից |

Ազդագրի գրանցման ներկայացնելու պահի դրությամբ Ընկերությունում առկա չէ ձևավորված տնօրենների խորհուրդ: Ընկերության կողմից արժեթղթերի տեղաբաշխման իրավասությունը վերապահվել է Ժողովին:

### Թողարկողի աշխատակիցները

Ընկերության հիմնական աշխատակիցների քանակը կազմում է մոտ 200, իսկ հումքի մթերման սեզոնին աշխատակիցների քանակը հասնում է մինչև 300-ի:

## 1.6. Առաջարկվող պարտատոմսերի պարտատոմսեր հիմնական վիճակագրական տվյալները

«Եվրոթերմ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Թողարկող) թողարկվող պարտատոմսերը անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային, միջնաժամկետ պարտատոմսեր են:

Թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվում և մարվում են ՀՀ դրամով:
Պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարումը կատարվում է ՀՀ դրամով:

| | |
|---|---|
| **Պարտատոմսի անվանական արժեքը՝** | 10,000 (Տաս հազար) ՀՀ դրամ, |
| **Պարտատոմսերի թողարկման ընդհանուր քանակը՝** | 50,000 (Հիսուն հազար) հատ |
| **Պարտատոմսերի թողարկման ընդհանուր ծավալը՝** | 500,000,000 (Հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ |
| **Պարտատոմսերի արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը՝** | 12.5% |
| **Պարտատոմսերի առաջարկի իրականացման սկիզբը** | 28 Նոյեմբեր 2023թ. |
| **Առաջարկի իրականացման ավարտը՝** | 28 Փետրվար 2024 թ. |
| **Պարտատոմսերի շրջանառության ժամկետը՝** | 36 ամիս |
| **Արժեկտրոնների վճարման պարբերականությունը՝** | Կիսամյակային |
| Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը | 28 Նոյեմբեր 2023թ. |
| Արժեկտրոնի վճարման հստակ օրերը՝ | 28 մայիս 2024թ.<br>28 նոյեմբեր 2024թ.<br>28 մայիս 2025թ.<br>28 նոյեմբեր 2025թ.<br>28 մայիս 2026թ.<br>28 նոյեմբեր 2026թ. |
| **Տեղաբաշխման ձևը՝** | Չերաշխավորված |

Պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում: Ընկերության կողմից թողարկվող Պարտատոմսերը ապահովված չեն:

Պարտատոմսերով ներգրավված միջոցները Ընկերությունը նախատեսում է իրականացնել վարկային միջոցների փոխարինում, արտադրողականության բարձրացմանն ուղղված կապիտալ ծախսերի կատարում և շրջանառու միջոցների համալրում՝ նյութերի պաշարներ ձևավորելու նպատակով:

## 1.7. Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը

### 1.7.1. Պարտատոմսերի տեղաբաշխման գործընթացի համառոտ նկարագիրը

Թողարկողի պարտատոմսերի բաժանորդագրություն չի իրականացվելու:

Պարտատոմսերի ձեռք բերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը (իրավաբանական անձինք համաձայն Հավելված 1-ի և ֆիզիկական անձինք համաձայն Հավելված 2-ի), պատշաճ կերպով ներկայացնեն Տեղաբաշխողին (Կոնվերս Բանկ), կատարեն համապատասխան վճարում, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելը:

Պարտատոմս ձեռք բերողը պետք է Տեղաբաշխողի մոտ ունենա ՀՀ դրամով բանկային հաշիվ և արժեթղթերի հաշիվ՝ որևէ Հաշվի օպերատորի մոտ:
Պարտատոմսերում ներդրում կատարող անձը կարող է եկամուտ ստանալ հետևյալ դեպքերում՝

- Պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսից,
- Մինչև մարումը վաճառքի և գնման գների դրական տարբերությունից (կապիտալի հավելաճ):

Պարտատոմսերից ստացվող եկամուտն ենթակա է հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց համար) և եկամտային հարկով (ֆիզիկական անձանց համար) ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով: Հարկման մանրամասն կարգը ներկայացված է սույն Ազդագրի 2.3 կետի 2.3.13 ենթակետում :

### 1.7.2. Վճարումների իրականցման կարգը

Պարտատոմսերի դիմաց վճարումները գնորդները պետք է իրականացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի պատշաճ կերպով Կոնվերս բանկ ներկայացման օրը (որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմանների ընդունելը) ոչ ուշ, քան մինչև ժամը 16:30-ը, հատուկ թողարկման նպատակով Բանկում բացված թիվ 19300378033800 տարանցիկ հաշվին կանխիկ մուտքագրման կամ փոխանցման միջոցով: Պարտատոմսերի դիմաց վճարվող գումարը հաշվարկվում է ստորև ներկայացված բանաձևով հաշվարկված մեկ պարտատոմսի տեղաբաշխման տվյալ օրվա գինը բազմապատկելով ձեռք բերվող պարտատոմսերի քանակով՝ ընդ որում, եթե հայտ-հանձնարարականի ներկայացումը և համապատասխան գումարի վճարումը կատարվել է մինչ տվյալ օրվա 16:30 ներառյալ, ապա պարտատոմսի գինը հաշվարկվում է տվյալ օրով: Ժամը 16:30-ից հետո

ներկայացված և/կամ վճարված հայտի համար վճարվող գումարի չափը հաշվարկվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա պարտատոմսի գնով:

### 1.7.3. Պարտատոմսերի տեղաբաշխման գինը որոշվելու է համաձայն հետևյալ բանաձևի.

$$DP = \frac{C}{f}\sum_{t=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{t-1+\tau}} + \frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$

, որտեղ.

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

DP - պարտատոմսի գինն է (կլորացվում է ստորակետից հետո 4 նիշի ճշտությամբ թվաբանական կլորացման կանոնների համաձայն),
DSN – գործարքի կատարման օրից մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,
DCC- գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,
f – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է՝ հաճախականությունը,
N – հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,
C – տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց,
y – մինչև մարում եկամտաբերություն:

Տեղաբաշխման ողջ ընթացքում Պարտատոմսերի յուրաքանչյուր օրվա գինը Թողարկողը և Տեղաբաշխողը հրապարակելու են իրենց ինտերնետային կայքերում:
Պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը հաշվարկում է կիսամյակային պարբերականությամբ՝ տեղաբաշխման սկզբի օրվան հաջորդող յուրաքանչյուր n-րդ պարբերական ամսվա համապատասխան օրը:
Պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնի կուտակումն իրականացվելու է հետևյալ բանաձևով.

$$AI = FV \times \frac{C}{k} \times \frac{DCS}{DCC}$$

, որտեղ.

AI – կուտակված արժեկտրոնային եկամուտն է,
FV- մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,
C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,
k – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը
Օրերի հաշվարկման պայմանականությունը Թողարկողի պարտատոմսերի համար համարվում է Actual/Actual, ընդ որում
DCS - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D2M2Y2-D1M1Y1],

DCC –արժեկտրոնային փուլի օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D3M3Y3-D1M1Y1],
D1M1Y1 – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/ արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է,
D2M2Y2 – գործարքի կատարման ամսաթիվն է,
D3M3Y3 – գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/ անվանական արժեքի մարման ամսաթիվն է:
Պարտատոմսերի տեղաբաշխման յուրաքանչյուր տրանշի վճարվող արժեկտրոնի տարեկան տոկոսադրույքը ենթակա է որոշման Բանկի Խորհրդի կողմից:

## 1.8. Այլ էական տեղեկություններ

Արժեկտրոնի գումարը վճարվում է պարտատոմսերի սեփականատերերին, արժեկտրոնի հաշվարկման օրը: Եթե արժեկտրոնի հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Արժեկտրոնների վճարումը կատարվում է ՀՀ դրամով:

## 1.9. Ամփոփ ֆինանսական տվյալներ

Թողարկողի տարեկան ֆինանսական հաշվետվությունները, և ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են Հավելված 6-ում և Հավելված 4-ում:

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

*հազար ՀՀ դրամ*

| Ցուցանիշի անվանումը | 31/12/22 (աուդիտ անցած) | 31/12/21 (աուդիտ անցած) | 31/12/20 (աուդիտ անցած) |
|---|---|---|---|
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 1,837,460 | 2,269,477 | 1,941,043 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | (1,228,478) | (1,392,764) | (1,264,212) |
| **Համախառն շահույթ (վնաս)** | **608,982** | **876,713** | **676,831** |
| Իրացման ծախսեր | (183,758) | (210,563) | (200,906) |
| Վարչական ծախսեր | (107,205) | (115,411) | (124,183) |
| **Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)** | **318,019** | **550,739** | **351,742** |
| Գործառնական այլ եկամուտներ | 320,977 | 904,731 | 183,259 |
| Գործառնական այլ ծախսեր | (280,790) | (379,134) | (297,637) |

| | | | |
|---|---|---|---|
| **Գործառնական շահույթ (վնաս)** | **358,206** | **1,076,336** | **237,364** |
| Ֆինանսական ծախսեր | (12,811) | (312,340) | (253,235) |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս) | | | |
| Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս) | | | |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս) | 381,897 | 36,374 | (435,783) |
| **Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)** | **727,292** | **800,370** | **(451,654)** |
| Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս) | | | |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով | 727,292 | 800,370 | (451,654) |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | (7,929) | (135,740) | - |
| **Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո** | **719,363** | **664,630** | **(451,654)** |

## ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

*հազար ՀՀ դրամ*

| Ցուցանիշի անվանումը | 31/12/22 (աուդիտ անցած) | 31/12/21 (աուդիտ անցած) | 31/12/20 (աուդիտ անցած) |
|---|---|---|---|
| Հիմնական միջոցներ | 4,201,491 | 4,462,884 | 4,812,040 |
| Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | | | |
| Ոչ նյութական ակտիվներ | 11,188 | 10,256 | 11,942 |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ | | | |
| Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | | | |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 895,226 | 887,981 | 880,133 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | **5,107,905** | **5,361,121** | 5,704,115 |
| Պաշարներ | 1,157,846 | 1,077,057 | 1,138,020 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | | | |
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 879,773 | 730,683 | 773,310 |
| Այլ դեբիտորական պարտքեր | | | |
| Ընթացիկ ֆինանսական ներդրումներ | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 107,586 | 6,886 | 17,995 |
| Այլ ընթացիկ ակտիվներ | 5,958 | 11,874 | 3,410 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | **2,151,163** | **1,826,500** | **1,932,735** |
| **Ընդամենը ակտիվներ** | **7,259,068** | **7,187,621** | **7,636,850** |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 525,050 | 525,050 | 525,050 |
| Էմիսիոն եկամուտ | | | |
| Կուտակված շահույթ | 2,133,834 | 1,414,471 | 727,065 |
| Պահուստային կապիտալ | | | |
| Սեփական կապիտալի այլ տարրեր | 1,694,598 | 1,695,142 | 1,689,413 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | **4,353,482** | **3,634,663** | **2,941,528** |
| Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ | 1,877,122 | 1,233,342 | 2,444,889 |
| Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ | 383,961 | 363,127 | 222,806 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | **2,261,083** | **1,596,469** | **2,667,695** |
| Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ | 405,858 | 1,653,734 | 1,699,747 |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | | | |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | | | |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 238,645 | 302,755 | 327,880 |
| Այլ ընթացիկ պարտավորություններ | | | |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | **644,503** | **1,956,489** | **2,027,627** |
| **Ընդամենը պարտավորություններ** | **2,905,586** | **3,552,958** | **4,695,322** |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | **7,259,068** | **7,187,621** | **7,636,850** |

## ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

*հազար ՀՀ դրամ*

| Ցուցանիշի անվանումը | 31/12/22 (աուդիտ անցած) | 31/12/21 (աուդիտ անցած) | 31/12/20 (աուդիտ անցած) |
|---|---|---|---|
| Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին | 6,886 | 17,995 | 17,119 |
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | 258,028 | 509,826.00 | 771,572 |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | 8,219 | (11,480.00) | (3,410) |
| Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | (165,547) | (509,455) | (767,286) |
| Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին | 107,586 | 6886 | 17,995 |

## ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

| Ցուցանիշի անվանումը | 31/12/22 (աուդիտ անցած) | 31/12/21 (աուդիտ անցած) | 31/12/20 (աուդիտ անցած) |
|---|---|---|---|
| Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) | 68504 | 63292 | կիրառելի չէ |
| Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) | 17% | 18% | -15% |
| Ակտիվների շահութաբերրություն (ROA) | 10% | 9% | -6% |
| Զուտ շահույթի մարժա (NPM) | 39% | 29% | -23% |
| Կապիտալի համարժեքության գործակից | 60% | 51% | 39% |
| Ֆինանսական կախվածության գործակից | 67% | 98% | 160% |
| Բացարձակ իրացվելիության գործակից | 17% | 0% | 1% |
| Ընթացիկ իրացվելիության գործակից | 153% | 38% | 39% |
| Ընդհանուր իրացվելիության գործակից | 334% | 93% | 95% |
| Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից | 209% | 311% | 251% |
| Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով | 175 | 118 | 145 |
| Պաշարների շրջանառելիության գործակից | 159% | 211% | 171% |
| Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով | 230 | 173 | 214 |
| Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից | 515% | 460% | 386% |
| Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով | 71 | 79 | 95 |

## ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

**ԱՄՓՈՓԱԳԻՐԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ: ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ: ԱՄՓՈՓԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆ ԱՄՓՈՓԱԳՐՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԱԶԴԱԳՐԻ ՄՅՈՒՍ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:**

# ԲԱԺԻՆ 2. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2.1. Ռիսկային գործոններ

**Սույն Ազդագրով առաջարկվող պարտատոմսերում ներդրումը կապված է որոշակի ռիսկերի հետ: Պոտենցիալ ներդրողը, մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը, պետք է շրջահայաց լինի և հաշվի առնի ստորև բերված ռիսկերը և սույն Ազդագրում ներառված այլ տեղեկատվությունը, ինչպես նաև իր փորձը, նպատակները, ֆինանսական ռեսուրսները, ռիսկի ախորժակը և եկամուտի սպասումները: Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կամ դրանցից մի քանիսը կարող են բացասաբար անդրադառնալ շուկայում տիրող իրավիճակի վրա և բերել պարտատոմսերի գնի կամ իրացվելիության անկման: Նշվածի արդյունքում ներդրողը կարող է կորցնել ներդրված գումարը կամ դրա մի մասը:**

Ռիսկի ստանձնումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է ու հետևանքը և ներդրողը պետք է հաշվի առնի, որ պարտատոմսերում ներդրումները ենթակա են որոշակի ռիսկերի, որոնք կապված են ոչ միայն Թողարկողի ֆինանսատնտեսական վիճակից և գործունեության արդյունքից (Թողարկողի ռիսկ), այլ նաև շուկայում տիրող իրավիճակից (շուկայական ռիսկ): Պոտենցիալ ներդրողը պետք է գիտակցի, որ ստորև բերված ռիսկերը ոչ բոլոր ռիսկերն են, որ երբևէ կարող են ի հայտ գալ: Թողարկողը բացահայտել է միայն այն ռիսկերը, որոնք Ազդագրի կազմման ընթացքում հայտնի են եղել իրեն և նա համարել է էական: Ենթադրաբար, կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք թողարկողն այժմ չի համարում էական կամ որոնք ներկայումս հայտնի չեն, և ցանկացած այդպիսի ռիսկ կարող է թողնել վերևում նշված ազդեցությունն ու հետևանքը:

Ներդրողը ներդրում կատարելու մասին որոշում ընդունելու համար պետք է մանրամասն ուսումնասիրի սույն փաստաթղթում ներկայացված ռիսկերն ու այլ տեղեկատվությունը: Ներդրողները նաև պետք է խորհրդակցեն իրենց իրավաբանների հետ՝ պարզելու համար, թե արդյո՞ք պարտատոմսերում ներդրումը հանդիսանում է իրավաբանորեն թույլատրելի ներդրում, և ինչպես ու ինչ ձևով պարտատոմսերը կարող են օգտագործվել որպես գրավի առարկա զանազան փոխառությունների համար:

**<u>Շուկայական ռիսկ:</u>** Շուկայական ռիսկը շուկայական փոփոխականների (տոկոսադրույքներ, արտարժութային փոխարժեքներ կամ տոկոսադրույքներ) տատանման հետևանքով ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ իրական արժեքի տատանման և դրա հետևանքով վնաս կրելու հավանականությունն է: Անկախ շուկայական ռիսկի ի հայտ գալու հավանականությունից, թողարկողի կողմից վճարվող արժեկտրոնների և պարտատոմսի մարման գումարային մեծությունները չեն փոխվում:
**<u>Տոկոսադրույքի ռիսկ:</u>** Հայաստանի ֆինանսական շուկայում առկա տոկոսադրույքների տատանումը կարող է բացասաբար ազդել պարտատոմսերի եկամտաբերության և իրացվելիության ցուցանիշների վրա: Շուկայում տոկոսադրույքների բարձրացումը կարող է բերել նաև Թողարկողի պարտատոմսերի եկամտաբերության վերանայման (բարձրացման), ինչն իր հերթին կբերի գնի անկման և հակառակը:

**Դեֆոլտի ռիսկ:** Ներդրողն իր վրա է վերցնում ապագայում թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, պարտատոմսերի մայր գումարի կամ արժեկտրոնների վճարման անհնարինության, հավանական սնանկացման ռիսկը:
**Գնաճի կամ գնողունակության ռիսկ:** Գնաճի առկայության պայմաններում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրենց կողմից ստացվելիք իրական եկամտաբերությունը կարող է ավելի ցածր լինել (գնաճի չափով), քան Թողարկողի կողմից առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը:
**Վերաներդրման ռիսկ:** Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ պարտատոմսերից ստացվող արժեկտրոնների կամ մարումից առաջացած գումարը առնվազն պարտատոմսի նույն եկամտաբերությամբ վերաներդնելը կարող է հնարավոր չլինել:
**Իրացվելիության ռիսկ**: Շուկայական իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Թողարկողի ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում կարող է առաջանալ իրացվելիության ռիսկ: Թողարկողը պարտատոմսերի իրացվելիությունն ապահովելու համար նախատեսում է պարտատոմսերը ցուցակել ֆոնդային բորսայում և ունենալ շուկա ստեղծող: Այնուամենայնիվ, Թողարկողը չի կարող երաշխավորել, որ ներդրողը ցանկացած պահի կկարողանա իր համար շահավետ գնով վաճառել կամ ձեռք բերել պարտատոմսերը:
**Աշխարհաքաղաքական ռիսկ:** Աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և ներքաղաքական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում հնարավոր է առաջ գան այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ ընդհանուր մակրոտնտեսական իրավիճակի և թողարկողի ֆինանսական վիճակի վրա:

## 2.2. Հիմնական տեղեկատվություն

Թողարկվող պարտատոմսերից ներգրավված միջոցների մոտ 60%-ը ուղղվելու է գործող վարկերի փոխարինմանը, մոտ 20%-ը կուղղվի ընկերության արտադրողականության ավելացմանը, իսկ մնացած մասը՝ շրջանառու միջոցների համալրմանը:
Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումը նաև մեկ ֆինանսավորողի կամ ֆինանսավորող խմբի ռիսկի նվազման նպատակ է հետապնդում:

## 2.3. Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն

### 2.3.1. Արժեթղթերի տեսակը և դասը

«Եվրոթերմ» ՓԲԸ-ի կողմից թողարկված պարտատոմսերն անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային, միջնաժամկետ պարտատոմսեր են: Թողարկված պարտատոմսերը փոխարկելի չեն:

### 2.3.2. Երկիրը

Պարտատոմսերը թողարկվելու են ՀՀ տարածքում՝ համաձայն ՀՀ օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի: Վեճերի և դատական գործընթացների առկայության դեպքերում դրանք կարգավորվելու են ՀՀ օրենսդրության համաձայն:

### 2.3.3. Արժեթղթերի ձևը

Թողարկվող պարտատոմսերը ոչ փաստաթղթային են, իսկ պարտատոմսերի ռեեստրը վարելու է «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ (ՀՀ, ք.Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 26/1, Էրեբունի Պլազա 5-րդ հարկ, հեռ (+374) 60 615555՝ ըստ «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի համապատասխան կանոնների, ընթացակարգերի: Հաշվի օպերատորն է «Արմբրոկ» ԲԲԸ-ն:

### 2.3.4. Արժեթղթերի անվանական արժեքը և քանակը

Թողարկվող և տեղաբաշխվող պարտատոմսերից յուրաքանչյուրի անվանական արժեքը 10,000 (Տաս հազար) ՀՀ դրամ է: Թողարկվող պարտատոմսերի ընդհանուր անվանական ծավալը կազմում է 500,000,000 (Հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ: Թողարկվող և տեղաբաշխվող պարտատոմսերի քանակը 50,000 (Հիսուն հարյուր հազար) հատ է:

### 2.3.5. Թողարկման արժույթը

Պարտատոմսերի թողարկման արժույթը ՀՀ դրամ է:

### 2.3.6. Պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն

Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի՝ Թողարկողի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝

1. առաջին հերթին բավարարվում են լուծարվող իրավաբանական անձի գույքի գրավով ապահովված պարտավորություններով պարտատերերի պահանջները,
2. երկրորդ հերթին բավարարվում են այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև լուծարվող իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար՝ համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման միջոցով.
3. երրորդ հերթին վճարվում է աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց արձակման նպաստների, աշխատավարձի և հեղինակային պայմանագրերով վարձատրությունը
4. չորրորդ հերթին մարվում է բյուջե, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կատարվող պարտադիր վճարների պարտքը.
5. հինգերորդ հերթին հաշվարկներ են կատարվում մնացած պարտատերերի հետ՝ բացառությամբ ստորադաս փոխառություններով պարտատերերի.
6. վեցերորդ հերթին հաշվարկներ են կատարվում ստորադաս փոխառություններով պարտատերերի հետ:

Միևնույն հերթի պարտատերերն/սեփականատերերն ունեն իրենց պահանջների բավարարման հավասար իրավունքներ:
Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարավում են հինգերորդ հերթին:

Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի միևնույն հերթի պարտատերերի/սեփականատերերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո:

### 2.3.7. Արժեթղթերից բխող հիմնական իրավունքները, պարտականությունները և սահմանափակումները

Պարտատոմսերի ձեռք բերմամբ պարտատոմսերի սեփականատերերը ստանում են հետևյալ **իրավունքները**.

- Ստանալ պարտատոմսով նախատեսված արժեկտրոնները և պարտատոմսի մարման գումարը՝ համաձայն սույն Ազդագրով սահմանված կարգի:
- Պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սույն Ազդագրով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում օգտվել օրենքով իրեն վերապահված պարտատիրոջ իրավունքներից:
- Իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը ֆոնդային բորսայում (ցուցակված և առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ օրենքով սահմանված կարգով. Ընդ որում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրի թույլատրված կորպորատիվ արժեթղթեր: Բացառություն են կազմում.
  - ՀՀ ԿԲ կողմից կնքվող գործարքները: Դրանք ՀՀ ԿԲ և Ֆինանսական շուկայի մասնագիտացված ընկերությունների միջև հնարավոր գործարքներն են,
  - Թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքները:
- Օրենքով սահմանված կարգով գրավադրել պարտատոմսերը:
- Օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

Պարտատոմսերի ձեռք բերմամբ սեփականատերերը **պարտավորվում են** պարտատոմսերի թողարկման պայմաններում սահմանված ժամկետներում իրականացնել պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարների փոխանցում համապատասխան բանկային հաշվին, կատարել պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն:

### 2.3.8. Արժեկտրոնի տոկոսադրույքը և դրա վճարման պայմանները

Պարտատոմսերի համար վճարվելու է 12.5% տարեկան անվանական տոկոսադրույք: Արժեկտրոնները հաշվարկվում են պարտատոմսերի տեղաբաշխման առաջին օրվանից և վճարվում են կիսամյակային պարբերականությամբ:

| | |
|---|---|
| Արժեկտրոնի վճարման հստակ օրերը՝ | 28 մայիս 2024թ.<br>28 նոյեմբեր 2024թ.<br>28 մայիս 2025թ.<br>28 նոյեմբեր 2025թ.<br>28 մայիս 2026թ.<br>28 նոյեմբեր 2026թ. |

Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն պարտատոմսերի արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրը պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի փակման դրությամբ պարտատոմսերի

սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք (սեփականատերերը կամ անվանատերերը):

Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը փակվելու է պարտատոմսերի հերթական արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա ժամը 18:00-ին, այսինքն՝ նշված ժամից հետո ռեեստրում գրանցված սեփականատերերը/անվանատերերը չեն կարող օգտվել նախորդող արժեկտրոնային ժամանակաշրջանի համար վճարվող արժեկտրոնի ստացման իրավունքից:

Թողարկողը պարտավոր է մինչև արժեկտրոնների հաշվարկման օրը Հաշվարկային բանկում՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում, բացված հաշվի վրա ապահովել և կուտակել հերթական արժեկտրոնի վճարման համար անհրաժեշտ դրամական միջոցները:

Արժեկտրոնների վճարման օրը թողարկողը Հաշվարկային բանկ է ներկայացնում պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրից տեղեկանք՝ պարտատոմսերի արժեկտրոնների գումարներ ստանալու իրավունք ունեցող անձանց (սեփականատերերի կամ անվանատերերի) վերաբերյալ՝ ներառյալ արժեկտրոնների փոխանցման համար անհրաժեշտ տվյալները: Թողարկողը կարող է նաև լիազորել կամ հանձնարարել Հաշվարկային բանկին՝ իր անունից Ռեեստրավարին կատարել հարցումներ և ստանալ համապատասխան տեղեկատվությունը:

Ռեեստրից տեղեկանքը պետք է արտացոլի արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա ժամը 18:00-ի դրությամբ տվյալները:

Արժեկտրոնային վճարումների համար նախատեսվող գումարներն անվանատերերին և/կամ սեփականատերերին վճարվում են մինչև 10 ՀՀ դրամ ճշտությամբ (ընդ որում կլորացումը իրականացվում է թվաբանական կլորացման կանոններին համաձայն՝ մինչև ամենամոտ ամբողջ տասնավոր թիվը): Թվաբանական կլորացման կանոնի ներքո հարկ է հասկանալ կլորացման այն մեթոդը, որի դեպքում միավորի ամբողջ թիվը չի փոխվում, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 0-ից 4-ի, և փոխվում է՝ մեծանալով մեկ միավորով, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 5-ից 9-ի:

Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում, Հաշվարկային բանկը գումարը կփոխանցի/կսառեցնի իր մոտ այդ նպատակով բացված հաշվեհամարին, այնուհետև կգործադրի բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողի հայտնաբերման ու գումարի փոխանցման համար:
Արժեկտրոնի գումարը Հաշվարկային բանկը վճարում է պարտատոմսերի սեփականատերերին արժեկտրոնի հաշվարկման (մարման) օրը: Եթե արժեկտրոնի հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:
Ոչ ռեզիդենտ անձանց համար վճարումների առանձնահատկություններ սահմանված չեն:
Պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը հաշվարկում է կիսամյակային պարբերականությամբ՝ տեղաբաշխման սկզբի օրվան հաջորդող յուրաքանչյուր n-րդ պարբերական ամսվա համապատասխան օրը:
Պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնի կուտակումն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$AI = FV \times \frac{C}{k} \times \frac{DCS}{DCC}$$

, որտեղ.

AI – կուտակված արժեկտրոնային եկամուտն է,
FV - մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,
C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,
k – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը,
Օրերի հաշվարկման պայմանականությունը Թողարկողի պարտատոմսերի համար համարվում է Actual/Actual, ընդ որում
DCS - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D2M2Y2-D1M1Y1],
DCC – արժեկտրոնային փուլի օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D3M3Y3-D1M1Y1],
D1M1Y1 – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/ արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է,
D2M2Y2 – գործարքի կատարման ամսաթիվն է,
D3M3Y3 – գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/ անվանական արժեքի մարման ամսաթիվն է:
Վճարվող արժեկտրոնների հաշվարկում օրերի հաշվարկման կարգը Actual/Actual է:

### 2.3.9. Արժեթղթերի մարման ժամկետը

Թողարկվող պարտատոմսերի մարման օրն է 28 նոյեմբեր 2026 թ. :

Պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը փակվում է պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրը՝ ժամը 18:00-ին, այսինքն՝ պարտատոմսերի մարման գումարն իրավունք ունեն ստանալ ռեեստրի փակման պահի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում գրանցված անձինք:

Պարտատոմսերի մարման գումարները պարտատոմսերի սեփականատերերին/անվանատերերին վճարվում են պարտատոմսերի մարման օրը, այսինքն՝ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի փակման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ընթացքում: Եթե մարման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Թողարկողը պարտավոր է մինչև պարտատոմսերի մարման օրը Հաշվարկային բանկում բացված հաշվի վրա ապահովել և կուտակել պարտատոմսերի մարման համար անհրաժեշտ դրամական միջոցները:

Պարտատոմսերի մարման օրը թողարկողը Հաշվարկային բանկ է ներկայացնում պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրից տեղեկանք՝ պարտատոմսերի մարման գումարներ ստանալու իրավունք ունեցող անձանց (սեփականատերերի կամ անվանատերերի) վերաբերյալ՝ ներառյալ մարման գումարի փոխանցման համար անհրաժեշտ տվյալները: Թողարկողը կարող է նաև լիազորել կամ հանձնարարել Հաշվարկային բանկին՝ իր անունից Ռեեստրավարից կատարել հարցումներ և ստանալ համապատասխան տեղեկատվությունը:

Ռեեստրից տեղեկանքը պետք է արտացոլի արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա ժամը 18:00-ի դրությամբ տվյալները:

Միաժամանակ Թողարկողը (կամ Հաշվարկային բանկը, եթե ունի համապատասխան իրավասությունը) հանձնարարական է տալիս Ռեեստրավարին՝ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից տրված քաղվածքում նշված քանակության պարտատոմսերը մարելու համար:

Հաշվարկային բանկը պարտատոմսերի մարման գումարները վճարում է անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով: Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում, Հաշվարկային բանկը գումարը կփոխանցի/կսառեցնի իր մոտ այդ նպատակով բացված հաշվեհամարին, այնուհետև կգործադրի բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողի հայտնաբերման ու գումարի փոխանցման համար:
Պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ նախատեսված չեն, քանի որ վերջիններս առանց ապահովման են:

## 2.3.10. Արժեթղթի տարեկան եկամտաբերությունը

Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը հաշվարկվում է համաձայն Ազդագրի 2.4 կետի 2.4.3 ենթակետում բերված բանաձևի: Տարեկան եկամտաբերությունը բանաձևում նշված է y տառով: Տեղաբաշխման ընթացքում տարեկան եկամտաբերության տոկոսադրույքը հավասար է լինելու հայտարարված արժեկտրոնի եկամտաբերությանը: Առաջնային տեղաբաշխման ավարտից հետո տարեկան եկամտաբերությունը որոշվելու է երկրորդային շուկայում՝ համաձայն տվյալ պահին շուկայում ձևավորված տոկոսադրույքների:

## 2.3.11. Նոր թողարկման մասին տեղեկատվություն

Պարտատոմսերի թողարկման մասին որոշումն ընդունվել է Թողարկողի 30/10/2023 թ. Ընդհանուր ժողովի որոշմամբ (Արձանագրություն թիվ 4): Որոշմամբ ամրագրվել է պարտատոմսերի թողարկման ծավալը, պարտատոմսերի անվանական արժեքը, մեկ ներդրողի կողմից տեղաբաշխման ընթացքում արժեթղթի ձեռքբերման նվազագույն քանակը, արժեկտրոնային եկամտաբերությունը, վճարման պարբերականությունը, պարտատոմսերի մարման ձևը, ժամկետը և պայմանները:

## 2.3.12. Արժեթղթերի ազատ շրջանառության հետ կապված սահմանափակումների նկարագրությունը

Պարտատոմսերի ազատ շրջանառության հետ կապված պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանափակումներ չեն սահմանվում, բացի տեղաբաշխման ընթացքում մեկ ներդրողի կողմից ձեռք բերվող պարտատոմսերի նվազագույն ծավալի սահմանափակումից: Թողարկողի իրավասու մարմնի որոշմամբ տեղաբաշխման

ընթացքում մեկ ներդրողի կողմից ձեռք բերվող պարտատոմսերի նվազագույն քանակը սահմանվել է 10 հատ արժեթուղթ:

Եթե հետագայում սահմանվեն պարտատոռսմերի ազատ շրջանառության հետ կապված սահմանափակումներ, դրանց վերաբերյալ տեղեկատվությունը կներառվի Ազդագրում:

Պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն ստանալուց հետո, կարգավորվող շուկայից դուրս գործարքներ արգելվում են, բացառությամբ ՀՀ ԿԲ խորհրդի 27.11.2012թ. թիվ 331Ն որոշմամբ սահմանված դեպքերի:

## 2.3.13. Պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգի նկարագիրը

Պարտատոմսերում ներդրում կատարող անձը կարող է եկամուտ ստանալ հետևյալ դեպքերում՝

- պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսից,
- մինչև մարումը վաճառքի և գնման գների դրական տարբերությունից (կապիտալի հավելաճ):

Պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց համար) և եկամտային հարկով (ֆիզիկական անձանց համար):

**Պարտատոմսերից ստացվող եկամտի շահութահարկով հարկման կարգը**

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում ռեզիդենտև ոչ ռեզիդենտ կազմակերպությունները՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս պետական մարմինների, Հայաստանի Հանրապետության համայնքների՝ ի դեմս համայնքային կառավարչական հիմնարկների, ՀՀ Կենտրոնական բանկի և ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների ու դրանց հավասարեցված միջազգային կազմակերպությունների:

Ռեզիդենտ կազմակերպությունների համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ աղբյուրներից և(կամ) ՀՀ-ից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը:
Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը:
Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է:

Ռեզիդենտ շահութահարկ վճարողի և մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի շահութահարկի գումարը սույն Ազդագրի հրապարակման պահին հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 18 տոկոս դրույքաչափով:

Առանց մշտական հաստատության ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսների մասով

շահութահարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով, իսկ պարտատոմսերի կապիտալի հավելաճից ստացված եկամուտները ենթակա չեն հարկման:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար որպես հարկային գործակալ հանդես է գալու «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն:
Ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները ազատվում են շահութահարկի վճարումից `

1) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժինների, ինչպես նաև նշյալ բաժնետոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտների մասով.

2) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում ցուցակված պարտատոմսերից տոկոսի կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտների, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտների մասով:

**Պարտատոմսերից ստացվող եկամտի եկամտային հարկով հարկման կարգը**

ՀՀ-ում եկամտային հարկ են վճարում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ընդ որում՝ ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և ՀՀ հարկային օրենսգրքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է:
Ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող եկամուտը:
Ոչ ռեզիդենտների համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող ստացվող հարկվող եկամուտը:
Ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով:
Ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների պարտատոմսերի կապիտալի հավելաճից ստացված եկամուտները **ենթակա չեն հարկման**:
Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց, որպես հարկային գործակալ հանդես է գալու «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն:

Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից, պարտատոմսերից կամ ներդրումը վկայող այլ արժեթղթերից ստացվող եկամուտը, բացառությամբ բանկերի թողարկած այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց: Նման արժեթղթեր ձեռք բերելու դեպքում ֆիզիկական անձանց պարտատոմսերից ստացված տոկոսային եկամուտները ենթակա չեն հարկման:

Վերը նկարագրված կետերը վերաբերվում են ՀՀ ֆոնդային բորսայի՝ բաժնետոմսերի և պարտատոմսերի հիմնական ու երկրորդային ցուցակներում ընդգրկված արժեթղթերին և տարածվում են այն արժեթղթերի (դրանց դասերի) վրա, որոնք ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել (առևտրին թույլատրվել) են ոչ ուշ, քան 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թողարկողը նախաձեռնելու է սույն Ազդագրով նախատեսված թողարկվող պարտատոմսերի ցուցակման գործընթաց, Բորսայի կողմից դրական եզրակացության դեպքում՝ Թողարկվող պարտատոմսերից ստացված տոկոսային եկամուտները **չեն հարկվելու**:

**Ծանուցում:** *Չնայած այն հանգամանքին, որ թողարկողը գործադրելով լավագույն ջանքեր և կիրառելով առկա գիտելիքները, սույն բաժնում ներկայացրել է արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման մոտեցումները ՀՀ-ում, այնուամենայնիվ Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ ներդրողներն այն չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և ներդրումներ անելիս հիմնվեն միայն այս բաժնում ներկայացված նյութի վրա: Թողարկողը չի երաշխավորում, որ ներդրողի կողմից Ազդագրի ստացման և ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կիրառություն կունենա ՀՀ հարկային մարմինների կողմից և ցանկացած պարագայում խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվական ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում ցանկացած ներդրողի հնարավոր պահանջներից կապված հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների կիրառման և/կամ փոփոխության արդյունքում առաջացած ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:*

## 2.4. Առաջարկի ժամկետները և պայմանները

### 2.4.1. Առաջարկի պայմաններ, առաջարկի վիճակագրություն

**Առաջարկի ընդհանուր ծավալը:** Թողարկվող պարտատոմսերի ընդհանուր անվանական ծավալը կազմում է 500,000,000 ՀՀ դրամ: Թողարկվող և տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր քանակը 50,000 հատ է:

**Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը:** Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման սկիզբը՝ 28 նոյեմբեր 2023 թ., պարտատոմսերի տեղաբաշխման ավարտի ամսաթիվը՝ 28 փետրվար 2024 թ. :

Թողարկողը որոշված ժամկետների փոփոխություն չի նախատեսում:

Պարտատոմսերի առաջարկի և տեղաբաշխման հետաձգման կամ չեղյալ ճանաչման հանգամանքներ կարող են հանդիսանալ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 21 հոդվածով սահմանված հիմքերի առկայությունը:

Մասնավորապես՝ եթե Թողարկողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է Ազդագրի լրացում, որը կապված է Ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ, ապա նա ներդրողի պահանջով պարտավորվում է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և հետ վերադարձնել հայտ-հանձնարարականի հիման վրա նրանից ստացված միջոցները և ձեռքբերման պահից մինչև տեղաբաշխման կասեցումն ընկած օրերի համար կուտակված տոկոսագումարը՝ համաձայն արժեկտրոնի հաշվարկման բանաձևի : Հետգնման պահանջը կարող է ներկայացվել Ազդագրի լրացման հրապարակումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում՝ հետգնման պահանջը պետք է տեղաբաշխողին ներկայացվի գրավոր:

Տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել ՀՀ ԿԲ որոշմամբ այն դեպքերում, եթե՝

- տեղաբաշխման ընթացքում խախտվել են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի և հրապարակային առաջարկը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջները.
- տեղաբաշխման ընթացքում չեն պահպանվել Ազդագրում սահմանված հրապարակային առաջարկի պայմանները.
- Ազդագիրը պարունակում է էական սխալներ և ապակողմնորոշիչ տեղեկություններ կամ նրանում էական փաստ է բաց թողնված կամ խեղաթյուրված:

Այս դեպքում տեղաբաշխումը կարող է շարունակվել ՀՀ ԿԲ-ի թույլտվությամբ՝ հայտնաբերված խախտումներն ու բացթողումները վերացնելու դեպքում:

Կասեցման ժամկետի ավարտի պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղաբաշխումը չշարունակվելու դեպքում, տեղաբաշխողը պարտավոր է դադարեցնել տեղաբաշխումը եւ ներդրողներին վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները՝ կասեցման ժամկետի ավարտից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Տեղաբաշխումը չեղյալ ճանաչվելու դեպքում ներդրողների գումարները վերադարձվում են տեղաբաշխման չեղյալ ճանաչելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով՝ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականներում ներդրողների կողմից նշված բանկային հաշիվների վրա փոխանցելու միջոցով: Բանկային հաշվեհամարի բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում, Տեղաբաշխողը կգործադրի բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողի հայտնաբերման ու գումարի վերադարձման համար:
Թողարկողը և տեղաբաշխողը պարտավորվում են տեղաբաշխումը կասեցնելու և շարունակելու, տեղաբաշխումը դադարեցնելու և դրա ընթացքում ստացված միջոցները վերադարձնելու մասին տեղեկատվությունը հրապարակել իրենց ինտերնետային կայքերում:

**Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացը:** Պարտատոմսերում ներդրում կատարելու ցանկություն հայտնող անձինք (ֆիզիկական կամ իրավաբանական) սահմանված կարգով պետք է լրացնեն համապատասխան պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը (ֆիզիկական անձինք համաձայն Հավելված 2-ի, իրավաբանական անձինք համաձայն Հավելված 1-ի), պատշաճ կերպով ներկայացնեն Տեղաբաշխողին և կատարեն համապատասխան վճարում, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմանների ընդունելը:

Վճարումը կատարվում է պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի պատշաճ կերպով Տեղաբաշխողին ներկայացման օրը, ոչ ուշ, քան մինչև ժամը 16:30-ը, հատուկ թողարկման նպատակով Բանկում բացված թիվ 19300378033800 տարանցիկ հաշվին կանխիկ մուտքագրման կամ փոխանցման միջոցով: Պարտատոմսերի դիմաց վճարվող գումարը հաշվարկվում է Ազդագրի 2.4 կետի 2.4.3 ենթակետում ներկայացված բանաձևով հաշվարկված մեկ պարտատոմսի գինը բազմապատկելով ձեռք բերվող պարտատոմսերի քանակով: Ձեռք բերվող պարտատոմսերի դիմաց վճարվելիք ընդհանուր գումարը հաշվարկվում է ստորակետից հետո երկու նիշի ճշտությամբ՝ կլորացումը կատարելով թվաբանական կլորացման կանոնների համաձայն: ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի ձեռք բերման ընդհանուր գումարը հաշվարկվում է 10 լումայի ճշտությամբ (ընդ որում կլորացումը իրականացվում

է թվաբանական կլորացման կանոններին համաձայն՝ մինչև ամենամոտ ամբողջ տասնավոր թիվը):

Եթե հայտ-հանձնարարականը ներկայացվել և համապատասխան գումարի վճարումը կատարվել է մինչ տվյալ օրվա 16:30-ն ներառյալ, ապա պարտատոմսի գինը հաշվարկվում է տվյալ օրով: Ժամը 16:30-ից հետո ներկայացված և/կամ վճարված հայտի համար վճարվող գումարի չափը հաշվարկվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա պարտատոմսի գնով:

Տեղաբաշխման ողջ ընթացքի համար պարտատոմսերի յուրաքանչյուր օրվա գինը Տեղաբաշխողը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում՝ www.conversebank.am:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը համարվում է պատշաճ կերպով ներկայացված, եթե ներկայացվել է ստորև նշված տարբերակներից մեկով՝

- այն առաքվել է Տեղաբաշխողին ներքոնշյալ էլեկտրոնային կապի միջոցների միջոցով և ստացվել է հասցեատիրոջ կողմից առաքման ստացման հաստատում.

**Էլեկտրոնային փոստ**. investment@conversebank.am,
corpinvest@conversebank.am:

- ներկայացվել է Տեղաբաշխողին առձեռն՝ Տեղաբաշխողի Գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղերում, որոնց ցանկը ներկայացված է Հավելված 5-ում: Այս դեպքում Տեղաբաշխողի աշխատակիցը պատճենում է հայտը, վրան կատարում «Ընդունված է բանկի կողմից» նշում, ընդունման օր/ամիս/տարեթիվ/ժամ, ընդունող աշխատակցի ստորագրություն և տրամադրում հաճախորդին:
- ներկայացվել է Տեղաբաշխողի մոբայլ հավելվածի՝ Converse Mobile-ի միջոցով՝ հետևելով հավելվածի համապատասխան հրահանգներին:

Պարտատոմսերի ձեռքբերմանը մասնակցել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի հայտ-հանձնարարականներ:

Պարտատոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո թողարկման նպատակով բացված թիվ 19300378033800 տարանցիկ հաշվին ստացված գումարները ենթակա են հետ վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտ-հանձնարարականները չեն կարող բավարարվել անկախ դրանց առաքման և/կամ Տեղաբաշխողի կողմից ստացման ժամկետից:

**Առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորություն** չի նախատեսվում:

Տեղաբաշխման կարգով պայմանավորված հնարավոր է պարտատոմսերի ձեռքբերման որևէ հայտ-հանձնարարականի մասնակի բավարարում, եթե հայտում նշված ծավալը գերազանցում է հայտ-հանձնարարականի ներկայացման պահին չտեղաբաշխված ծավալը: Այս դեպքում հայտ-հանձնարարականը բավարարվում է չտեղաբաշխված ծավալի չափով:

Հայտ-հանձնարարականի մասնակի բավարարման դեպքում, ներդրողին հետ վերադարձման ենթակա գումարը տեղաբաշխման ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Տեղաբաշխողն անկանխիկ եղանակով փոխանցում է ներդրողի համապատասխան բանկային հաշվին: Բանկային հաշվեհամարի բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում, Տեղաբաշխողը կգործադրի բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողի հայտնաբերման ու գումարի վերադարձման համար:
**Հայտի հետ կանչելը:** Գնորդի կողմից ններկայացված հայտ-հանձնարարականը պատշաճ կերպով առաքելուց, Տեղաբաշխողի կողմից հայտ-հանձնարարականի ստացման հաստատումը/ծանուցումը ստանալուց հետո հայտը ենթակա չէ հետ կանչման:

Չբավարարված, հետ կանչված հայտերի (որոնց դիմաց վճարումը կատարվել է մինչև «Ընդունված է բանկի կողմից» հաստատումը ստանալը) համապատասխան գումարները Տեղաբաշխողը վերադարձնում է գնորդներին 3 աշխատանքային օր հետո՝ գնորդների համապատասխան հաշիվներին փոխանցելու միջոցով: Բանկային հաշվեհամարի բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում, Տեղաբաշխողը կգործադրի բոլոր ողջամիտ ջանքերը ներդրողի հայտնաբերման ու գումարի վերադարձման համար:
Հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը:

Բացի վերոնշյալ դեպքերից, ներդրողները հայտ-հանձնարարականները պատշաճ կերպով առաքելուց, Տեղաբաշխողի կողմից հայտ-հանձնարարականի ստացման հաստատումը/ծանուցումը ստանալուց և համապատասխան վճարումը կատարելուց հետո չեն կարող դրանք հետ կանչել:

**Հայտի առավելագույն և նվազագույն գումարը:** Հայտ-հանձնարարականներում ձեռք բերվող պարտատոմսերի առավելագույն ծավալը սահմանափակված է տեղաբաշխման ծավալով, իսկ նվազագույն ծավալը 10 հատ պարտատոմսին համարժեք ՀՀ դրամ է :

**Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելը:** Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձիք վճարումը կատարում են թողարկման նպատակով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում բացված), 19300378033800 տարանցիկ հաշվեհամարին: Նշված հաշվեհամարին դրամական միջոցների ստացումից և հայտ-հանձնարարականի բավարարման կամ մասնակի բավարարման մասին որոշում ընդունելուց անմիջապես հետո Տեղաբաշխողը Ռեեստրավարին ներկայացնում է պարտատոմսերի տեղաբաշխման հանձնարարագիր՝ Թողարկողի թողարկման հաշվից համապատասխան քանակի պարտատոմսերի փոխանցման և ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ արժեթղթերի հաշվին հաշվեգրման համար:

Թողարկողից իրենց հայտ-հանձնարարականների բավարարման կամ մասնակի բավարարման մասին տեղեկացվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից:

Ռեեստրավարից ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ դեպի հաշվին պարտատոմսերի փոխանցման վերաբերյալ համապատասխան հաստատում ստանալուց անմիջապես հետո Տեղաբաշխողը թողարկման նպատակով բացված) 19300378033800 տարանցիկ հաշվեհամարից Թողարկողի օգտագործման համար

մատչելի է դարձնում համապատասխան հայտ-հանձնարարականում նշված դրամական միջոցները:

**Տեղաբաշխման արդյունքների հրապարակումը**: Տեղաբաշխման արդյունքները Տեղաբաշխողը հրապարակելու է Օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում: Տեղաբաշխման ավարտից հետո Տեղաբաշխողն իր ինտերնետային կայքում՝ www.convresebank.am հրապարակելու է տեղաբաշխման արդյունքները:

**Նախապատվության իրավունքը:** Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է ըստ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականների և դրանց դիմաց կատարված վճարման ստացման հերթականության: Առաջնահերթության կարգով բավարարվելու են այն հայտերը, որոնց դիմաց վճարումը Թողարկման նպատակով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում բացված 19300378033800 տարանցիկ հաշվեհամարին ավելի վաղ է ստացվել:

Թողարկվող պարտատոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեցող անձիք չկան:

### 2.4.2. Տեղաբաշխման պլան

Առաջարկն ուղղված է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանց, ներառյալ որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողների, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերին: Պարտատոմսերի առաջարկն իրականացվելու է ազատ վաճառքի սկզբունքով՝ Տեղաբաշխողի Գլխամասային գրասենյակի, Հավելված 5-ով սահմանված մասնաճյուղերի և Converse Mobile հավելվածի միջոցով:

**Հայտերի բավարարման մասին տեղեկացումը.** Հայտ-հանձնարարականների բավարարման, մասնակի բավարարման կամ մերժման մասին Տեղաբաշխողը տեղեկացնում է Ներդրողներին մինչև հայտի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականների բավարարման մասին ներդրողին տեղեկացումը տրամադրվում է այն կապի միջոցով, որով ներդրողը Տեղաբաշխողին ներկայացրել պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական/ները: Տեղաբաշխողի որևէ մասնաճյուղ ներկայացված թղթային հայտ-հանձնարարականի բավարարման, մասնակի բավարարման կամ մերժման մասին տեղեկանալու համար Ներդրողը պարտավոր է ներկայանալ բանկի տվյալ մասնաճյուղ:

### 2.4.3. Առաջարկի գին

Պարտատոմսի տեղաբաշխման գինը որոշվելու է համաձայն հետևյալ բանաձևի.

$$DP = \frac{C}{f}\sum_{t=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{t-1+\tau}} + \frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$

Որտեղ,

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

DP - պարտատոմսի գինն է (կլորացվում է ստորակետից հետո 4 նիշի ճշտությամբ թվաբանական կլորացման կանոնների համաձայն),
DSN – գործարքի կատարման օրից մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,
DCC- գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,
f – արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,
N – հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,
C – տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց,
y – մինչև մարում եկամտաբերություն:

Տեղաբաշխման ողջ ընթացքի համար պարտատոմսերի յուրաքանչյուր օրվա գինը Տեղաբաշխողը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում՝ www.conversebank.am:

### 2.4.4. Տեղաբաշխումը

**Տեղաբաշխումը.** Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողներ առկա չեն: Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիր չի կնքվել:

**Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնողները.** «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն տեղաբաշխելու է «Եվրոթերմ» ՓԲԸ-ի կողմից թողարկվող անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային 500,000,000 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով պարտատոմսերը:

**Տեղաբաշխման պայմանները.** Համաձայն «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի հետ Թողարկողի կնքած 22.09.2023թ. թիվ 1.6-1512 պայմանագրի՝ Թողարկողը պարտավոր է Տեղաբաշխողին վճարել 3,750,000 (երեք միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման և կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության գործընթացի կազմակերպման համար:

**Վճարում ընդունող բանկերը և պահառուները.** Պարտատոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել թողարկման նպատակով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում (ՀՀ, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1, հեռ. (+374 10) 511-211, ն/հ 2449 կամ 2454) բացված 19300378033800 տարանցիկ հաշվեհամարին: Եթե ներդրողը պարտատոմսերի ձեռք բերումը իրականացնելու է իր բրոքերային ընկերության միջոցով, ապա հարկավոր է վճարման գործընթացի մանրամասները հստակեցնել ներդրողի բրոքերային ընկերության հետ:

## 2.5. Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

### 2.5.1. Առևտրին թույլտվությունը

Սույն Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցելուց և պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո, դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ին տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրին թույլատրելու համար: Առևտրին թույլտվության հայտը կարող է չբավարարվել: Այս դեպքում թողարկումը համարվում է

չեղյալ հայտը չբավարարվելու մասին որոշումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում և համապատասխան գումարները վերադարձվում են ներդրողներին 2.4.1 կետի «Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը» մասով սահմանված կարգով:

### 2.5.2. Շուկաները

Այս պահին Թողարկողի կողմից թողարկված այլ պարտատոմսեր առկա չեն:

### 2.5.3. Շուկա ստեղծողները

Թողարկողը մասնագիտացված անձանց հետ դեռ չի կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի) ծառայություններից օգտվելու վերաբերյալ պայմանագիր:

Տեղաբաշխված պարտատոմսերը «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրին թույլատրելու դեպքում, Թողարկողը մասնագիտացված անձի/անձանց հետ կնքելու է երկրորդային շուկա ստեղծողի պայմանագիր:

Թողարկողը պարտավորվում է մասնագիտացված անձանց հետ երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագրի կնքումից հետո ողջամիտ ժամկետներում տեղեկացնել իր պարտատոմսերի սեփականատերերին և անվանատերերին նման պայմանագրի ուժի մեջ մտնելու վերաբերյալ:

### 2.5.4. Պարտատոմսերի հաշվառմամբ զբաղվող կազմակերպություններ

Պարտատոմսերի սեփականատերերը կարող են այդ պարտատոմսերի իրավունքներն ու պարտավորությունները հաշվառել օրենքով սահմանված կարգով լիցենզավորված Հաշվի օպերատորների մոտ՝ համապատասխան արժեթղթերի հաշիվ բացելու միջոցով: Պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է ՀՀ օրենսդրությամբ և պահառուի ներքին կանոնակարգերով սահմանված կարգով:

Թողարկողի պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրը վարելու է «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ն (ՀՀ, ք.Երևան, 0010, Վազգեն Սարգսյան 26/1, Էրեբունի Պլազա 5-րդ հարկ, հեռ (+374) 60 615555՝ ըստ «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի համապատասխան կանոնների, ընթացակարգերի: Հաշվի օպերատորն է «Արմբրոկ» ԲԲԸ-ն:

## 2.6. Լրացուցիչ տեղեկատվություն

### 2.6.1. Խորհրդատուներ

Սույն Ազդագրի պատրաստման ընթացքում Թողարկողը չի օգտվել երրորդ անձ խորհրդատուների ծառայություններից՝ բացի Տեղաբաշխողի կողմից մատուցվող տեղաբաշխման ծառայությունից:

### 2.6.2. Փորձագետների մասնագիտական կարծիքը և այլ անձանցից ստացված տեղեկությունները

Թողարկողը չի օգտվել երրորդ անձ փորձագետի կամ խորհրդատուի ծառայություններից և չի օգտագործել վերջիններիս մասնագիտական կարծիքը սույն Ազդագրում:

### 2.6.3. Աուդիտորական եզրակացությունը

Բացի սույն Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն Ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճեները ներկայացված են Ազդագրի Հավելված 6-ում:

### 2.6.4. Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների երաշխավորողի վերաբերյալ տեղեկություններ

Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների երաշխավորող չկա, քանի որ տեղաբաշխվող պարտատոմսերն առանց ապահովման են:

### 2.6.5. Թողարկողի վարկանիշը

Թողարկողն իր գործունեության ընթացքում չի դիմել վարկանշող կազմակերպության՝ վարկանիշ ստանալու նպատակով:

# ԲԱԺԻՆ 3. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## 3.1. Անկախ աուդիտորներ

2020-2022 թ.-ի ընթացքում Թողարկողի գործունեության աուդիտն իրականացրել է «ՊՐՈԳՐԵՍ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ-ն: Ընկերության հասցեն ՀՀ, 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյանի փող., 23/3, հեռ՝ (+374 10) 541- 175,կայք՝ www.progress-audit.am/:
Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ՝ համոզվելու համար, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական անճշտություններից:

## 3.2. Ռիսկային գործոններ

**Թողարկողին առնչվող ռիսկեր:** Սույն Ազդագրով առաջարկվող պարտատոմսերում ներդրումը կապված է որոշակի ռիսկերի հետ: Պոտենցիալ ներդրողը, մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը, պետք է շրջահայաց լինի և հաշվի առնի ստորև բերված ռիսկերը և սույն Ազդագրում ներառված այլ տեղեկատվությունը, ինչպես նաև իր փորձը, նպատակները, ֆինանսական ռեսուրսները, ռիսկի ախորժակը և եկամուտի սպասումները: Ներկայացված ռիսկերից յուրաքանչյուրը կամ դրանցից մի քանիսը կարող են բացասաբար անդրադառնալ Թողարկողի վիճակի վրա՝ արդյունքում հանգեցնելով Թողարկողի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը կամ շուկայում  պարտատոմսերի գնի կամ իրացվելիության անկմանը: Նշվածի արդյունքում ներդրողը կարող է կորցնել ներդրված գումարը կամ դրա մի մասը:Պոտենցիալ ներդրողը պետք է գիտակցի, որ ստորև բերված ռիսկերը ոչ բոլոր ռիսկերն են, որ թողարկողը կարող է երբևէ կրել: Թողարկողը բացահայտել է միայն այն ռիսկերը, որոնք նա համարել է էական: Ենթադրաբար, կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք թողարկողն այժմ չի համարում էական կամ որոնք ներկայումս հայտնի չեն, և ցանկացած այդպիսի ռիսկ կարող է թողնել վերևում նշված ազդեցությունն ու հետևանքը:
Թողարկողի գործունեությանը առնչվող հիմնական ռիսկերն են.

**Շուկայական ռիսկ:** Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ շուկայական գների փոփոխությունները, ինչպիսիք են արտարժույթի փոխարժեքները, տոկոսադրույքները, բաժնետոմսերի գները, կազդեն Թողարկողի շահույթ կամ վնասի և ֆինանսական գործիքների արժեքների վրա: Թողարկողը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես արժութային ռիսկի, որը բխում է ինչպես իր գործառնական, այնպես էլ ֆինանսական գործունեությունից: Թողարկողը իր շուկայական ռիսկերը չի հեջավորում:
**Արտարժութային ռիսկ:** Թողարկողը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը: Թողարկողը ենթարկված է արտարժութային ռիսկին արտարժույթային փոխառությունների և արտարժութային դրամական մնացորդների գծով:
**Վարկային (պարտքային) ռիսկ:** Վարկային ռիսկը հաճախորդի կամ այլ գործընկերոջ կողմից իր պարտավորությունները չկատարելու հետևանքով Թողարկողի կողմից ֆինանսական կորուստներ կրելու ռիսկն է: Այս ռիսկի ազդեցությունը Թողարկողի վրա առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը և փոխառությունները: Վարկային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքներով.

| *(հազ.դրամ)* | 2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ. |
|---|---|---|
| *Ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքներ* | | |
| Դեբիտորական պարտքեր | 5,958 | 11,874 |
| Տրամադրված փոխառություններ | 659,668 | 558,225 |
| Բանկային ավանդներ | - | - |
| Բանկային հաշիվների մնացորդներ | 70,037 | 6,205 |
| | 741,579 | 570,388 |

**Իրացվելիության ռիսկ:** Իրացվելիության ռիսկը իրենից ներկայացնում է այն ռիսկը, երբ ընկերությունը չի կարողանա կատարել իր պարտավորությունները:

Ընկերության քաղաքականությունը ներառում է իրացվելիության կառավարման զգուշավոր քաղաքականություն, որը նախատեսում է դրամական միջոցների եւ բանկային հաշիվների մնացորդների, ինչպես նաեւ բարձր իրացվելի ակտիվների բավարար քանակ՝ ժամանակին պարտավորությունների համար բոլոր վճարումները ապահովելու համար:

Իրացվելիության ռիսկը գնահատելիս և կառավարելիս Թողարկողը հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից դրամական միջոցների հոսքերը, մասնավորապես, դրամական միջոցներից և դեբիտորական պարտքերից: Ընկերության դրամական և առևտրային դեբիտորական պարտքերը զգալիորեն գերազանցում են պահանջվող ընթացիկ դրամական միջոցների արտահոսքի պահանջները: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերից պայմանագրային դրամական հոսքերը մարվում են 30 օրվա ընթացքում:

**Տնտեսական ռիսկեր:** ՀՀ և Թողարկողի կողմից ապրանքների արտահանման գործընկեր երկրներում մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է բացասաբար անդրադառնալ Թողարկողի ֆինանսական վիճակի վրա:
**Օրենսդրական ռիսկեր:** Հարկային կամ մաքսային ոլորտը կարգավորող օրենսդրությունում փոփոխությունները կարող են ազդել Թողարկողի ֆինանսական կանխատեսումների վրա:
**Մրցակցային ռիկեր:** Թողարկողի գործունեության ոլորտին բնորոշ է մրցակցության բարձր մակարդակը, հետևաբար շուկայում նոր մրցակիցների մուտքը կարող է նվազեցնել ընկերության շուկայական մասնաբաժինը և փոխել կանխատեսված ընդլայնման ռազմավարությունը:

## 3.3. Տեղեկատվություն Թողարկողի մասին

### 3.3.1. Թողարկողի պատմությունը և զարգացումը:

«Եվրոթերմ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ թողարկող կամ ընկերություն) իր գործունեությունը սկսել է 1998 թվականից և 25 տարի գործունեություն է ծավալում ՀՀ շուկայում և դրա սահմաններից դուրս:

«Եվրոթերմ» փակ բաժնետիրական ընկերությունը գրանցվել է ՀՀ, 0012, ք.Երևան, Ամիրյան 15/2 հասցեում:

Թողարկողի հիմնադիր և հիմնական բաժնետեր է հանդիսանում Էդիկ Սմբատի Ղազարյանը:

Թողարկողի ֆիրմային անվանումը պաշտպանված է ՀՀ նորմատիվ իրավական ակտերով և գրանցված է ՀՀ արտոնագրային վարչությունում:

Թողարկողի ապրանքային նշաններն են՝

**Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է՝**
**հայերեն՝** «Եվրոթերմ» փակ բաժնետիրական ընկերություն
**ռուսերեն՝** “Евротерм” закрытое акционерное общество
**անգլերեն՝** “Eurotem” close joint-stock company
**Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է՝**
**հայերեն՝** «Եվրոթերմ» ՓԲԸ
**ռուսերեն՝** ЗАО “Евротерм”
**անգլերեն՝** “Eurotem” CJSC
**Ընկերության կազմակերպաիրավական ձևը՝** փակ բաժնետիրական ընկերություն (գրանցված 25.06.1998թ.):
**Թողարկողի հիմնադրման երկիրը՝** Հայաստանի Հանրապետություն
**Թողարկողի գտնվելու վայրն է՝** ՀՀ, 0002, ք. Երևան, Ամիրյան 15/2
**Կապի միջոցները՝** հեռ. (+374 60) 686-060
**էլ. Փոստ՝** info@euroterm.am ,
**Ինտերնետային կայք՝** www.euroterm.am :
**Ֆինանսական և այլ խմբերի վերաբերյալ տեղեկություններ՝**Թողարկողը չի հանդիսանում որևէ ֆինանսական և այլ խմբերի ու միությունների անդամ:

### 3.3.2. Ներդրումները

Շուկայում մրցակցության աճին զուգահեռ՝ Թողարկողը մշտապես պահպանում է արտադրանքի որակը և իրականացնում է տարբեր ներդրումներ մրցակցային դիրքը պահպանելու, շուկայում նոր պրոդուկտներ ներկայացնելու, արտադրողականությունն ավելացնելու, ինքնարժեքը նվազեցնելու համար:

2020թ.-ին, ինչպես բոլոր ոլորտներում, ՔՈՎԻԴ 19-ի արդյունքում ստեղծված իրավիճակով պայմանավորված առկա էր վաճառքների կտրուկ անկում:

2021թ.-ից սկսած հիմնական նպատակն էր վերականգնել վաճառքները՝ փորձելով ձգտել նախորդ տարիների վաճառքների թվին և այդ վաճառքների շեմին հասնելուց հետո որոշ բարեփոխումների միջոցով գրանցել նոր արդյունքներ:

Վաճառքների բարելավման համար իրականացվել են և մինչ այժմ իրականցվում են մի քանի հիմնական քայլ՝

- վաճառքի բաժնում նոր թիմակիցների ընդգրկում,
- թիմակիցների հետ թրեյնինգների անցկացում,
- վաճառքի ծավալներին զուգահեռ՝ նոր առաքման մեքենաների ձեռքբերում:

2023թ.-ից սկսած՝ յուրաքանչյուր ամսվա համար սահմանվել է հստակ բյուջե՝ վաճառակետերում վաճառքները խթանելու համար: Ինչպես նաև օգուտոսի դրությամբ որոշում է կայացվել բյուջե տրամադրել հեռուստագովազդի համար, որի արդյունքները նկատելի կլինեն այս տարվա ավարտին:

2022թ-ին տնկվել է մոտ 3000 հատ պիստակի տնկի, պիստակի արդյունաբերական բերքահավաքը կմեկնարկի 6-7 տարի հետո:

2022թ-ին տնկվել է մոտ 1000 հատ ծիրանի տնկի, արդյունաբերական բերքահավաքը կմեկնարկի 5-6 տարի հետո:

2023թ-ին ընկերությունը պետական սուբսիդավորման ծրագրով ֆինանսական վարձակալությամբ ձեռք է բերել 186 կՎտ հզորությամբ ֆոտովոլտային արևային համակարգ, որի տեղադրումը կավարտվի հոկտեմբերի վերջին: Ֆոտովոլտային արևային համակարգի հաշվարկային հետգնման ժամկետը 2.6 տարի է, իսկ լիզինգային վճարները գոյանալու են արտադրված էլեկտրաէներգիայի վաճառքից:

## 3.4. Բիզնեսի նկարագիրը

### 3.4.1. Հիմնական գործունեություն

Ընկերությունը զբաղվում է սննդային ապրանքների վերամշակմամբ և արտադրությամբ, ինչպես նաև ջեռուցման, ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի նախագծման, տեղադրման, սպասարկման և վերանորոգման իրականացման աշխատանքներով:

Սննդային ապրանքներն արտադրվում և վաճառվում են «ՆՈՅԱՆ» և «ՄԵՆՔ» ապրանքանիշով, իսկ ջեռուցման համակարգերը՝ «ԵՎՐՈԹԵՐՄ» ապրանքանիշով:
Ընկերությունն ունի սննդի վերամշակմամբ զբաղվող թվով 2 գործարան՝

1. ՀՀ, ք. Երևան, Ջրվեժ համայնք - մրգի և բանջարեղենի վերամշակման, ինչպես նաև բնական հյութերի և պահածոների արտադրության գործարան;
2. ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Վանանդ - մրգի և բանջարեղենի վերամշակման գործարան:

Ընկերությունը նաև նշանակալի դիրք է զբաղեցնում Հայաստանում ջեռուցման, ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի նախագծման, տեղադրման, սպասարկման և վերանորոգման ոլորտում:

1998թ. հեղուկ սննդամթերք փաթեթավորող սարքավորումների խոշորագույն արտադրողներից մեկի՝ շվեդական աշխարհահռչակ «ՏԵՏՐԱՊԱԿ» ընկերության հետ կնքված պայմանագրի համաձայն ներմուծվել և Երևանում գտնվող գործարանում առաջին անգամ ՀՀ-ում գործարկվել է ասեպտիկ փաթեթավորմամբ բնական հյութերի արտադրության հոսքագիծ: Այստեղ վերամշակման հզորությունն ու արտադրության ծավալները ընդլայնելու նպատակով 2001թ-ին ընկերությունը ներմուծեց ժամում 10 տոննա միրգ վերամշակող հոսքագիծ:

Սեզոնի ընթացքում վերամշակված միրգը՝ առաջնային հումքը, վեր է ածվում տվյալ մրգատեսակից պատրաստված խտահյութի, իսկ խտահյութ է պատրաստվում ամբողջ տարին անխափան արտադրություն ապահովելու համար:
Հյութերի արտադրության տեխնոլոգիական գործընթացը իրականացվում է ներկայիս ամենաժամանակակից մեթոդներով:

### 3.4.2. Հիմնական շուկաները

**Հիմնական շուկաները:** Այսօր Ընկերությունը հանդիսանում է ոչ միայն ՀՀ խոշորագույն արտադրողներից, այլև արտահանող ընկերություններից մեկը: Արտադրանքը հաջողությամբ իրացվում է ՌԴ-ում, ԱՄՆ-ում, Ուկրաինայում, Բելառուսում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Լիտվայում, Հունաստանում, Իտալիայում, Մեծ Բրիտանիայում, Նիդեռլանդներում, Էստոնիայում, Լեհաստանում, Իսրայելում, Վրաստանում, ԱՄԷ-ում, Ավստրալիայում:

2022թ. Ընկերության արտադրանքների իրացման պատկերը, ըստ երկրների, հետևյալն է՝

| | |
|---|---|
| ՀՀ | 41% |
| ՌԴ | 39% |
| ԱՄՆ | 11% |
| Եվրոպա, ԵԱՏՄ և այլ երկրներ | 9% |

Միայն արտահանման մասով 2022թ. Ընկերության հասույթը կազմել է շուրջ 1,023,000,000 ՀՀ դրամ, իսկ արտահանման պատկերն ըստ երկրների հետևյալն է՝

| | |
|---|---|
| ՌԴ | 65% |

| | |
|---|---|
| ԱՄՆ | 19% |
| Եվրոպա, ԵԱՏՄ և այլ երկրներ | 16% |

Պլանավորվում է 2023 թ. խոշոր գնորդների մասով իրացման ծավալը հասցնել մինչև 2,500,000,000 ՀՀ դրամ, որից արտահանմանը՝ մինչև 1,450,000,000 ՀՀ դրամ:

Նպատակաուղղված լինելով ձեռնարկել միջոցառումներ ուղղված ընկերությունում արտադրվող բնական հյութերի, մուրաբաների, պահածոների և խտանյութերի արտադրատեսակների որակի շարունակական կատարելագործմանը, հաճախորդների պահանջների բավարարմանը, անվտանգ սննդի մատակարարմանը, գիտակցելով որակի և սննդի անվտանգության կառավարման կարևորությունը՝ Ընկերությունը ներդրել է որակի կառավարման ISO 9001:2015, 14001:2004, 18001:2007, FSSC 22000:2005 համակարգերը և ապահովում է կառավարման ստանդարտների պահանջների կատարումը և շարունակական կատարելագործումը:

**Մրցակցային դիրքի նկարագրությունը:** Մրցակցային աճին զուգահեռ վաճառքները տեղական շուկայում որոշ չափով նվազել են, սակայն Թողարկողը պահպանել է իր կայուն դիրքը շուկայում:
Վերջին հինգ տարիների ընթացքում մրգահյութերի արդյունաբերությունը արագորեն ընդլայնվել է նաև առողջ ապրելակերպին կարևորություն տվող սպառողների շնորհիվ:
Արդեն մի քանի տարի է, ինչ Թողարկողը շուկայում ներկայացնում է «Մենք» ապրանքանիշը: Այն ավելի ցածր գնով բնական հյութերի շարք է, որը թողարկողին հնարավորություն է տալիս մրցակցել ավելի ցածր գնային սեգմենտի բնական հյութերի հետ:
Հայաստանում հիմնական վաճառքն ապահովում են մի քանի խոշոր սուպերմարկետներ՝ մասնավորապես «Երևան Սիթի», «Ծիրան», «MG» և «ՍԱՍ»:
Հյութերի շուկայում Թողարկողի հիմնական մրցակիցներն են՝ «Sandora», «Santal», «Dobry» ապրանքանիշերով ներկայացված ներկրվող հյութերը, և «SIS», «YAN», «TAMARA» ապրանքանիշերով ներկայացված տեղական շուկայում արտադրվող հյութերը:
Պահածոների և մուրաբաների շուկայում Թողարկողի հիմնական մրցակիցներն են՝ «Royal», «Yan» և «Artfood» ապրանքանիշվով ներկայացված տեղական պահածոներն ու մուրաբաները:

## 3.5. Թողարկողի կառուցվածքը

Թողարկողը որևէ խմբի անդամ չէ և չի հանդիսանում այլ ընկերության դուստր կամ կախյալ ընկերություն:

## 3.6. Թողարկողի հիմնական միջոցները

| Հիմնական միջոցներ (31/12/2022 դրությամբ) | Հաշվեկշռային արժեք (հազար դրամ) |
|---|---|

| | |
|---|---|
| **Հող, շենքեր և շինություններ** | 1,725,788 |
| **Փոխանցող հարմարանքներ, մեքենասարքավոր., տրանսպորտային միջոցներ** | 1,648,330 |
| **Արտադրական և տնտեսական գույք, այլ և օգտագործման համար ոչ մատչելի ակտիվներ** | 827,373 |
| **Ընդամենը** | **4,201,491** |

Ընկերությանը պատկանող Երևան քաղաքի Ա. Քոչինյան 5 հասցեում գտնվող 3.0216 հա հողամասը և 8513.27 ք.մ շինությունները, Վանանդ համայնքի Երևանյան խճ 2 հասցեում գտնվող 6.71 հա հողամասը և 3820.25 ք.մ շինությունները, ինչպես նաև նույն համայնքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասերն ու այգիները՝ ընդհանուր 381.46 հա, Հրազդան քաղաքի Ա. Քոչինյան 5 հասցեում գտնվող 1.7685 հա հողամաս և 23955.19 ք.մ. շինությունները, Արգինա համայնքի 358.69 հա գյուղատնտեսական նշանակության հողամասերն ու վարելահողերը գրավադրված են Ընկերության վարկային պարտավորությունների համար: Գրավադրված գույքերի նկատմամբ օգտագործման սահմանափակումներ առկա չեն:

Ներկա պահին, Ընկերության ղեկավարությունը չի նախատեսում այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են սահմանափակել հիմնական միջոցների օգտագործումը:

## 3.7. Զարգացման վերջին միտումները

2022-2023 թվականի ընթացքում թողարկող արտադրած ապրանքների և մատուցած ծառայությունների մոտ 50%-ը արտահանվել է, իսկ մնացած մասը սպառվել է տեղի շուկայում: 2023թ.-ի հունվար-օգոստոս ամիսներին արտահանված ապրանքներից եկամուտը կազմել է մոտ 536 մլն դրամ, իսկ տեղի շուկայում սպառումը՝ մոտ 570 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ արտահանումը նվազել է 16%-ով՝ պայմանավորված դրամի արժևորման հաշվին արտահանվող երկրներում արտադրանքի հարաբերական թանկացմամբ և Վանանդ համայնքի գործարանի հրդեհի հետևանքով խտանյութերի արտադրման անհնարինությամբ, իսկ տեղական շուկայում սպառումը աճել է 13%-ով:

Ապրանքների և ծառայությունների վաճառքում գերակշիռ դիրք են զբաղեցնում հյութերն ու պահածոյացված բանջարեղենը, որոնց կշիռը ընդհանուր վաճառքում կազմում է մոտ 86% (2023թ.-ի հունվար-օգոստոս ամիսների համար):

## 3.8. Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

## 3.8.1. Թողարկողի վարչակազմակերպական կառուցվածքը և յուրաքանչյուր մարմնի իրավասություններն ու պարտականությունները

Թողարկողի վարչակազմակերպական կառուցվածքը ներկայացված է Հավելված 3-ում: Թողարկողի կանոնադրությամբ սահմանված են կառավարման հետևյալ մարմինները՝

- Բաժնետերերի ընդհանուր ժողով (Ժողով),
- Տնօրենների խորհուրդ,
- Գործադիր մարմին՝ Տնօրեն:

Ազդագրի գրանցման ներկայացնելու պահի դրությամբ Ընկերությունում առկա չէ ձևավորված տնօրենների խորհուրդ: Ընկերության կողմից արժեթղթերի տեղաբաշխման իրավասությունը վերապահվել է Ժողովին:
Ընկերությունը նախատեսում է արժեթղթերի տեղաբաշխման ընթացքում ձևավորել տնօրենների խորհուրդ:

### Ժողովը

Ժողովը ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է: Ժողովի իրավասություններն են՝

- Ընկերության կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
- Ընկերության վերակազմավորումը,
- Ընկերության լուծարումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը, միջանկյալ և ամփոփիչ լուծարային հաշվեկշռի հաստատումը,
- Ընկերության տնօրենների խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրության մասին հարցը ընկերության արտահերթ ժողովներում որոշում է քննարկվել, եթե ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը որոշում է ընդունել ընկերության տնօրենների խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,
- հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
- ընկերության կանոնադրական կապիտալի չափը փոփոխելը,
- ընկերության վերստուգողի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների ու վնասների հաշվի, շահույթների ու վնասների բաշխման հաստատումը,
- ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման հետ կապված՝ ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,
- ընդհանուր ժողովի վարման կարգը,
- ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ մամուլի համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի հրապարակային հայտարարության ձևով,

- բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացումը (տարանջատումը) և մեծացումը (համախմբումը),
- խոշոր գործարքների կնքումը,
- ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը,
- ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման և հետգնման մասին որոշումը,
- ընկերության ղեկավար պաշտոնարար անձանց աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը,
- «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ որոշումների ընդունումը:

## Տնօրենների խորհուրդը

Ընկերության տնօրենների խորհրդի իրավասությունն է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարման հետ կապված հարցերի լուծումը, բացառությամբ այն հարցերի, որոնք համաձայն ՀՀ օրենսդրության հանդիսանում են ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունը:

Ընկերության տնօրենների խորհրդի բացառիկ իրավասություններն են՝

- Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,
- Ընկերության Տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, ժողովների օրակարգի հաստատումը
- Ընկերության ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ,
- պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,
- Ընկերության գործադիր տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգը և պայմանները,
- վերստուգողի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի ու պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը,
- բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը,
- Ընկերության պահուստային հիմնադրամի օգտագործումը կանոնադրությամբ նախատեսված դեպքերում,
- Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կարգավորող ներքին փաստաթղթերի հաստատումը,
- Դուստր ընկերությունների ստեղծումը, դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը,
- Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը,
- Այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունը իրենից խոշոր գործարք չի ներկայացնում,
- Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում,
- Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,

- ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

**Գործադիր մարմինը**

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ընկերության գործադիր մարմինը՝ գործադիր տնօրենը:

Ընկերության գործադիր տնօրենի իրավասությանն են պատկանում ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ և ընկերության կանոնադրությամբ սահմանված ժողովի և տնօրենների խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերից:

Ընկերության գործադիր տնօրենը՝

- տնօրինում է ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից,
- ներկայացնում է ընկերության Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,
- առանց լիազորագրի գործում է ընկերության անունից,
- սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային
- տալիս է լիազորագրեր,
- բանկերում բացում է ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,
- Խորհրդի հաստատմանն է ներկայացնում ընկերության աշխատանքային կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը,
- իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը
- սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում ընկերության,
- աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

### 3.8.2. Տեղեկություններ թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի վերաբերյալ

| **Անուն ազգանուն** | **Պաշտոնը** | **Բնակության վայրը (հասցեն)** | **Թողարկողի կազմից դուրս գործունեությունը** |
|---|---|---|---|
| Ղազարյան Էդիկ | Բաժնետերերի ընդհանուր ժողովի մասնակից | ՀՀ, ք. Երևան | «Նոյան ՌԴ» ՍՊԸ-ի հիմնադիր. Ընկերության հիմնական գործունեության տեսակը սննդամթերքի մեծածախ վաճառք |

| | | | |
|---|---|---|---|
| Կաուկչյան Ռիփսիմե | Բաժնետերերի ընդհանուր ժողովի մասնակից | ՀՀ, ք. Երևան | - |
| Ղազարյան Վահե | Տնօրեն | ՀՀ, ք. Երևան | «Ագրինկո» ՍՊԸ սեփականատեր |

### 3.8.3. Շահերի բախումը

Թողարկողի և Թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց միջև Ազդագրի գրանցման ներկայացնելու պահի դրությամբ շահերի բախումը բացակայում է:

## 3.9. Կառավարման մարմինների գործունեությունը

Ընկերությունում առկա չէ աուդիտի կոմիտե: Ընկերության կանոնադրությամբ նախատեսված է վերստուգողի առկայության հնարավորություն: Ըստ կանոնադրության վերստուգողը հետևում է ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն օրենքներին, այլ իրավական ակտերին և կանոնադրությանը: Վերստուգողը նաև իրավունք ունի իրականացնել ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգում:

Ազդագրի գրանցման ներկայացնելու պահի դրությամբ Ընկերությունում առկա չէ ձևավորված տնօրենների խորհուրդ: Ընկերության կողմից արժեթղթերի տեղաբաշխման իրավասությունը վերապահվել է Ժողովին:

Ընկերությունը հետևում է ՀՀ-ում ընդունված կորպորատիվ կառավարման սկզբունքներին և գիտակցում է, որ արժեթղթերի շուկա մուտք գործելուց հետո անհրաժեշտ է լինելու ամբողջությամբ բավարարել ՀՀ կորպորատիվ կառավարման սկզբունքներին:

## 3.10. Հսկող անձինք

Թողարկողի հսկող անձինքն են՝

| Կանոնադրական կապիտալում մասնակցության ուժով | Կնքված վարկային պայմանագրերի ուժով |
|---|---|
| Ղազարյան Էդիկ Սմբատի | «Կոնվերս բանկ» ՓԲԸ<br>«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ» ՓԲԸ<br>«Արմսվիս Բանկ» ՓԲԸ |

## 3.11. Թողարկողի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսի վերաբերյալ

**Պատմական ֆինանսական տեղեկատվություն**

«Եվրոթերմ» ՓԲԸ-ի բոլոր տարիներ ֆինանսական հաշվետվությունները կազմված են ՀՀՄՍ 1. ստանդարտի համաձայն:

Թողարկողի աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ 2020-2022 թթ.-ի համար, ինչպես նաև անկախ աուդիտորական եզրակացությունները և 2023 թվականի առաջին կիսամյակի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են սույն Ազդագրի Հավելված 6-ում:

**Հարկային արտոնություններ**

Թողարկողը այս պահին չի օգտվում որևէ հարկային արտոնությունից:
Պարտատոմսերի կարգավորվող շուկայում ցուցակվելու և առևտրին թույլատրվելու հայտը բավարարվելու դեպքում, Թողարկողը դիմելու է ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի N 1125-L որոշմամբ հաստատված «Թողարկման և վարկանիշավորման պետական աջակցության ծրագրին»՝ պարտատոմսերի ցուցակման, տեղաբաշխման և բորսայում ցուցակման համար օժանդակություն ստանալու համար:
Օժանդակության պայմաններին բավարարելու դեպքում Թողարկողը կստանա սույն Ազդագրով նախատեսված արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման ծավալի 2%-ի չափով միանվագ սուբսիդավորում թողարկման համար, և երեք տարի տարեկան 3%-ական տոկոսի չափով սուբսիդավորում՝ շրջանառության համար: Արդյունքում պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման և ցուցակման համար Թողարկողի կրած ծախսերն ամբողջությամբ կսուբսիդավորվեն:

**Դատական և իրավական ընթացակարգը**

Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամիսների ընթացքում Թողարկողը ներգրավված չի եղելայնպիսի դատական, արբիտրաժային և վարչական վարույթներում, որոնք թողարկողի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա կարող են ունենալ կամ վերջերս ունեցել են էական ազդեցություն:

## 3.12. Լրացուցիչ տեղեկատվություն

### 3.12.1. Կանոնադրական կապիտալը

Թողարկողի տեղաբաշխված կանոնադրական կապիտալը կազմում է 525,050,000 ՀՀ դրամ (հինգ հարյուր քսանհինգ միլիոն հիսուն հազար), այն բաղկացած է 10,501 (տաս հազար հինգ հարյուր մեկ) հատ սովորական բաժնետոմսերից, յուրաքանչյուրը 50,000 (հիսուն հազար դրամ) անվանական արժեքով:

Թողարկողի հայտարարված կանոնադրական կապիտալը կազմում է 5,000,000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ, բաժանված 100 (հարյուր) հատ սովորական անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 50,000 (հիսուն հազար) դրամ անվանական արժեքով:

Թողարկողի կանոնադրական կապիտալը բաժանված է 2 մասնակիցների միջև՝ հետևյալ մասնաբաժիններով.

| Մասնակից | Բաժնեմաս (ՀՀ դրամ) | Բաժնեմասի չափ (%) |
|---|---|---|
| Ղազարյան Էդիկ Սմբատի | 500,000,000 | 95.23 |
| Կաուկչյան Ռիփսիմե Հայկի | 25,050,000 | 4.77 |

### 3.13.2. Կանոնադրությունը

Համաձայն Թողարկողի կանոնադրության Հոդված 7-ի՝ Թողարկողի գործունեության նպատակը շահույթի ստացումն է:

Թողարկողի գործունեության հիմնական տեսակներն են՝

- պարենային ապրանքների առևտուր,
- կենցաղային ապրանքների առևտուր,
- առևտրամիջնորդային (ոչ բորսայական) գործունեություն,
- ջերմային սարքավորումների առևտուր:

## 3.13. Էական պայմանագրեր

2022-2023 թվականի ընթացքում Թողարկողի կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Թողարկողի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5%-ը չեն կնքվել:

## 3.14. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը

Սույն Ազդագրի պատրաստման ընթացքում Թողարկողը չի օգտվել այլ խորհրդատուների ծառայություններից:

Թողարկողը չունի երրորդ անձ փորձագետ կամ խորհրդատու, որոնց մասնագիտական կարծիքն օգտագործվել է սույն Ազդագրում:

Բացի սույն Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն Ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի

ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են Ազդագրի Հավելված 6-ում:

## 3.15. Այլ տեղեկատվություն

Թողարկողի Կանոնադրությունը, տարեկան ֆինանսական հաշվետվությունները, աուդիտորական եզրակացությունները մշտապես հասանելի են հանրությանը էլեկտրոնային տարբերակով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Թողարկողի ինտերնետային կայքում՝ www.euroterm.am:

Սույն Ազդագրի էլեկտրոնային տարբերակը կիրառության ողջ ժամկետի ընթացքում տեղադրված լինելու Թողարկողի և Տեղաբաշխողի ինտերնետային կայքերում՝ www.euroterm.am, www.conversebank.am:

Ներդրողը անվճար կարող է ձեռք բերել սույն Ազդագիրը և դրան կից փաստաթղթերը թղթային տարբերակով՝ Տեղաբաշխողի Գլխամասային գրասենյակում՝ Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1 հասցեում:

ՆԵՐԴՐՈՂԸ, ԾԱՆՈԹԱՆԱԼՈՎ ՍՈՒՅՆ ԱԶԴԱԳՐԻՆ, ՊԵՏՔ Է ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԻ ՏՎՅԱԼ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՌԻՍԿԸ՝ ՄԻՆՉԵՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ:

## ՀԱՎԵԼՎԱԾ 1. Հայտ-հանձնարարականի տիպային ձև (իրավաբանական անձ)

«ԵՎՐՈԹԵՐՄ» ՓԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական իրավաբանական անձանց համար

Լրացվում է Ներդրողի կողմից

| | |
|---|---|
| Հայտը Տեղաբաշխողին ներկայացման ամսաթիվը և ժամը (օր, ամիս, տարի, ժամ) | |
| Իրավաբանական անձի անվանումը (ֆիրմային անվանում, կազմակերպաիրավական ձև) | |
| Պետական գրանցման տվյալները (գրանցման վկայականի համար, ամսաթիվ) | |
| Գրանցման և գտնվելու վայրը (գրանցման և գտնվելու վայրի հասցեները) | |
| ՀՎՀՀ | |
| Ռեզիդենտությունը (ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ) | |

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում եմ «ԵՎՐՈԹԵՐՄ» ՓԲԸ առաջարկը, որով և ցանկություն եմ հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

| | |
|---|---|
| Պարտատոմսերի թողարկման արժույթ | |
| 1 պարտատոմսի ձեռքբերման գինը (թվերով/տառերով) | |
| Պարտատոմսերի քանակը՝ հատ (թվերով/տառերով) | |
| Պարտատոմսերի դիմաց վճարվելիք ընդհանուր գումարը (թվերով/տառերով) | |
| Անձի արտարժույթով բանկային հաշվի համարը Բանկի անվանումը | |
| Անձի ՀՀ դրամով բանկային հաշվի համարը Բանկի անվանումը | |
| Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը | |
| Արժեթղթերի հաշվի համարը | |

Սույնով, հավաստում եմ, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող «ԵՎՐՈԹԵՐՄ» ՓԲԸ-ի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ազդագրին, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:
Հաստատում եմ, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են պարտատոմսերի ձեռքբերման նպատակով ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Սույն հայտ-հանձնարարականի հաստատման պահից, այն կհանդիսանա «ԵՎՐՈԹԵՐՄ» ՓԲԸ-ի և հայտը ներկայացնող անձի միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Ներդրողի ստորագրություն -------------------------------- Կ.Տ

Լրացվում է Տեղաբաշխողի կողմից

| | |
|---|---|
| Հայտի ընդունման ամսաթիվը և ժամը<br>(օր, ամիս, տարի, ժամ) | |
| Հայտ ընդունող աշխատակցի<br>ստորագրությունը և շտամպը | |
| Վաճառված պարտատոմսերի ընդհանուր<br>քանակ (թվերով/տառերով) | |
| Վաճառված Պարտատոմսերի դիմաց<br>գանձված<br>ընդհանուր գումարը (թվերով/տառերով) | |
| Դրամական միջոցների փոխանցման/<br>մուտքագրման ամսաթիվը/ժամը<br>(օր, ամիս, տարի, ժամ) | |

**Հիշեցում:** Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները 19300378033800 հատուկ բանկային հաշվին են փոխանցվում մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները ստացված են համարվում այդ օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են տվյալ աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք ստացված են համարվում վճարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

## ՀԱՎԵԼՎԱԾ 2. Հայտ-հանձնարարականի տիպային ձև (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր)

«ԵՎՐՈԹԵՐՄ» ՓԲԸ թողարկած արժեկտրոնային
պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական
(ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար)

Լրացվում է Ներդրողի կողմից

| | |
|---|---|
| Հայտը Տեղաբաշխողին ներկայացման ամսաթիվը և ժամը (օր, ամիս, տարի, ժամ) | |
| Հայտ ներկայացնողի անունը (անուն, ազգանուն) | |
| Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ (անձնագրի համար) | |
| Անձը հաստատող փաստաթղթի տրման Ամսաթիվը (անձնագրի տրման ամսաթիվը) | |
| Գրանցման վայրը (գրանցման վայրի հասցեն) | |
| Ռեզիդենտությունը (ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ) | |

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում եմ «ԵՎՐՈԹԵՐՄ» ՓԲԸ առաջարկը, որով և ցանկություն եմ հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

| | |
|---|---|
| Պարտատոմսերի թողարկման արժույթ | |
| 1 պարտատոմսի ձեռքբերման գինը (թվերով/տառերով) | |
| Պարտատոմսերի քանակը՝ հատ (թվերով/տառերով) | |
| Պարտատոմսերի դիմաց վճարվելիք ընդհանուր գումարը (թվերով/տառերով) | |
| Անձի արտարժույթով բանկային հաշվի համարը Բանկի անվանումը | |
| Անձի ՀՀ դրամով բանկային հաշվի համարը Բանկի անվանումը | |
| Արժեթղթերի հաշիվը Հաշվառող անձի անունը | |
| Արժեթղթերի հաշվի համարը | |

Հավաստում եմ, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող «ԵՎՐՈԹԵՐՄ» ՓԲԸ_ի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ազդագրին, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:
Հաստատում եմ, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են պարտատոմսերի ձեռքբերման նպատակով, ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Համաձայն եմ, որ Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնություններն առաջնահերթության կարգով լուծվեն Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
Սույն հայտ-հանձնարարականի հաստատման պահից, այն կհանդիսանա «ԵՎՐՈԹԵՐՄ» ՓԲԸ-ի և հայտը ներկայացնող անձի միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Ներդրողի ստորագրություն -------------------------------

Լրացվում է Տեղաբաշխողի կողմից

| | |
|---|---|
| Հայտի ընդունման ամսաթիվը և ժամը (օր, ամիս, տարի, ժամ) | |
| Հայտ ընդունող աշխատակցի ստորագրությունը և շտամպը | |
| Վաճառված պարտատոմսերի ընդհանուր քանակ (թվերով/տառերով) | |
| Վաճառված Պարտատոմսերի դիմաց գանձված ընդհանուր գումարը (թվերով/տառերով) | |
| Դրամական միջոցների փոխանցման/ մուտքագրման ամսաթիվը (օր, ամիս, տարի) | |

**Հիշեցում:** Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները 19300378033800 հատուկ բանկային հաշվին են փոխանցվում մինչև աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

## ՀԱՎԵԼՎԱԾ 3. Թողարկողի վարչակազմակերպական կառուցվածքը



## ՀԱՎԵԼՎԱԾ 4. Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը

**Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)** = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետոմսերի միջին կշռված թիվը
**Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)** = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն
**Ակտիվների շահութաբերություն (ROA)** = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն
**Զուտ շահույթի մարժա (NPM)** = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ
**Կապիտալի համարժեքության գործակից** = Սեփական կապիտալ / Ընդհանուր ակտիվներ
**Ֆինանսական կախվածության գործակից** = Ընդամենը պարտավորություններ / Սեփական կապիտալ
**Բացարձակ իրացվելիության գործակից** = (Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ + Ընթացիկ ֆինանսական ներդրումներ) / Ընթացիկ պարտավորություններ
**Ընթացիկ իրացվելիության գործակից** = (Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ + Ընթացիկ ֆինանսական ներդրումներ + Ընթացիկ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ) / Ընթացիկ պարտավորություններ
**Ընդհանուր իրացվելիության գործակից** = Ընթացիկ ակտիվներ / Ընթացիկ պարտավորություններ
**Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից** = Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ / Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը
**Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով** = 365 / (Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ / Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի միջին արժեքը)
**Պաշարների շրջանառելիության գործակից** = Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Պաշարների միջին արժեքը
**Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով** = 365 / (Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Պաշարների միջին արժեքը)
**Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից** = Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը
**Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով** = 365 / (Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք / Կրեդիտորական պարտքերի միջին արժեքը)։

## ՀԱՎԵԼՎԱԾ 5. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի մասնաճյուղերի ցանկը

| | |
|---|---|
| «Գլխամասային գրասենյակ»<br>ՀՀ, 0010, Երևան, Կենտրոն համայնք, Հանրապետության հրապարակ,<br>Վ. Սարգսյան 26/1<br>Հեռախոս՝ (+374 10) 51-12-11 | |
| «Ավան» մասնաճյուղ<br>ՀՀ, 0060, Երևան, Ավան համայնք<br>Խուդյակով 161/2<br>Հեռախոս՝ (+374 10) 51-12-77, 61-44-72 | «Մեծամոր» մասնաճյուղ<br>ՀՀ, 0910, ք. Մեծամոր<br>Քաղաքապետարանի շենք, 1-ին հարկ<br>Հեռախոս՝ (+374 237) 32-070, (374 10) 28-18-33 |
| «Կենտրոնական» մասնաճյուղ<br>ՀՀ, 0051, Երևան, Արաբկիր համայնք<br>Կոմիտասի 49 շենք, 1/3<br>Հեռախոս՝ (+374 10) 51-12-11 | «Էջմիածին» մասնաճյուղ<br>ՀՀ, 1101, ք. Էջմիածին<br>Մաշտոցի 69/90<br>Հեռախոս՝ (+374 231) 52-093, 52-088 |
| «Դավթաշեն» մասնաճյուղ<br>ՀՀ, 0054, Երևան, Դավթաշեն համայնք<br>3 թաղամաս, 18/6 տարածք<br>Հեռախոս՝ (+374 10) 51-12-11 | «Սևան» մասնաճյուղ<br>ՀՀ, 1501, ք. Սևան<br>Նաիրյան 155, 2<br>Հեռախոս՝ (+374 261) 20-162, 20-165 |
| «էրեբունի» մասնաճյուղ<br>ՀՀ, 0041, Երևան, Էրեբունի համայնք<br>Էրեբունի 11<br>Հեռախոս՝ (+374 10) 43-04-57, 43-04-58 | «Վանաձոր» մասնաճյուղ<br>ՀՀ, 2021 ք. Վանաձոր<br>Գ. Լուսավորչի 40<br>Հեռախոս՝ (+374 0322) 42-916, 41-258 |
| «Մոսկովյան» մասնաճյուղ<br>ՀՀ, 0009, Երևան, Կենտրոն համայնք<br>Մաշտոցի 39/12<br>Հեռախոս՝ (+374 10) 52-15-28 | «Աբովյան» մասնաճյուղ<br>ՀՀ, 2202, ք. Աբովյան<br>Սահմանադրության հրապարակ 8<br>Հեռախոս՝ (+374 222) 33-080, 22-025 |
| «Կիլիկիա» մասնաճյուղ<br>ՀՀ, 0070, Երևան, Կենտրոն համայնք<br>Քաջազնունի 4/1<br>Հեռախոս՝ (+374 10) 55-13-59 | «Հրազդան» մասնաճյուղ<br>ՀՀ, 2302, ք. Հրազդան<br>Միկրոշրջան 104, 1-ին հարկ,<br>Հեռախոս՝ (+374 223) 34-709, 24-707 |
| «Երիտասարդական» մասնաճյուղ<br>ՀՀ, 0070, Երևան, Տերյան 105/1<br>Հեռախոս՝ (+374 10) 51-12-11 | «Նոր Հաճըն» մասնաճյուղ<br>ՀՀ, 2412, ք. Նոր Հաճն<br>Չարենցի 8,<br>Հեռախոս՝ (+374 224) 43-850, 43-840 |
| «Սայաթ Նովա» մասնաճյուղ<br>ՀՀ, 0001, Երևան, Կենտրոն համայնք<br>Սայաթ-Նովա 19<br>Հեռախոս՝ (+374 10) 51-12-11 | «Չարենցավան» մասնաճյուղ<br>ՀՀ, 2501, ք. Չարենցավան<br>Խանջյան 21<br>Հեռախոս՝ (+374 226) 41-597 |
| «Զվարթնոց օդանավակայան» մասնաճյուղ<br>ՀՀ, Երևան, Մալաթիա համայնք<br>մ/օ «Զվարթնոց» 42, Մեկնման սրահ<br>Հեռախոս՝ (+374 10) 49-31-97, 49-31-98 | «Գյումրի» մասնաճյուղ<br>ՀՀ, ք. Գյումրի<br>Երևանյան խճուղի 7/7<br>Հեռախոս՝ (+374 312) 40-629 |
| «Ավիացիա» մասնաճյուղ<br>ՀՀ, Երևան, Մալաթիա համայնք<br>մ/օ Զվարթնոց 42, Ժամանման փակ գոտի | «Կումայրի» մասնաճյուղ<br>ՀՀ, 3106, ք. Գյումրի,<br>Խրիմյան Հայրիկ 46ա |

| | |
|---|---|
| Հեռախոս՝ (+374 10) 49-31-97 | Հեռախոս՝ (+374 312) 49-606, 49-605 |
| «Մալաթիա» մասնաճյուղ<br>ՀՀ, 0065, Երևան, Սեբաստիա փ., 82շ, 50<br>Հեռախոս՝ (+374 10) 51-12-11 | «Շիրակ» մասնաճյուղ<br>ՀՀ, ք. Գյումրի<br>Օդանավակայանի սպասասրահում գտնվող կրպակ<br>Հեռախոս՝ (+374 312) 35-605 |
| «Նոր-Նորք» մասնաճյուղ<br>ՀՀ, 0056, Երևան, Նոր-Նորք համայնք<br>Գայի պող. 10/6<br>Հեռախոս՝ (+374 10) 51-12-11 | «Կապան» մասնաճյուղ<br>ՀՀ, 3301, ք. Կապան<br>Թումանյան 1/2<br>Հեռախոս՝ (+374 285) 20-058, 20-068 |
| «Արարատյան» մասնաճյուղ<br>ՀՀ, 0039, Երևան, Շենգավիթ համայնք<br>Բագրատունյաց 13, 111<br>Հեռախոս՝ (+374 10) 46-50-07, 42-44-95 | «Դիլիջան» մասնաճյուղ<br>ՀՀ, 3901, ք. Դիլիջան<br>Մյասնիկյան փողոց, Կապի հանգույցի 1-ին հարկ<br>Հեռախոս՝ (+374 268) 22-386 |
| «Արշակունյաց» մասնաճյուղ<br>ՀՀ, 0039, Արշակունյաց պողոտա, 17շ., 1<br>Հեռախոս՝ (+374 10) 51-12-11 | «Իջևան» մասնաճյուղ<br>ՀՀ, 4001 ք. Իջևան,<br>Վալանսի փող. 6/1<br>Հեռախոս՝ (+374 263) 40-844, 40-899 |
| «Զեյթուն» մասնաճյուղ<br>ՀՀ, 0069, Երևան, Քանաքեռ-Զեյթուն համայնք<br>Ռուբինյանց փող.  14/7<br>Հեռախոս՝ (+374 10) 51-12-11 | «Արմավիր» մասնաճյուղ<br>ՀՀ, 0902, ք. Արմավիր<br>Հանրապետության  փող. 3<br>Հեռախոս՝ (+374 237) 22-273 |
| «Աշտարակ» մասնաճյուղ<br>ՀՀ, 0201, ք. Աշտարակ<br>Սիսակյան 1<br>Հեռախոս՝ (+374 232) 36-911, 36-922 | «Արտաշատ» մասնաճյուղ<br>ՀՀ, 0701, ք. Արտաշատ<br>Օգոստոսի 23, փող. թիվ 43<br>Հեռախոս՝ (+374 235) 22-499, 22-478 |

# ՀԱՎԵԼՎԱԾ 6. Ֆինանսական հաշվետվություններ

# «ԵՎՐՈԹԵՐՄ»
# ՓԲԸ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2021 թ.

ԵՐԵՎԱՆ 2023

# Բովանդակություն


| | էջ |
|---|---|
| Անկախ աուդիտորի եզրակացություն | 3-5 |
| Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն | 6 |
| Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն | 7 |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն | 8 |
| Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն | 9 |
| Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 10 |

AUDIT & CONSULTING

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ Եւ
ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՀՎՊՀ # 1 20 0333

«ՊՐՈԳՐԵՍ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/3

# Անկախ Աուդիտորի Եզրակացություն

«Եվրոթերմ» ՓԲԸ
Բաժնետերերին

*Կարծիք*

Մեր կողմից իրականացվել է «Եվրոթերմ» Փակ Բաժնետիրական Ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում՝ այդ հաշվետվությունները ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավատ են և տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների Միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

*Կարծիքի հիմքեր*

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

- ✓ Ընկերության համադրելի տեղեկատվությունը՝ 2020թ. ֆինանսական հաշվետվությունները աուդիտի չեն ենթարկվել:
- ✓ Ընկերության գլխավոր հաշվապահը ֆինանսական հաշվետվության վավերացման ամսաթվի դրությամբ չունի փորձագետ հաշվապահի կամ աուդիտորի որակավորում:

*Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:
Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այդ ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք՝

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

**AUDIT & CONSULTING**

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Ընկերությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը, և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

07 Ապրիլի 2023թ.

Ռուզաննա Արզումանյան

Գլխավոր տնօրեն

Էմիլ Նիկողոսյան

Խմբի ղեկավար-Աուդիտոր

26/3 V.Sargsyan Street, 0010 Yerevan, Republic of Armenia, Tel/Fax: + 374 (10) 541-175, www.progress-audit.am

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

**31 դեկտեմբերի 2021թ.**

*(հազար դրամ)*

| | Ծանոթագրություն | 31 դեկտեմբեր 2021 | 31 դեկտեմբեր 2020 |
|---|---|---|---|
| *Ոչ ընթացիկ ակտիվներ* | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 4,462,884 | 4,812,040 |
| Ոչ նյութական ակտիվներ | 5 | 10,256 | 11,942 |
| Բերքատու բույսեր | 6 | 873,929 | 864,248 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 8 | 14,052 | 15,885 |
| | | *5,361,121* | *5,704,115* |
| *Ընթացիկ ակտիվներ* | | | |
| Պաշարներ | 9 | 1,077,057 | 1,138,020 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 10 | 730,683 | 773,310 |
| Այլ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | 10 | 11,874 | 3,410 |
| Դրամական միջոցներ | 11 | 6,886 | 17,995 |
| | | *1,826,500* | *1,932,735* |
| ***Ընդամենը ակտիվներ*** | | **7,187,621** | **7,636,850** |
| *Սեփական կապիտալ և պարտավորություններ* | | | |
| Սեփական կապիտալ | | | |
| Բաժնետիրական կապիտալ | 12 | 525,050 | 525,050 |
| Վերագնահատումից տարբերություններ | 13 | 1,689,413 | 1,689,413 |
| Սեփական կապիտալի այլ տարրեր | | 5,729 | - |
| Կուտակված շահույթ | | 1,414,471 | 727,065 |
| | | *3,634,663* | *2,941,528* |
| *Ոչ ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Վարկեր և փոխառություններ | 14 | 1,233,342 | 2,444,889 |
| Ֆինանսական վարձակալություն | 14 | 9,495 | 11,171 |
| Հետաձգված հարկային պարտավորություն | 7 | 353,632 | 211,635 |
| | | *1,596,469* | *2,667,695* |
| *Ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ | 14 | 1,653,734 | 1,699,747 |
| Ֆինանսական վարձակալություն | 14 | 2,050 | - |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 15 | 300,705 | 327,880 |
| | | *1,956,489* | *2,027,627* |
| ***Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ*** | | **7,187,621** | **7,636,850** |

Վահե Ղազարյան
Գլխավոր տնօրեն

Լյուդմիլա Սարգսյան
Գլխավոր հաշվապահ

Վավերացման ամսաթիվ 07/04/2023թ

«ԵՎՐՈՏԵՐՄ» «EBPOTEPM» «EUROTERM» 02541434

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկել այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ

| | Ծանոթ. | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|
| Հասույթ | 16 | 2,269,477 | 1,941,043 |
| Վաճառքի ինքնարժեք | 17 | (1,392,764) | (1,264,212) |
| *Համախառն շահույթ (վնաս)* | | *876,713* | *676,831* |
| Այլ եկամուտ | 18 | 842,759 | 80,106 |
| Հավաքված բերքի իրական արժեք | | 61,972 | 103,153 |
| Այգիների մշակման և պահպանման ծախսեր | 19 | (109,705) | (114,582) |
| Իրացման ծախսեր | 20 | (210,563) | (200,906) |
| Վարչական ծախսեր | 21 | (115,411) | (124,183) |
| Այլ ծախսեր | 22 | (269,429) | (183,055) |
| *Գործառնական գործունեությունից շահույթ(վնաս)* | | *1,076,336* | *237,364* |
| Ֆինանսական հոդվածներ | 23 | (312,340) | (253,235) |
| Այլ ոչ գործառնական օգուտ/վնաս | 24 | 36,374 | (435,783) |
| *Շահույթը (վնասը) մինչև հարկերը* | | *800,370* | *(451,654)* |
| Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում | 25 | (135,740) | - |
| Տարվա զուտ արդյունք | | 664,630 | (451,654) |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ | | - | - |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ** | | **664,630** | **(451,654)** |

Վահե Ղազարյան
Գլխավոր տնօրեն

Լյուդմիլա Սարգսյան
Գլխավոր հաշվապահ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ միասին:

# Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

| | Բաժնետիրական կապիտալ | Վերագնահատումից տարբերություններ | Կուտակված շահույթ/ (վնաս) | Սեփական կապիտալի այլ տարրեր | Ընդամենը սեփական կապիտալ |
|---|---|---|---|---|---|
| 2020թ. հունվարի 1-ի դրությամբ | 525,050 | 1,689,413 | 1,177,531 | - | 3,391,994 |
| Ճշգրտում | | | 1,186 | - | 1,186 |
| Շահաբաժիններ | | | | | |
| Տարվա շահույթ | | | (451,654) | - | (451,654) |
| Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ | | | | | |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ | | | (451,654) | - | (451,654) |
| 2020 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ | 525,050 | 1,689,413 | 727,063 | - | 2,941,526 |
| Ճշգրտում | | | 22,778 | - | 22,778 |
| Շահաբաժիններ | | | - | | |
| Տարվա շահույթ | | | 664,630 | - | 664,630 |
| Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ | | | | 5,729 | 5,729 |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ | | | 664,630 | 5,729 | 670,359 |
| 2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ | 525,050 | 1,689,413 | 1,414,471 | 5,729 | 3,634,663 |

Վահե Ղազարյան
Գլխավոր տնօրեն

«ԵՎՐՈԹԵՐՄ» «ЕВРОТЕРМ» «EUROTERM» 02541434

Լյուդմիլա Սարգսյան
Գլխավոր հաշվապահ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

հազար դրամ

| | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր** | | |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից | 2,578,156 | 2,219,912 |
| Գործառնական այլ գործունեությունից | 2,160 | 483 |
| **Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր** | **2,580,316** | **2,220,395** |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր** | | |
| Գնումների գծով | (1,676,803) | (1,076,019) |
| Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից | (301,648) | (274,558) |
| Վճարումներ բյուջե և սոց. վճարումների գծով | (84,051) | (92,177) |
| Գործառնական այլ գործունեությունից ելքեր | (7,988) | (6,069) |
| **Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր** | **(2,070,490)** | **(1,448,823)** |
| ***Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր*** | ***509,826*** | ***771,572*** |
| **Ներդրումային գործունեությունից մուտքեր** | | |
| Ֆինանսական ակտիվներով գործառնություններից | 3,410 | - |
| Շահաբաժինների և տոկոսների ստացումից | - | - |
| **Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր** | **3,410** | **-** |
| **Ներդրումային գործունեությունից ելքեր** | | |
| Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման գծով | - | - |
| -Փոխառությունների տրամադրումից | (14,890) | (3,410) |
| **Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր** | **(14,890)** | **(3,410)** |
| ***Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր*** | ***(11,480)*** | ***(3,410)*** |
| **Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների մուտքեր** | | |
| Ստացված վարկերից և փոխառություններից | 417,824 | 95,836 |
| **Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից մուտքեր** | **417,824** | **95,836** |
| **Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների ելքեր** | | |
| Ստացված վարկերի և փոխառությունների մարումից | (928,155) | (860,777) |
| Վճարված շահաբաժիններ և տոկոսներ | (17) | (28) |
| Ֆինանսական այլ գործունեությունից ելքեր | (2,090) | (2,161) |
| **Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ելքեր** | **(930,262)** | **(862,966)** |
| ***Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր*** | ***(512,438)*** | ***(767,130)*** |
| **Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր** | **(14,092)** | **1,032** |
| **Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ** | **2,983** | **(156)** |
| **Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը** | **17,995** | **17,119** |
| **Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին** | **6,886** | **17,995** |

Վահե Ղազարյան
Գլխավոր տնօրեն

Լյուդմիլա Սարգսյան
Գլխավոր հաշվապահ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

*«Եվրոթերմ» ՓԲԸ*
*2021թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ*

## 1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Եվրոթերմ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է 1998թ. հունիսի 25-ին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Վկայականի գրանցման թիվն է՝ 286.110.03236, վկայականի համարն է 01Ա041738, ՀՎՀՀ՝ 02541434: Ընկերության գործունեության հիմնական բնագավառներն են՝ հյութերի և սննդի արտադրություն, որը ներառում է բնական հյութերի, նեկտարների, խմիչքների և կոնցենտրատների արտադրություն և պահածոյացված բանջարեղենի և մրգերի արտադրություն, ջեռուցման համակարգերի ներկրում, կոմպլեկտավորում և տեղադրում և բեռնափոխադրման ծառայությունների մատուցում:

Սննդամթերքի ողջ արտադրանքն արտադրվում և վաճառվում է Նոյան ապրանքանիշի ներռ, իսկ ջեռուցման համակարգի արտադրությունը և ծառայությունները մատուցվում են Եվրոթերմ ապրանքանիշի ներքո:

Ընկերությունն ունի գյուղատնտեսական նպատակով օգտագործվող հողատարածքներ՝ մրգատու ծառերով: Ընկերությունն ունի տարբեր մրգատու այգիներ, որտեղ աճեցվում են ծիրանենի, դեղձենի, խնձորենի, ընկուզենի, նշենի, սպիտակ կեռասենի և խաղող: Ծառերից ստացված բերքը հիմնականում օգտագործվում է հյութերի և սննդի արտադրության մեջ, իսկ մնացած մասը վաճառվում է երրորդ կողմերին: Ընկերությունն ունի արտադրատեխնոլոգիական ամբողջական ցիկլ, այսինքն՝ մրգի ստացումից և մշակումից, մինչև փաթեթավորում: Ընկերության գյուղատնտեսական նպատակով օգտագործվող հողերը գտնվում են Արմավիրի մարզի Վանանդ գյուղում՝ մոտավորապես 193 հա և Արգինա գյուղում՝ 359 հա:

Ընկերության արտադրանքը վաճառվում է Հայաստանի շուկայում և արտահանվում է Ռուսաստանի Դաշնություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ և այլ երկրներ:
Ծառայությունները մատուցվում են Հայաստանի Հանրապետությունում: Ընկերության վերահսկող անձն է հանդիսանում պրն. Էդիկ Ղազարյանը, որին պատկանում է բաժնետոմսերի 95.23%: Բաժնետոմսերի մնացած 4.77% պատկանում է տկն. Ռիփսիմե Կարապետյանին:

Ընկերության կողմից իրականացվող գործունեության տեսակներից՝ ըստ ՀՀ օրենսդրության լիցենզավորման են ենթակա՝

Լիցենզիա N 14918-01՝ Շինարարության իրականացում՝ բնակելի, հասարակական և արտադրական ոլորտի;
Լիցենզիա N 14918-03՝ Շինարարության իրականացում՝ հիդրոտեխնիկական ոլորտի;
Լիցենզիա N 14918-04՝ Շինարարության իրականացում՝ էներգետիկ ոլորտի:

Լիցենզիա N 14919-01՝ Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն՝ բնակելի, հասարակական և արտադրական ոլորտի;
Լիցենզիա N 14919-03՝ Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն՝ հիդրոտեխնիկական ոլորտի;
Լիցենզիա N 14919-04՝ Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն՝ էներգետիկ ոլորտի:
Տրամադրված քաղաքաշինության նախարարության կողմից 21.07.2011թ.
Գործողության ժամկետը՝ Անժամկետ:

2021թ. աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 171 մարդ (2020թ.՝ 141 մարդ):

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ամիրյան փողոց 15ա: Ընկերության գործունեության հասցեներն են՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Քոչինյան փողոց 5, ինչպես նաև Արմավիրի մարզ, Վանանդ գյուղ:

## 2. Պատրաստման հիմքերը

### 2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

### 2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքով, բացառությամբ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնական ճանաչման պահին չափվում են իրական արժեքով: Որոշ հիմնական միջոցներ հաշվառվում են վերագնահատված արժեքով:

### 2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույն կերպով է արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական էությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթով ներկայացված տեղեկատվությունն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է հազար միավորի ճշտությամբ:

### 2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կատարի կարևոր գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրությունները և գնահատումները էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 26-ում:

## 2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

### Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ և փոփոխություններ ամբողջական ՖՀՄՍ-ներում առ 31/12/2021թ.

**ՖՀՄՍ1 *«ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրումը». Դուստր ընկերությունը որպես առաջին անգամ ՖՀՄՍ որդեգրող***

ՖՀՄՍ 1-ում կատարվել է լրացում, ըստ որի եթե դուստր ընկերությունը որդեգրում է ՖՀՄՍ-ները ավելի ուշ քան մայր կազմակերպությունը և առկա է հաշվետվությունների վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերություն, ապա ՖՀՄՍ որդեգրելու պահի դրությամբ դուստրը կարող է փոխարժեքային պահուստը որոշել մայր կազմակերպության կողմից ներկայացված հաշվետվությունում համապատասխան փոխարժեքային տարբերության գումարի չափով:

*ՖՀՄՍ 1-ի այս լրացումը ուժի մեջ է մտնում 2022թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

**ՖՀՄՍ9 *«Ֆինանսական գործիքներ». Ֆինանսական պարտավորության ապաճանաչման 10% շեմի հաշվարկում վճարների ներառումը***

Համաձայն ՖՀՄՍ 9-ի երբ ֆինանսական պարտավորության պայմաններում կատարվում է փոփոխություն, այն պետք է հաշվառվի որպես գոյություն ունեցող պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում, եթե վերափոխված դրամական հոսքերի ներկա արժեքը տարբերվում է հին պայմաններով սպասվող դրամական հոսքերի ներկա արժեքից առնվազն վերջինիս 10%-ի չափով: ՖՀՄՍ 9-ում կատարվել է պարզաբանում, ըստ որի ներկա արժեքի հաշվարկում դիտարկվում են միայն այն վճարներից առաջացող զուտ հոսքերը, որոնք կատարվել են փոխառու և փոխատու միջև՝ ներառյալ այլ կողմերի անունից կատարված վճարները:

*ՖՀՄՍ 9-ի այս խմբագրումը ուժի մեջ են մտնում 2022թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

**ՀՀՄՍ41 *«Գյուղատնտեսություն». Հարկերի ազդեցություն իրական արժեքը որոշելիս***

Համաձայն ՀՀՄՍ 41-ի այս փոփոխության կենսաբանական ակտիվի, ինչպես նաև բերքահավաքի պահին գյուղատնտեսական արտադրանքի իրական արժեքը որոշելիս եթե կիրառվում է սպասվող հոսքերի ներկա արժեքի մոդելը, ապա դիտարկվում են նաև հարկերի գծով սպասվող հոսքերը: Նախկին խմբագրմամբ հարկերի գծով հոսքերը չպետք է ներառվերին:

*ՀՀՄՍ 41-ի այս փոփոխությունը ուժի մեջ են մտնում 2022թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

**ՖՀՄՍ3 *«Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ». Հղումներ հայեցակարգային հիմունքներին***

ՖՀՄՍ 3-ում կատարված այս խմբագրմամբ նախատեսված է բիզնես միավորման դեպքում որոշելի ակտիվներն և պարտավորությունները որոշել ըստ հիմունքներում նախատեսված ակտիվի և պարտավորության սահմանումների և ճանաչման պահանջների:

Այնուամենայնիվ, եթե պարտավորությունը կամ պայմանական պարտավորությունը գտնվում է ՀՀՄՍ37 «Պահուստներ, պայմանական ակտիվներ և պայմանական պարտավորություններ» կամ ՖՀՄՍՄԿ21 «Պարտադիր վճարներ» ստանդարտների գործողության ոլորտում, ապա հիմունքների փոխարեն կիրառվում են նշված ստանդարտների ճանաչման պահանջները:

*ՖՀՄՍ 3-ի այս խմբագրումը ուժի մեջ են մտնում 2022թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

**ՀՀՄՍ1 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը». Պարտավորությունների դասակարգումը***

ՀՀՄՍ 1-ում կատարվել է փոփոխություն, ըստ որի եթե կազմակերպությունը իրավունք ունի երկարաձգել պարտավորության մարումը հաշվետու ամսաթվից հետո նվազագույնը 12 ամիս, ապա այն դասակարգվում է որպես ոչ ընթացիկ  անկախ այդ իրավունքն օգտագործելու մտադրությունից:

*ՀՀՄՍ 1-ի այս փոփոխությունը ուժի մեջ են մտնում 2023թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

**ՀՀՄՍ16 *«Հիմնական միջոցներ». Մինչև նախանշված նպատակներով օգտագործումը ստացված հասույթներ***

ՀՀՄՍ 16-ում կատարվել է փոփոխություն, որի համաձայն մինչև հիմնական միջոցի աշխատանքային վիճակի հասնելը դրա կողմից գեներացված օգուտները և դրան վերագրվող ուղղակի ծախսումները (օրինակ տեստավորման ընթացքում արտադրանքի թողարկումը) պետք է ճանաչվեն շահույթում կամ վնասում՝ նախկինում նախատեսված ինքնարժեքի նվազեցման փոխարեն:

*ՀՀՄՍ 16-ի այս փոփոխությունը ուժի մեջ են մտնում 2022թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

**ՀՀՄՍ37 *«Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ». Անբարենպաստ պայմանագրերի կատարման ծախսումները***

ՀՀՄՍ 37-ում կատարվել է խմբագրում, որտեղ պարզաբանվում որ պայմանագրի անբարենպաստ լինելը և համապատասխանաբար պահուստի գնահատականը որոշելիս դիտարկվում են միայն պայմանագրի կատարմանը ուղղակիորեն վերագրվող ծախսումները: Դա ներառում է նաև այլ ծախսումների (օրինակ սարքավորումների մաշվածության) բաշխումից առաջացած մասերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են պայմանագրի կատարմանը:

*ՀՀՄՍ 37-ի այս փոփոխությունը ուժի մեջ են մտնում 2022թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

## 2.6 Նախորդ տարիների սխալների ուղղում

Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդ ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվությունը, ներկայացվում են այնպես, իբր էական սխալներն ուղղվել են այն ժամանակաշրջանում, որում դրանք կատարվել են: Հետևաբար, ներկայացված յուրաքանչյուր ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը ներառվում է այդ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մեջ: Ներկայացված ժամանակաշրջաններից ամենավաղ ժամանակաշրջանի կուտակված արդյունքների սկզբնական մնացորդը կարգավորվում է ճշգրտումների այն գումարով, որը վերաբերում է այն ժամանակաշրջաններին, որոնք նախորդում են վերջին ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների համադրելի տեղեկատվության մեջ ներգրավված ժամանակաշրջաններին: Նախորդող ժամանակաշրջանների վերաբերյալ ներկայացված որևէ այլ տեղեկատվություն նույնպես վերաներկայացվում է:

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

### 3.1 Ընդհանուր դրույթներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները կիրառվել են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են, բայց դեռևս ուժի մեջ չեն մտել և վաղաժամ չեն ընդունվել Ընկերության կողմից, ներկայացված են ծանոթագրություն 2.5-ում:

Էական հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները, որոնք կիրառվել են ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ներկայացված են ստորև:

### 3.2 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀՄՍ 1. *Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում* ստանդարտի համաձայն: Ընկերությունը որոշել է ներկայացնել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին մեկ հաշվետվություն:

Կազմակերպությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ներկայացնում է ակտիվներն ու պարտավորությունները ընթացիկ և ոչ ընթացիկ դասակարգմամբ: Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ծախսերը դասակարգվում են ըստ գործառույթի: Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը ներկայացվում է ուղղակի մեթոդով, իսկ տոկոսների և շահաբաժինների գծով հոսքերը դասակարգվում են որպես ներդրումային գործունեությունից ներհոսքեր և ֆինանսավորման գործունեությունից արտահոսքեր:

### 3.3 Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար ֆունկցիոնալ արժույթից տարբերվող այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից հրապարակված՝ արտարժութային շուկաներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 480.14 ՀՀ դրամ, 1 Եվրոն կազմում է 542.61 ՀՀ դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 522.59 ՀՀ դրամ, 1 Եվրոն կազմում է 641.11 ՀՀ դրամ, 2020թ. հունվարի 01-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 479.70 ՀՀ դրամ, 1 Եվրոն կազմում է 537.26 ՀՀ դրամ): Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես շահույթ կամ վնաս:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ Ընկերության դրամային հոդվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնական գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

## 3.4 Հիմնական միջոցներ

Հողերը, շենքերը և սարքավորումները հաշվառվում են վերագնահատված արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի այլ հոդվածները սկզբնական ճանաչման պահին չափվում են սկզբնական արժեքով: Ձեռք բերված հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, տրանսպորտային ծախսումները, ինչպես նաև ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ծախսումները: Գործարկման և նման նախապատրաստական ծախսումները հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում: Սեփական ուժերով կառուցվող հիմնական միջոցների սկզբնական արժեքը որոշվում է նույն սկզբունքներով, ինչ պաշարների ինքնարժեքը: Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, մինչև դրանց նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելը, համդիսանում են անավարտ հիմնական միջոցներ և հաշվառվում են դրանց ինքնարժեքով:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրս գրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես շահույթ կամ վնաս:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, կապիտալացվում են տեղադրվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ միասին:
Ճանաչման ճշված սկզբունքի համաձայն՝ կազմակերպությունը գնահատում է իր հիմնական միջոցների գծով բոլոր ծախսումները դրանց կատարման պահին: Այս ծախսումները ներառում են հիմնական միջոցի միավորի կառուցման կամ ձեռքբերման սկզբնավորման ծախսումները և հետագայում կատարված ծախսումները՝ կապված դրա ավելացման, մի մասի փոխարինման կամ սպասարկման հետ:
Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում՝ որպես շահույթ կամ վնաս:

Հիմնական միջոցների մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ ներառվում է այլ ակտիվի ինքնարժեքում՝ կիրառելով ուղիղ գծային մեթոդը, եթե մաշվածության հաշվարկման այլ մեթոդը չի ապահովում հիմնական միջոցի տնտեսական օգուտների նվազեցման ավելի արժանահավատ պատկերը:
Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

| | |
|---|---|
| Շենքեր | 20-40 տարի |
| Տրանսպորտային միջոցներ | 5-15 տարի |
| Սարքավորումներ | 5-36 տարի |
| Արտադրական գույք, գործիք. | 1-10 տարի |

Քանի որ հողի համար հնարավոր չի որոշել օգտակար ծառայության ժամկետ, ապա համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

## 3.5 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվները ներառում են հաշվապահական հաշվառման ծրագիր, արտոնագրեր և այլն:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան ճանաչվում է համապատասխան ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ ներառվում է այլ ակտիվի ինքնարժեքում՝ կիրառելով գծային մեթոդը՝ ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի համակարգչային ծրագրի, 5-10 տարի արտոնագրերի, ապրանքային նշանների, դիզայնի և 10 տարի այլ ոչ նյութական ակտիվների համար:

## 3.6 Կենսաբանական ակտիվներ

Կենսաբանական ակտիվը սկզբնական ճանաչման պահին և յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ չափվում է իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն դեպքերի, երբ իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել:
Ընկերության կենսաբանական ակտիվներից ստացվող գյուղատնտեսական արտադրանքը չափվում է բերքահավաքի պահին իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները: Նման չափումը հանդիսանում է սկզբնական արժեք այն ամսաթվի դրությամբ, երբ կիրառվում է ՀՀՄՍ 2 «Պաշարներ» ստանդարտը կամ այլ համապատասխան ստանդարտ:
Օգուտները կամ վնասները, որոնք առաջանում են կենսաբանական ակտիվի վաճառքի հետ կապված ծախսումները՝ հանած իրական արժեքով սկզբնական ճանաչման պահին, ինչպես նաև կենսաբանական ակտիվի վաճառքի հետ կապված ծախսումները՝ հանած իրական արժեքի փոփոխությունից, ներառվում են այն ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, որում դրանք առաջացել են:
*Բերքատու բույսեր*
Բերքատու բույսերն այն կենսաբանական ակտիվներն են, որոնք բացառապես օգտագործվում են որոշակի ժամանակաշրջանների ընթացքում գյուղատնտեսական արտադրանք ստանալու նպատակով: Իրենց արտադրական կյանքի ավարտին դրանք սովորաբար ենթակա են դուրսգրման: Հասունանալուն պես, բացի գյուղատնտեսական արտադրանք տալուց, բերքատու բույսերի կենսաբանական փոխակերպումները այլևս նշանակալի չեն տնտեսական օգուտներ ստեղծելու հարցում և ապագա տնտեսական օգուտների ստացումը բացառապես պայմանավորված է դրանցից ստացվող գյուղատնտեսական արտադրանքով: Հետևաբար, մինչ հասունացումը, դրանք հաշվառվում են որպես սեփական ուժերով կառուցված հիմնական միջոցներ:
Բերքատու բույսերը հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները՝ համաձայն ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտի: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, ուղղակիորեն վերագրվող ծախսումները և կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության:
Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվները հասնում են իրենց արտադրական բերքատվությանը:

Բերքատու ծառերի գնահատված օգտակար ծառայության ժամկետներն հետևյալն են.

| | |
|---|---|
| Խաղողի որթ | 45 տարի |
| Ծիրանենի | 35 տարի |
| Դեղձենի | 20 տարի |
| Խնձորենի | 25 տարի |
| Ընկուզենի | 50 տարի |
| Բալենի | 32 տարի |
| Նշենի | 50 տարի |
| Սալորենի | 25 տարի |

## 3.7 Ներդրումային գույք

### 3.7.1. Սահմանում

Ներդրումային գույքը գույք է (հող կամ շենք, կամ շենքի մի մաս, կամ և՛ հող, և՛ շենք), որը պահվում է Ընկերության կողմից վարձակալությունից եկամուտ վաստակելու կամ դրա արժեքի աճի, կամ էլ միաժամանակ այդ երկու նպատակներով, այլ ոչ թե՝

ա) արտադրությունում օգտագործելու, ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման, կամ վարչական նպատակներով օգտագործելու համար, կամ

բ) սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար:

### 3.7.2. Չափում

Ներդրումային գույքը սկզբնապես չափվում է իր ինքնարժեքով (սկզբնական արժեքով):

Գործառնության հետ կապված ծախսումները ներառվում են սկզբնական չափման մեջ: Գնված ներդրումային գույքի ինքնարժեքը ներառում է դրա գնման գինը և ուղղակիորեն վերագրելի ցանկացած ծախսում:

Ներդրումային գույքի միավորը որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

### 3.7.3. Մաշվածություն

Ներդրումային գույքի միավորի մաշեցնող (մաշվածության միջոցով որպես ծախսում ճանաչման ենթակա) գումարը պարբերաբար բաշխվում է ակտիվի օգտակար ծառայության ընթացքում՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Հողի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Ներդրումային գույքի օգտակար ծառայությունը արտահայտված է ժամկետով:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

Շենքեր՝ 20-55 տարի:

### 3.7.4. Վերադասակարգումներ

Գույքը որպես ներդրումային վերադասակարգելը կամ հակառակը տեղի է ունենում այն և միայն այն դեպքում, երբ փոփոխվել է դրանց օգտագործումը, որի վկայությունները են՝

ա) Ընկերության կողմից գույքի զբաղեցումը սկսելը. այս դեպքում ներդրումային գույքը վերադասակարգվում է որպես հիմնական միջոց,

բ) Ընկերության կողմից գույքի զբաղեցումն ավարտելը. այս դեպքում Ընկերության կողմից զբաղեցված գույքը վերադասակարգվում է որպես ներդրումային գույք:

## 3.8 Վարձակալված ակտիվներ

Կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականություն

*Ընկերությունը որպես վարձակալ*

Կնքված ցանկացած նոր պայմանագրի դեպքում Ընկերությունը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- Պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացնելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Ընկերությանը,
- Ընկերությունն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Ընկերությունն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Ընկերությունն իրավունք ունի ուղղորդել, թե ինչպես և ինչ նպատակով ակտիվն օգտագործել ընթացքում:

*Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ*

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ Ընկերությունը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Ընկերությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Ընկերությունը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:
Ընկերությունը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

*Ընկերությունը որպես վարձատու*

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը ՖՀՄՍ 16-ի համաձայն համադրելի ժամանակաշրջանի համեմատ չի փոփոխվել:
Որպես վարձատու Ընկերությունը դասակարգում է իր վարձակալությունները որպես գործառնական կամ ֆինանսական:
Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական, եթե այն փոխանցում է հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքի հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և օգուտները և գործառնական , եթե նշվածը տեղի չի ունենում:

Մինչև 2019թ. հունվարի 1-ը կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ընկերությունը որպես վարձակալ

Ֆինանսական վարձակալություն

Վարձակալական պայմանագրի բնույթը դիտարկելիս և որոշելու համար արդյոք այն փոխանցում է վարձակալության տված ակտիվի սեփականության իրավունքի հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և օգուտները, ղեկավարությունը կիրառում է դատողություն: Դիտարկվող առանցքային գործոնները ներառում են վարձակալական ժամկետի երկարությունը ակտիվի տնտեսական ծառայության ժամկետի հետ համադրությամբ, նվազագույն վարձավճարների ներկա արժեքը ակտիվի իրական արժեքի հետ համադրությամբ և այն հանգամանքը, թե արդյոք վարձակալական ժամկետի վերջում Ընկերությունը ստանալու է ակտիվի նկատմամբ սեփականության իրավունք:
Հողի և շենքերի վարձակալության դեպքում նվազագույն վարձավճարները սկզբում բաշխվում են վարձակալության բաղադրիչներին՝ դրանցից յուրաքանչյուրին բաժին ընկնող մասի իրական արժեքին համամասնորեն: Այնուհետև յուրաքանչյուր բաղադրիչ առանձին գնահատվում է որպես ֆինանսական վարձակալություն դիտարկվելու հնարավորության տեսանկյունից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողը սովորաբար ունի անորոշ տնտեսական ծառայության ժամկետ:
Ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվների մաշվածության մեթոդները և օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ծանոթագրություն 2"3-ում:
Վարձավճարների տոկոսային տարրը հաշվեգրվում է շահույթին կամ վնասին վարձակալության ժամկետի ընթացքում՝ որպես ֆինանսական ծախս:

Գործառնական վարձակալություն

Մյուս բոլոր վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ: Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են որպես ծախս գծային հիմունքով: Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության ծախսերը, ծախսագրվում են իրականացման պահին:

## 3.9 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է, հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը ներառում է պաշարների ձեռք բերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսումները: Պաշարների ինքնարժեքը որոշվում է օգտագործելով միջին կշռված մեթոդը:

Վնասաբանական ակտիվներից փոխանցված գյուղատնտեսական բերքի սկզբնական արժեքը դա բերքահավաքի պահին իրական արժեքն է՝ հանած վաճառքի հետ կապված ծախսերը:

## 3.10 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած կամ հանած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

### *Ֆինանսական ակտիվներ*

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

- փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և որը ցույց է տալիս, թե իրական արժեքի փոփոխության արդյունքում ստացվող օգուտներն ու վնասները պետք է ճանաչվեն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, թե ուղղակիորեն սեփական կապիտալում:
Ընդհանուր առմամբ, Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվի արժեզրկման գնահատումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «Ֆինանսական ծախս» և «Ֆինանսական եկամուտ» հոդվածներում:

## I. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառությունները ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշվող չեն ակտիվ շուկայում: Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվելուց հետո հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և ժամանակին չվճարումը ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Համախառն հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

## II Մնացորդները դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցներ, բանկային հաշիվների մնացորդներ, որոնք ներկայացված են ֆինանսական ակտիվների «փոխառություններ և դեբիտորական պարտքեր» կատեգորիայում:

### ***<u>Ֆինանսական պարտավորություններ</u>***

Ընկերությունը ֆինանսական պարտավորությունները ներառում են փոխառությունները, ինչպես նաև առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

## I Փոխառություններ

Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ ներառյալ գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս:

## II Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

## 3.11 Արժեզրկում

*Հիմնական միջոցների*

Մաշվող ակտիվները վերանայվում են արժեզրկման համար, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Երբ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է դրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս՝ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև դրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ՝ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

*Ֆինանսական ակտիվների արժեզրկում*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, երբ առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվարկվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Հազար դրամ

| *Ֆինանսական պարտավորություններ* | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Վարկեր և փոխառություններ | 2,898,673 | 4,114,636 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր, այդ թվում շահութահարկ | 300,705 | 327,880 |
| Ընդամենը | 3,199,378 | 4,442,516 |

## 3.12 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

## 3.13 Շահութահարկ

Ընթացիկ հարկն իրենից ներկայացնում է տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի (վնասի) գծով վճարման (փոխհատուցման) ենթակա շահութահարկի գումարը: Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) պետք է չափվեն այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ընկերության հետաձգված հարկերը (հետաձգված հարկային պարտավորությունները և հետաձգված հարկային ակտիվները) պայմանավորված են ժամանակավոր տարբերությունների (հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ) և չօգտագործված հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ: Ժամանակավոր տարբերությունների հետ կապված հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակով օգտագործվող գումարների (հարկային բազայի) ժամանակավոր տարբերությունների վրա:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմնվելով հարկերի այն դրույքների վրա, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են իրացվել չօգտագործված հարկային վնասները և փոխհատուցումները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այն չափով, որքանով այլևս հավանական չէ, որ դրանց առնչվող հարկային օգուտները կիրացվեն:

## 3.14 Պետական շնորհներ

Պետական շնորհները ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ՝ ներկայացվելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պարտավորություններ բաժնում, այն պահին, երբ կա բավարար հավաստիացում որ կազմակերպությունը ստանալու է շնորհը և բավարարելու է դրան կից պայմանները:

Այն շնորհները որոնց հիմնական պայմանն է գնել, կառուցել կամ այլ կերպ ձեռքբերել երկարաժամկետ ակտիվ (ակտիվներին վերաբերող շնորհներ), սկզբնապես ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, իսկ հետագայում ճանաչվում են շահույթ/վնասում ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Այլ պետական շնորհները (եկամուտներին վերաբերող շնորհներ) սկզբնապես ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, իսկ հետագայում ճանաչվում են շահույթ/վնասում սիստեմատիկ հիմունքով՝ համապատասխան այն ծախսումների ծախս ճանաչմանը, որոնց փոխհատուցման համար նախատեսված են:

Պետական շնորհները, որոնք տրամադրվում են ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն, պետք է ճանաչվեն շահույթ/վնասում այն պահին, երբ դառնում են ստացման ենթակա>:

## 3.15 Պայմանագրերից հասույթ

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը

2 Բացահայտել կատարման պարտականությունները

3 Որոշել գործարքի գինը

4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև

5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը (ները) բավարարված են:

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին, կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Ընկերությունը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նման ձևով, եթե Ընկերությունը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Ընկերությունը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Հասույթը գոյանում է հիմնականում՝

- բնական հյութերի, նեկտարների, կոնցենտրատների, պահածոյացված բանջարեղենի և մրգերի վաճառքից,
- ջեռուցման համակարգերի վաճառքից և տեղադրումից,
- բեռնափոխադրման ծառայությունների մատուցումից:

*Ապրանքների վաճառք*

Ֆիքսված գնով ապրանքների վաճառքից եկամուտը ճանաչվում է, երբ Ընկերությունն ակտիվների վերահսկողությունը հաճախորդներին է փոխանցում, երբ ապրանքները հաճախորդին են հասցվում և երբ հաճախորդի՝ ապրանքը չընդունելու վրա ազդող չիրականացված պարտականություններ առկա չեն: Հանձնումը կատարվում է, երբ ապրանքներն առաքվել են կոնկրետ հասցեով, մաշվածության և կորստի ռիսկերը փոխանցվել են հաճախորդին և այն դեպքում, երբ կա՛մ հաճախորդը գնման պայմանագրի համաձայն ընդունել է ապրանքները, կա՛մ էլ երբ Ընկերությունն օբյեկտիվ ապացույցներ ունի առ այն, որ ընդունման բոլոր չափանիշները բավարարված են: Փոխանցված ապրանքների հաշիվ-ապրանքագրերը ենթակա են վճարման հաճախորդից ստանալու պահին: Հասույթը ճանաչվում է այն գումարով, որն արտահայտում է այն կատարման պարտականությունը, որով Ընկերությունն ակնկալում է իրավունք ստանալ այդ ապրանքների հանդեպ:

*Ծառայությունների մատուցում*

Ընկերությունը ծառայություններ է մատուցում՝ համաձայն ֆիքսված գներով պայմանագրերի: Ծառայությունների մատուցումից ստացված հասույթը ճանաչվում է այն հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, որի ժամանակ ծառայությունները մատուցվել են: Ֆիքսված գնով պայմանագրերի դեպքում հասույթը ճանաչվում է՝ հիմնվելով հաշվետու ժամանակաշրջանի վերջում փաստացի մատուցված ծառայության վրա, որպես մատուցվելիք ընդհանուր ծառայությունների մի մաս, քանի որ հաճախորդն օգուտները միաժամանակ է ստանում և օգտագործում:

Հասույթի և սկզբնական արժեքների գնահատականները կամ ավարտվող գործընթացի մասշտաբները վերանայվում են այն դեպքում, երբ հանգամանքները փոխվում են: Գնահատված հասույթում կամ սկզբնական արժեքներում կատարված աճը կամ նվազումն արտացոլվում են այն ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, որի ընթացքում վերանայման կարիք առաջացրած հանգամանքները հայտնի են դառնում ղեկավարությանը: Ֆիքսված գնով պայմանագրերի դեպքում հաճախորդը ֆիքսված գումար է վճարում՝ հիմնվելով վճարման ժամանակացույցի վրա: Հաճախորդներին ամսական սկզբունքով հաշիվ-ապրանքագրեր են դուրս գրվում, իսկ կատարման պարտականությունը ենթակա է վճարման, երբ հաշիվ-ապրանքագիրը դուրս է գրվում:

## 3.16 Անընդհատության սկզբունքը.

Ընկերությունը սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստել է անընդհատության սկզբունքով:

## 4 Հիմնական միջոցներ

հազար դրամ

| | Հող, շենքեր և շինություններ | Փոխանցող հարմարանքներ, մեքենասարքավոր., տրանսպորտային միջոցներ | Արտադրական և տնտեսական գույք, այլ և օգտագործման համար ոչ մատչելի ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| *Սկզբնական արժեք* | | | | |
| 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2,547,960 | 6,196,660 | 1,301,037 | 10,045,657 |
| Ճշգրտում | - | 480 | (15,940) | (15,460) |
| Ավելացում | 2,270 | 43,856 | 68,496 | 114,622 |
| Ներքին տեղաշարժ | (161,883) | (98,384) | 260,267 | - |
| Օտարում և Նվազեցում | - | - | (267,080) | (267,080) |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2,388,347 | 6,142,612 | 1,346,780 | 9,877,739 |
| *Կուտակված մաշվածություն և արժեզրկում* | | | | |
| 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 594,165 | 4,183,003 | 456,449 | 5,233,617 |
| Ճշգրտում | - | - | - | - |
| Տարվա ծախս | 58,717 | 209,759 | 40,285 | 308,761 |
| Ներքին տեղաշարժ | - | (19,734) | 19,734 | - |
| Նվազեցում | (45,344) | (78,972) | (3,207) | (127,523) |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 607,538 | 4,294,056 | 513,261 | 5,414,855 |
| *Հաշվեկշռային արժեք* | | | | |
| 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 1,953,795 | 2,013,657 | 844,588 | 4,812,040 |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 1,780,809 | 1,848,556 | 833,519 | 4,462,884 |

- ✓ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հող, շենքեր և շինություններ» դասում ներառված են 565.671 հա ընդհանուր մակերեսով հողամաս՝ 929,460 հազար դրամ արժեքով (2020 թ. դեկտեմբերի 31-ի. դրությամբ՝ 565.671 հա ընդհանուր մակերեսով հողամաս):
- ✓ Հիմնական միջոցներ դասում 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառվում են 1,077,548 հազար դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ, որոնք ամբողջությամբ մաշված են:

## Մաշվածության ծախսը բաշխվել է հետևյալ կերպ՝

**հազար դրամ**

| | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Արտադրական ծախսերին | 278,702 | 284,170 |
| Իրացման ծախսերին | 13,821 | 15,348 |
| Վարչական ծախսերին | 16,238 | 17,141 |
| Ընդամենը | 308,761 | 316,659 |

*Հիմնական միջոցների վերագնահատում*

2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության հողերը, շենքերը և սարքավորումները ներկայացվել են վերագնահատված արժեքով: 2012թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ վերագնահատումն իրականացվել է լիցենզավորված անկախ գնահատող կազմակերպության կողմից: Շուկայական արժեքը որոշվել է համեմատական և փոխարինման արժեքի (ծախսերի վերլուծության) մեթոդների հիման վրա:

Ղեկավարությունը համոզված է, որ հողերի, շենքերի և սարքավորումների իրական արժեքները էականորեն չեն փոփոխվել:

Համեմատական մեթոդով հաշվարկելիս իրական արժեքը որոշվում է՝ հիմնվելով ներկա ժամանակաշրջանում նույն աշխարհագրական դիրքում գտնվող նման անշարժ գույքի վաճառքների տվյալների հիման վրա:
Փոխարինման մեթոդով հաշվարկելիս շուկայական արժեքը որոշվում է՝ հիմնվելով նման ակտիվի կառուցման համար անհրաժեշտ ընդհանուր ծախսերի վրա՝ հանած գնահատված մաշվածությունը, որը ներառում է գնահատման ամսաթվի դրությամբ ֆիզիկական, տնտեսական և ֆունկցիոնալ մաշվածությունները:

Եթե Ընկերության հողերը, շենքերը և սարքավորումները ներկայացված լինեին սկզբնական արժեքով հանած կուտակված մաշվածությունը, ապա 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրանց հաշվեկշռային արժեքները կկազմեին 2,716,190 հազար դրամ (2020թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,083,915 հազար դրամ):

## 5 Ոչ նյութական ակտիվներ

հազար դրամ

| | Լիցենզիաներ, վստահագրեր, հեղինակային իրավունքներ | Համակարգչային ծրագիր | Բանաձևեր, մոդելներ, նախագծեր, բաղադրատոմսեր և փորձանմուշներ | Այլ և անավարտ ՈՆԱ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| *Սկզբնական արժեք* | | | | | |
| 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 5,853 | 10,244 | 4,815 | 10,210 | 31,122 |
| Ճշգրտում | - | - | - | - | - |
| Ներխմբային վերադասակարգում | - | - | 290 | (290) | - |
| Ավելացում | - | - | - | 2,849 | 2,849 |
| Նվազեցում | - | - | - | - | - |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 5,853 | 10,244 | 5,105 | 12,769 | 33,971 |
| *Կուտակված մաշվածություն և արժեզրկում* | | | | | |
| 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 3,159 | 7,911 | 3,917 | 4,193 | 19,180 |
| Ճշգրտում | - | - | | | |
| Տարվա ծախս | 300 | 533 | 170 | 3,532 | 4,535 |
| Նվազեցում | - | | | | |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 3,459 | 8,444 | 4,087 | 7,725 | 23,715 |
| *Հաշվեկշռային արժեք* | | | | | |
| 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2,694 | 2,333 | 898 | 6,017 | 11,942 |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2,394 | 1,800 | 1,018 | 5,044 | 10,256 |

## 6 Բերքատու բույսեր

հազար դրամ

| | Բերքատու ծառեր | Ընդամենը |
|---|---|---|
| *Սկզբնական արժեք* | | |
| 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 974,199 | 974,199 |
| Ավելացում | 47,092 | 47,092 |
| Օտարում և Նվազեցում | - | - |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 1,021,291 | 1,021,291 |
| *Կուտակված մաշվածություն և արժեզրկում* | | |
| 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 109,951 | 109,951 |
| Տարվա ծախս | 37,412 | 37,412 |
| Նվազեցում | - | - |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 147,363 | 147,363 |
| *Հաշվեկշռային արժեք* | | |
| 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 864,248 | 864,248 |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 873,928 | 873,928 |

Այգիներում առկա պտղատու ծառերի վերաբերյալ քանակական տվյալները ներկայացված են ստորև.

Հազար դրամ

| | Տարիքը 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2021թ. | 2020թ. |
|---|---|---|---|
| Դեղձի տնկի | 8-20 տարի | 10,012 | 10,012 |
| Ծիրանի տնկի | 2-19 տարի | 10,712 | 10,712 |
| Խնձորի տնկի | 5-8 տարի | 18,650 | 18,650 |
| Խաղողի որթ | 12 տարի | 55,690 | 55,690 |
| Սև սալորենի | 6 տարի | 9,050 | 9,050 |
| Կեռասի տնկի | 6-11 տարի | 3,750 | 3,750 |
| Պիստակի տնկի | 3 տարի | 2,830 | 2,830 |
| Այլ տնկիներ | 6-21 տարի | 2,768 | 2,768 |
| | | 113,462 | 113,462 |

## 7 Հարկային ակտիվներ (պարտավորություններ)

հազար դրամ

| | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Նվազագույն շահութահարկ | - | - |
| Հետաձգված շահութահարկ | (353,632) | (211,634) |
| Ընդամենը | (353,632) | (211,634) |

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ

| | 2021թ. հունվարի 01-ի դրությամբ | Ճանաչված սեփական կապիտալում | Ճանաչված ֆինանսական արդյունքում | 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|---|
| *Հետաձգված հարկային ակտիվներ* | | | | |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 5,810 | - | - | 5,810 |
| Աշխատակիցներին փոխհատուցումների գծով | 2,419 | - | 2,633 | 5,052 |
| Հարկային վնաս | 183,239 | | (144,720) | 38,519 |
| Պարտքային կորուստ | - | - | 1,156 | 1,156 |
| Տրված փոխառություններ | - | - | 543 | 543 |
| | 191,468 | - | (140,388) | 51,080 |
| *Հետաձգված հարկային պարտավորություններ* | | | | |
| Բերքատու բույսեր | 83,569 | - | (2,649) | 80,920 |
| Հիմնական միջոցների գծով | 313,917 | - | 3,018 | 316,935 |
| Ֆինանսական ներդրումներ | 5,616 | 1,257 | (16) | 6,857 |
| | 403,102 | 1,257 | 353 | 404,712 |
| Ընդամենը | (211,634) | (1,257) | (140,741) | (353,632) |

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ

| | 2020թ. հունվարի 01-ի դրությամբ | Ճանաչված սեփական կապիտալում | Ճանաչված ֆինանսական արդյունքում | 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|---|
| *Հետաձգված հարկային ակտիվներ* | | | | |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 10,485 | - | (4,675) | 5,810 |
| Աշխատակիցներին փոխհատուցումների գծով | 2,419 | - | - | 2,419 |
| Հարկային վնաս | 194,881 | - | (11,642) | 183,239 |
| | 207,785 | - | (16,317) | 191,468 |
| *Հետաձգված հարկային պարտավորություններ* | | | | |
| Բերքատու բույսեր | 84,959 | - | (1,390) | 83,569 |
| Հիմնական միջոցների գծով | 311,610 | - | 2,307 | 313,917 |
| Ֆինանսական ներդրումներ | 7,273 | - | (1,657) | 5,616 |
| | 403,842 | | (740) | 403,102 |
| Ընդամենը | (196,057) | - | (15,577) | (211,634) |

## 8 Այլ ոչ ընթացիկ ակտիվներ

Հազար դրամ

| | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | Ավելացում | Նվազում | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|---|
| Լիցենզ | 18,329 | - | - | 18,329 |
| Լիցենզի մաշվածություն | (2,444) | (1,833) | - | (4,277) |
| Ընդամենը | 15,885 | (1,833) | - | 14,052 |

## 9 Պաշարներ

Հազար դրամ

| | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Հումք և նյութեր | 254,882 | 270,294 |
| Անավարտ արտադրանք | 3,293 | - |
| Պատրաստի արտադրանք | 550,952 | 590,490 |
| Ապրանքներ | 267,930 | 277,236 |
| Ընդամենը | 1,077,057 | 1,138,020 |

## 10 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ

| | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 558,225 | 607,339 |
| Տրված կանխավճարներ | 157,829 | 154,667 |
| Տրամադրված փոխառություն * | 11,874 | 3,410 |
| Այլ | 4,993 | 11,304 |
| | 732,921 | 776,720 |
| Դեբիտորական պարտքեր պետական բյուջեի հանդեպ | 9,637 | - |
| Ընդամենը | 742,558 | 776,720 |

Առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրելիությունը որոշելիս հաշվի է առնվում պարտքի մարման ժամանակացույցի ցանկացած փոփոխություն՝ սկսած պարտքերի առաջացման պահից մինչև հաշվետու ամսաթիվը:

Ընկերության սպասվող պարտքային կորուստները գնահատվել է 6,423 հազար դրամ, իսկ անհուսալի դեբիտորական պարտքերի մասով ստեղծված պահուստը 32,277 հազար դրամ: Առևտրայի դեբիտորական պարտքերը ներկայացված են զուտ արժեքով: Ապրանքների վաճառքի և ծառայությունների մատուցումից առաջացած առևտրային դեբիտորական պարտքերի միջին տևողությունը գնահատվում է 60 օր: Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

*Տրամադրված անտոկոս փոխառություն*

| | Արժույթ | | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|---|
| ՀՀ քաղաքացի փոխկապակցված անձից | Հայ. Դրամ | Անվանական արժեք | 14,890 | 3,410 |
| | | Զկատռական ֆինանսական եկամուտներ | (3,016) | - |
| | | | 11,874 | 3,410 |

## 11 ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

Դրամական հոսքերի հաշվետությունում ներկայացված դրամական միջոցները և դրա համարժեքները ներառում են հետևյալը.

Հազար դրամ

| | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Հաշիվներ բանկում | 6,205 | 17,964 |
| Կանխիկ դրամ | 681 | 31 |
| Ընդամենը | 6,886 | 17,995 |

## 12 Բաժնետիրական կապիտալ

**հազար դրամ**

| | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնեմասեր | 525,050 | 525,050 |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ չվճարված բաժնետիրական կապիտ | - | - |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնետիրական կապիտալի զուտ գումար | 525,050 | 525,050 |

| | |
|---|---|
| **Բաժնետերեր** | **Գումար** |
| *Էդիկ Ղազարյան* | *500,000,000 ՀՀ դրամ* |
| *Ռիփսիմե Կառնկյան* | *25,050,000 ՀՀ դրամ* |

***Պահուստային կապիտալ***

Համաձայն Բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենքի և Ընկերության կանոնադրության՝ Ընկերության բաշխման ենթակա գումարները սահմանափակվում են չբաշխված շահույթի մնացորդով, ինչպես նաև գրանցված է նաև Ընկերության՝ հրապարակման ենթակա ֆինանսական հաշվետվություններում:

Համաձայն օրենսդրության՝ Ընկերությունը պետք է ստեղծի պահուստ իր կուտակված շահույթի հաշվին, որը հավասար կլինի բաժնետիրական կապիտալի նվազագույնը 15 տոկոսին: Պահուստի նպատակն է ապագա կորուստների ծածկումը: Համաձայն կանոնադրության 9-րդ պարբերության Ընկերությունում ստեղծվում է պահուստային ֆոնդ ոչ պակաս, քան կանոնադրական կապիտալի 15 տոկոսը: 2021 թվականի դրությամբ այն կազմում է 78,758 հազար դրամ:

## 13 Վերագնահատման պահուստ

Վերագնահատման պահուստը առաջանում է հողի, շենքերի և սարքավորումների վերագնահատման արդյունքում: Վերագնահատված ակտիվների օտարման ժամանակ դրանց գծով վերագնահատման պահուստը հաշվեգրվում է ուղղակիորեն կուտակված շահույթին: Վերագնահատման պահուստը ներկայացված է սեփական կապիտալում՝ համապատասխան հետաձգված հարկերից դուրս:

## 14 Վարկեր, փոխառություններ և լիզինգ

### *14.1 Բանկային վարկեր*

| հազար դրամ | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| *Ոչ ընթացիկ պարտավորություններ* | | |
| Երկարաժամկետ վարկեր | 1,106,772 | 2,399,381 |
| Չկրած տոկոսային ծախսեր ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով | (45,311) | (131,902) |
| | 1,061,461 | 2,267,479 |
| Կարճաժամկետ վարկեր | 1,616,974 | 1,653,682 |
| Չկրած տոկոսային ծախսեր ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունների գծով | (98,576) | (135,130) |
| | 1,518,398 | 1,518,552 |
| Ընդամենը | 2,579,859 | 3,786,031 |

Բանկային վարկերը ստացված են ռեզիդենտ բանկերից և Միջազգային ֆինանսական հաստատություններից:

- ✓ *Սևծովյան Առևտրի և Զարգացման Բանկ BSTDB(Black Sea Trade & Development Bank)*

| Արժույթ | Տոկոսադրույք | Մարման տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|---|
| ԵՎՐՈ | EURIBOR +5.7% | 2022 | 479,872 | 862,815 |

- ✓ *Միջազգային ֆինանսական կորպորացիա IFC (International Finance Corporation)*

| Արժույթ | Տոկոսադրույք | Մարման տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|---|
| ԱՄՆ դոլար | LIBOR +6% | 2022 | 531,371 | 873,882 |

- ✓ *Ռեզիդենտ բանկեր*

| | Արժույթ | % | Մարման տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|---|---|
| ԲԱՆԿ [1] | ԱՄՆ դոլար | 7.5% | 2023 | 860,529 | 1,041,270 |
| ԲԱՆԿ [2] | ԱՄՆ դոլար | 9% | 2022-2025 | 255,229 | 449,454 |
| ԲԱՆԿ [3] | ԱՄՆ դոլար | 8.5% | 2022-2025 | 373,250 | 358,725 |
| | ՀՀ դրամով | 12-13% | 2022 | 79,608 | 199,885 |

Այլ տեղեկատվություն վարկերի մասին.

- ✓ ԲԱՆԿ [1]-ից ստացված վարկի ապահովման առարկա է հանդիսացել Ագրիննո ՍՊԸ-ի հետ 2018 թվականին կնքված կորպորատիվ երաշխավորության պայմանագիրը, ինչպես նաև նույն ժամանակահատվածում կնքված անշարժ գույքի հաջորդող գրավի (հիփոթեքի) պայմանագիրը, որոնցով Ագրիննո ՍՊԸ-ն հանդես է եկել համապատասխանաբար որպես երաշխավոր և գրավատու: Արմավիրի մարզում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույքերի (երեք սեփականության վկայականներ):
- ✓ ԲԱՆԿ [2]-ից ստացված վարկի ապահովման առարկա է հանդիսացել Բանկի հետ 2018 թվականին կնքված Գլխավոր վարկային պայմանագրի շրջանակներում կնքված մեկ անշարժ գույքի հաջորդող գրավի (հիփոթեքի) պայմանագիրը և երեք Երաշխավորության պայմանագրերը: Ինչպես նաև Ընկերությունը դրամական պահանջների և/կամ այլ պարտքերի կատարման ապահովման նպատակով գրավ է դնում բանկային երաշխիքի և/կամ ակրեդիտիվի ապահովությամբ ապագայում ձեռքբերվելիք ներմուծված ապրանքները: Ապագայում ձեռքբերվելիք ներմուծված ապրանքների ցանկը սահմանվում է Վարկի տրամադրման պայմաններով կամ այլ պայմանագրով:
- ✓ ԲԱՆԿ [3]-ի հետ վարկային հարաբերությունները կարգավորվում են 2015 թվականին կնքված Հիմնական վարկային պայմանագրի շրջանակներում: Այդ Հիմնական պայմանագրի շրջանակներում կնքված բոլոր պայմանագրերը ապահովված են գրավով և կնքված են առանձին պայմանագրեր: ՀՀ կառավարության աջակցությամբ «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի» շրջանակներում Բանկի և Ընկերության միջև կնքվել են զգալի քանակի վարկային պայմանագրեր: Սուբսիդավորմա գումարը փոփոխական է:

*14.2 Փոխառություններ*

| *Ոչ ընթացիկ պարտավորություններ* | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Երկարաժամկետ փոխառության համախառն գումար | 192,055 | 208,610 |
| Չկրած տոկոսային ծախսեր | (20,173) | (31,199) |
| | 171,882 | 177,411 |
| Կարճաժամկետ փոխառության համախառն գումար | 153,260 | 181,194 |
| Չկրած տոկոսային ծախսեր | (17,924) | - |
| | 135,336 | 181,194 |
| | 307,218 | 358,605 |

Ներգրավված ցպահանջ և ժամկետային անտոկոս պայմանագրերը գրավով ապահովված չեն:

*14.3 Ֆինանսական վարձակալություն*

| հազար դրամ | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| *Ոչ ընթացիկ պարտավորություններ* | | |
| Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ | 10,588 | 12,678 |
| Չկրած տոկոսային ծախսեր ֆինանսական վարձակալության գծով | (1,093) | (1,507) |
| | 9,495 | 11,171 |
| Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս | 2,050 | - |
| Չկրած տոկոսային ծախսեր ֆինանսական վարձակալության գծով | - | - |
| | 2,050 | - |
| | 11,545 | 11,171 |

Ընկերությունը 2019 թվականին կնքել է «Ֆինանսական վարձակալության (լիզինգի)» պայմանագիր ԲԱՆԿ [2]-ի հետ:

- ✓ Թիվ LAB18-00300501 պայմանագրով ձեռք է բերվել սարքավորում՝ 16,756 հազար դրամ ընդհանուր արժեքով: Տարեկան տոկոսադրույքը կազմում է 11 տոկոս: Պայմանագրի գործողության ժամկետն է 2027 թվականը:

Ընկերությունը կնքել է «Ֆինանսական վարձակալության (լիզինգի)» պայմանագիր Վարկային կազմակերպություն [1]-ի հետ:

- ✓ Թիվ 1902043-1 պայմանագրով ձեռք է բերվել սարքավորումներ՝ 15,570 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով: Սարքավորումը ներմուծվել է Հայաստան 2022 թվականին: 2021 թվականի ընթացքում լիզինգի պայմանագիրը վերաձևակերպվել է վարկի պայմանագրի 9 տոկոս տարեկան տոկոսադրույքով:

## 15 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

**հազար դրամ**

| | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 76,265 | 167,652 |
| Հատուցումներ աշխատակիցներին | 36,210 | 35,998 |
| Վճարվելիք սոց. հատկացումներ | 625 | 443 |
| Կանխավճարներ հաճախորդներից | 160,172 | 100,338 |
| Հարկերի գծով պարտավորություններ՝ բացառությամբ շահութահարկի | 10,721 | 20,697 |
| Ընթացիկ պահուստներ | 14,630 | |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 2,082 | 2,752 |
| Ընդամենը | 300,705 | 327,880 |

Այրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է մեկ ամիս: Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

## 16 Հասույթ

հազ.դրամ

| | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Արտադրանքի իրացումից հասույթ | 2,105,689 | 1,732,745 |
| Ապրանքների իրացումից հասույթ | 56,924 | 147,900 |
| Աշխատանքների կատարումից հասույթ | 639 | 1,048 |
| Ծառայության մատուցումից հասույթ | 106,225 | 59,350 |
| | 2,269,477 | 1,941,043 |

## 17 Վաճառքի ինքնարժեք

հազար դրամ

| | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Վաճառված արտադրանքի ինքնարժեք | 1,303,870 | 1,108,262 |
| Վաճառված ապրանքների ինքնարժեք | 41,099 | 113,995 |
| Կատարված աշխատանքների ինքնարժեք | - | 262 |
| Ծառայության մատուցման ինքնարժեք | 47,795 | 41,693 |
| | 1,392,764 | 1,264,212 |

## 18 Այլ եկամուտ

հազ դրամ

| | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Այլ պաշարների վաճառքից եկամուտ | 161,116 | 77,956 |
| Ներած պարտավորություն վարկերի գծով | 679,394 | - |
| Ծախսի փոխհատուցում | 1,800 | - |
| Այլ | 449 | 2,150 |
| | 842,759 | 80,106 |

## 19 Այգիների մշակման և պահպանման ծախսեր

հազ դրամ

| | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Հատուցումներ աշխատակիցներին | 19,080 | 41,129 |
| Հիմնական միջոցների մաշվածության | 55,183 | 39,866 |
| Ոռոգման և ջրի ծախս | 15,332 | 17,591 |
| Վարձակալություն | 2,800 | 3,329 |
| Նյութածախս | 13,454 | 11,235 |
| Այլ | 3,856 | 1,432 |
| | 109,705 | 114,582 |

## 20 Իրացման ծախսեր

**հազ դրամ**

| | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Հատուցումներ աշխատակիցներին | 74,658 | 82,717 |
| Հիմնական միջոցների մաշվածության, նորոգման և սպասարկման ծախսեր | 15,294 | 17,029 |
| Արտադրանքի, ապրանքների փաթեթավորման, պահպանման ծախսեր | 2,349 | 1,171 |
| Տրանսպորտի և ապահովագրության ծախսեր | 100,384 | 80,083 |
| Մարքեթինգի և գովազդի ծախսեր | 3,542 | 7,604 |
| Այլ | 14,336 | 12,302 |
| | 210,563 | 200,906 |

## 21 Վարչական ծախսեր

**հազար դրամ**

| | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Հատուցումներ աշխատակիցներին | 69,870 | 77,838 |
| Հիմնական միջոցների մաշվածության, վերանորոգման ծախսեր | 21,432 | 19,011 |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | 4,576 | 2,685 |
| Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր | 2,095 | 2,159 |
| Գրասենյակային և կոմունալ ծախսեր | 7,971 | 6,939 |
| Խորհրդատվական ծախսեր | 980 | 5,136 |
| Բանկային,ապահովագրության ծախսեր | 1,519 | 1,409 |
| Չփոխհատուցվող հարկերից ծախսեր | 4,943 | 5,355 |
| Այլ | 2,025 | 3,651 |
| | 115,411 | 124,183 |

## 22 Այլ ծախսեր

**հազար դրամ**

| | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Այլ պաշարների օտարումից ծախսեր | 133,304 | 63,713 |
| Պաշարների արժեքի փոփոխությունից ծախսսեր, դեբիտորական պարտքերի կորուստների գծով ծախսեր | 293 | 51 |
| Տույժեր, տուգանքներ, դատական ծախսեր | 1,792 | 1,258 |
| Արժեքների պակասորդներ և փչացումից կորուստներ | 2,731 | 2,807 |
| Հ/Մ պահպանման, յուծարման ծախսեր | 105,140 | 109,913 |
| Այլ | 26,169 | 5,313 |
| | 269,429 | 183,055 |

## 23 Ֆինանսական հոդվածներ

**հազար դրամ**

| | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Տոկոսային եկամուտներ | 4 | - |
| Տոկոսային ծախսեր | (302,901) | (253,235) |
| Այլ ֆինանսական ծախսեր | (9,443) | - |
| | (312,340) | (253,235) |

## 24 Այլ ոչ գործառնական շահույթ/վնաս

հազար դրամ

| | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից եկամուտ | 710,497 | 436,418 |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից ծախսեր | (405,619) | (869,663) |
| Հիմնական միջոցների օտարումից եկամուտ | 1,033 | 167 |
| Հիմնական միջոցների օտարումից ծախսեր | (540) | (134) |
| Ոչ ընթացիկ նյութական և ՈՆԱ վերաչափումից կորուստներ | (265,393) | - |
| Անհատույց տրված ակտիվներից ծախսեր | (2,305) | (2,571) |
| | 37,673 | (435,783) |

## 25 Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)

հազար դրամ

| | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Ընթացիկ հարկ | - | |
| Հետաձգված հարկ | 135,740 | - |
| Ընդամենը | 135,740 | - |

2021թ. Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը 18 տոկոս է (2020թ.՝ 18%):

**Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.**

Հազար դրամ

| | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | Արդյունավետ հարկային դրույքաչափ (%) | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | Արդյունավետ հարկային դրույքաչափ (%) |
|---|---|---|---|---|
| Շահույթը մինչև հարկումը | 800,370 | | (451,654) | |
| Շահութահարկի հաշվարկ սահմանված հարկային դրույքով | 144,067 | 18.00 | (81,298) | (18.00) |
| Չնվազեցվող / չհարկվող հոդվածներ | (8,327) | (1.04) | 81,298 | 18.00 |
| Հարկային վնասի այսմանաչում | | | | |
| Շահութահարկի գծով ծախս/ (փոխհատուցում) | 135,740 | 16.96 | - | - |

## 26 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի և այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք համարվում են ընդունելի տվյալ հանգամանքներում:

Ընկերությունը կատարում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Հաշվապահական գնահատումները, սակայն, երբեմն չեն համապատասխանում իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

*Դեբիտորական պարտքերի և կանխավճարների վերականգնում*

Դեբիտորական պարտքերի մնացորդը ներառում է նաև պետական բյուջեի հանդեպ ունեցած դեբիտորական պարտքերը: Ղեկավարության համոզմամբ պետական բյուջեի հանդեպ ունեցած դեբիտորական պարտքերն ամբողջովին փոխհատուցվող են:

## 27 Պայմանական պարտավորություններ

### 27.1 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացրած գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով:

Այնուամենայնիվ, շուկայական ավելի խիստ ցնցումների պայմաններում Հայաստանի տնտեսությունը, ինչպես նաև Ընկերությունը կարող են ընկնել այդ ճգնաժամի ազդեցության տակ, ինչի հետևանքները կարող են լինել նշանակալի: Ընկերության վրա հնարավոր հետևանքները կարող են ներառել անվճարունակությունը, բուլացած հեղինակությունը, ապրանքների և ծառայությունների վաճառքի, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ ընկերության ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքների վրա:

### 27.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում:

### 27.3 Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ պահանջում է մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ կատարել է համապատասխան հատկացումներ հարկային պարտավորությունների գծով՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա:

### 27.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ընկերությունը բավարարում է ՀՀ կառավարության պահանջները՝ կապված շրջակա միջավայրի հետ և չունի պարտավորություններ կապված շրջակա միջավայրի հետ:

### 27.5 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է երկու բաժնետերերի կողմից որոնց պատկանում է ընկերության բաժնետոմսերի _100__ տոկոսը:

### 27.6 Իրավական հարցեր

Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման պահին դատական ատյաններում գտնվող հաշվեկշռի վրա էական ազդեցություն ունեցող դատական գործեր չկան:

### 27.7 Ընկերության հետ փոխկապակցված անձիք

- ✓ Ղազարյան Էդիկ Սմբատի-Հիմնադիր, Նոյան ՍՊԸ՝ /ՌԴ/ Հիմնադիր,
- ✓ Ղազարյան Վահե Էդիկի-Գլխավոր տնօրեն, Էկոներկ ՍՊԸ՝ Համահիմնադիր, Ագրիկո ՍՊԸ՝ Հիմնադիր,
- ✓ Ղազարյան Մերի Էդիկի-Գործադիր տնօրեն, Նովոտեք ՍՊԸ՝ Հիմնադիր:

### 27.8 Գործարքներ անձնակազմի հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը՝

**հազար դրամ**

| | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Աշխատավարձ և պարգևատրումներ՝ | 63,295 | 64,301 |

Հիմնական անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը՝

| | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Աշխատավարձ | 353,628 | 320,513 |
| Արձակուրդային | 20,167 | 15,678 |
| Պարգևատրումներ | 2,838 | 3,316 |
| Ապահովագրություն/ գործատուի կողմից | - | - |
| Կուտակային ֆոնդին հատկացումներ | - | - |
| Այլ | 3,426 | 3,612 |

## 28. Ֆինանսական գործիքներ

28.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականության դրույթներ.

Ֆինանսական ակտիվների, ֆինանսական պարտավորությունների և բաժնային գործիքների յուրաքանչյուր դասի համար կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, ընդունված մեթոդների մանրամասները և նկամուտների ու ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն 3-ում:

Ֆինանսական գործիքների կատեգորիաներ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ակտիվների և պարտավորությունների մնացորդները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

***Ֆինանսական ակտիվներ***

*(հազ.դրամ)*

| | 2021թ.դեկտեմբերի 31-ի ավարտված տարի | 2020թ.դեկտեմբերի 31-ի ավարտված տարի |
|---|---|---|
| Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ (տրված փոխառություններ) | 11,874 | 3,410 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 563,218 | 618,643 |
| Բանկային ավանդներ | - | - |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 6,886 | 17,995 |
| Ընդհանուր ֆինանսական ակտիվներ | 581,978 | 640,048 |

***Ֆինանսական պարտավորություններ***

*(հազ.դրամ)*

| | 2021թ.դեկտեմբերի 31-ի ավարտված տարի | 2020թ.դեկտեմբերի 31-ի ավարտված տարի |
|---|---|---|
| Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ. | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 11,545 | 11,171 |
| | 129,187 | 206,402 |
| Ընդհանուր ֆինանսական պարտավորություններ | 140,732 | 217,573 |

## 29. Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ընկերությունը ենթարկվում է ֆինանսական գործիքների հետ կապված տարբեր ռիսկերի: Ռիսկերի հիմնական տեսակներն են շուկայական ռիսկը, վարկային ռիսկը և իրացվելիության ռիսկը: Ընկերությունը ֆինանսական ակտիվների ակտիվ առևտուր չի իրականացնում սպեկուլյատիվ նպատակներով և չի գրում օպցիոններ:

Ամենաէական ֆինանսական ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, նկարագրված են ստորև:

## Ֆինանսական ռիսկի գործոններ

### ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման արդյունքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես արժութային ռիսկի, որը բխում է ինչպես իր գործառնական, այնպես էլ ֆինանսական գործունեությունից:
Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ շուկայական գների փոփոխությունները, ինչպիսիք են արտարժույթի փոխարժեքները, տոկոսադրույքները, բաժնետոմսերի գները, կազդեն Ընկերության շահույթ կամ վնասի և ֆինանսական գործիքների արժեքների վրա: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է շուկայական ռիսկին ենթարկվածությունը պահպանել ընդունելի սահմաններում՝ միաժամանակ օպտիմիզացնելով հատույցը: Ընկերությունը իր շուկայական ռիսկերը չի հեջավորում:

*Արժութային ռիսկ*

Ընկերությունը ենթարկված է արտարժութային ռիսկին արտարժույթային փոխառությունների և արտարժութային դրամական մնացորդների գծով:

**Արտարժութային ռիսկին ենթարկվածությունը**

Ընկերության ենթարկվածությունը արտարժութային ռիսկին ներկայացված է ստորև՝ ըստ պայմանական (անվանական) գումարների:

| հազ. դրամ | Արտարժույթ արտահայտված 31.12.2021թ | Արտարժույթ արտահայտված 31.12.2020թ |
|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 6,886 | 17,995 |
| Կարճաժամկետ փոխառություններ | 11,874 | 3,410 |
| **Զուտ ենթարկվածություն** | 18,760 | 21,405 |

Տարվա ընթացքում կիրառված միջին փոխարժեքներ:

| Դրամով | Միջին փոխարժեքներ | | Հաշվետու ամսաթվի փոխարժեք | |
|---|---|---|---|---|
| | 2021 | 2020 | | |
| | 12 ամիս | 12 ամիս | 31.12.2021թ | 31.12.2020թ |
| 1 Դոլար | 503.81 | 489.20 | 480.14 | 522.59 |

### բ) Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը Ընկերության կողմից իր պարտավորությունները չկատարելու հետևանքով Ընկերության կողմից ֆինանսական կորուստներ կրելու ռիսկն է: Այս ռիսկի ազդեցությունը Ընկերության վրա առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը, փոխառությունները և այլն: Վարկային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքներով.

| *(հազ.դրամ)* | 2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ. |
|---|---|---|
| Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը | - | - |
| Դեբիտորական պարտքեր | 563,218 | 618,643 |
| Տրամադրված փոխառություններ | 11,874 | 3,410 |
| Բանկային ավանդներ | - | - |
| Բանկային հաշիվների մնացորդներ | 6,205 | 17,964 |
| | 581,297 | 640,017 |

### *գ) Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկը իրենից ներկայացնում է այն ռիսկը, երբ ընկերությունը չի կարողանա կատարել իր պարտավորությունները:
Ընկերության քաղաքականությունը ներառում է իրացվելիության կառավարման զգուշավոր քաղաքականություն, որը նախատեսում է դրամական միջոցների և բանկային հաշիվների մնացորդների, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվների բավարար քանակ՝ ժամանակին պարտավորությունների համար բոլոր վճարումները ապահովելու համար:

Իրացվելիության ռիսկը գնահատելիս և կառավարելիս Ընկերությունը հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից դրամական միջոցների հոսքերը, մասնավորապես, դրամական միջոցներից և դեբիտորական պարտքերից: Ընկերության դրամական և առևտրային դեբիտորական պարտքերը զգալիորեն գերազանցում են պահանջվող ընթացիկ դրամական միջոցների արտահոսքի պահանջները: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերից պայմանագրային դրամական հոսքերը մարվում են 60 օրվա ընթացքում:

### 30 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունը կառավարում է իր կապիտալն այնպես, որ տեսանելի ապագայում կարողանա շարունակել իր գործունեությունը, միաժամանակ փորձելով առավելագույնի հասցնել շահույթը բաժնետիրոջ համար:
Ընկերության կապիտալը բաղկացած է սեփական կապիտալից, որը ներառում է կանոնադրական կապիտալը և կուտակված շահույթը:

Ընկերության ղեկավարությունը գնահատում է Ընկերության կապիտալի պահանջները՝ ապահովելու ֆինանսավորման կառուցվածքի ընդհանուր արդյունավետությունը և խուսափելու չափից ավելի վարկավորումից (լևերինգից): Սա հաշվի է առնում Ընկերության ստորադաս պարտքի տարբեր դասեր: Ընկերությունը կարգավորում է կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ՝ ելնելով

տնտեսական միջավայրի փոփոխություններից և ակտիվների հետ կապված ռիսկերից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ կատարելագործելու համար Ընկերությունը հնարավորություն ունի փոխել բաժնետիրոջը վճարված շահաբաժինների չափը, վերադարձնել կապիտալը բաժնետիրոջը, թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվներ պարտքը նվազեցնելու համար:

Հաշվետու ժամանակաշրջանի համար Ընկերության կապիտալի ճշգրտումներ կատարող գումարները հետևյալն են.

| *(հազ.դրամ)* | 2021 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Ընդհանուր բաժնետիրական կապիտալ | 525,050 | 525,050 |
| Բանկային հաշիվները և դրամարկղի մնացորդները հանած | (6,886) | (17,995) |
| Կապիտալ | 518,164 | 507,055 |
| Ընդամենը բաժնետիրական կապիտալ | 525,050 | 525,050 |
| Ընդհանուր ֆինանսավորում | 525,050 | 525,050 |
| Վճարունակության գործակիցը | 0.99 | 0.97 |

# «ԵՎՐՈԹԵՐՄ»
## ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2022 թ.**

**ԵՐԵՎԱՆ 2023**

# Բովանդակություն


| | էջ |
|---|---|
| Անկախ աուդիտորի եզրակացություն | 3-5 |
| Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն | 6 |
| Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն | 7 |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն | 8 |
| Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն | 9 |
| Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 10 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ և
ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՀՎՀՀ # 1 20 0333

«ՊՐՈԳՐԵՍ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/3

# Անկախ Աուդիտորի Եզրակացություն

«Եվրոթերմ» ՓԲԸ
Բաժնետերերին

*Կարծիք*

Մեր կողմից իրականացվել է «Եվրոթերմ» Փակ Բաժնետիրական Ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում՝ այդ հաշվետվությունները ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավատ են և տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների Միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

*Կարծիքի հիմքեր*

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

- ✓ Ընկերության գլխավոր հաշվապահը ֆինանսական հաշվետվության վավերացման ամսաթվի դրությամբ չունի փորձագետ հաշվապահի կամ աուդիտորի որակավորում:

*Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:
Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այդ ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք՝

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Ընկերությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը, և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

26 Հունիսի 2023թ.

Ռուզաննա Արզումանյան
Գլխավոր տնօրեն

Էմիլ Նիկողոսյան
Խմբի ղեկավար-Աուդիտոր

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

31 դեկտեմբերի 2022թ.

| | Ծանոթագրություն | 31 դեկտեմբեր 2022 | 31 դեկտեմբեր 2021 |
|---|---|---|---|
| | | *(հազար դրամ)* | |
| *Ոչ ընթացիկ ակտիվներ* | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 4,201,491 | 4,462,884 |
| Ոչ նյութական ակտիվներ | 5 | 11,188 | 10,256 |
| Բերքատու բույսեր | 6 | 864,847 | 873,929 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | 8 | 30,379 | 14,052 |
| | | *5,107,905* | *5,361,121* |
| *Ընթացիկ ակտիվներ* | | | |
| Պաշարներ | 9 | 1,157,846 | 1,077,057 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 10 | 879,773 | 730,683 |
| Այլ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | 10 | 5,958 | 11,874 |
| Դրամական միջոցներ | 11 | 107,586 | 6,886 |
| | | *2,151,163* | *1,826,500* |
| ***Ընդամենը ակտիվներ*** | | **7,259,068** | **7,187,621** |
| *Սեփական կապիտալ և պարտավորություններ* | | | |
| Սեփական կապիտալ | | | |
| Բաժնետիրական կապիտալ | 12 | 525,050 | 525,050 |
| Վերագնահատումից տարբերություններ | 13 | 1,689,413 | 1,689,413 |
| Սեփական կապիտալի այլ տարրեր | | 5,185 | 5,729 |
| Կուտակված շահույթ | | 2,133,834 | 1,414,471 |
| | | *4,353,482* | *3,634,663* |
| *Ոչ ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Վարկեր և փոխառություններ | 14 | 1,877,122 | 1,233,342 |
| Ֆինանսական վարձակալություն | 14 | 22,519 | 9,495 |
| Հետաձգված հարկային պարտավորություն | 7 | 361,442 | 353,632 |
| | | *2,261,083* | *1,596,469* |
| *Ընթացիկ պարտավորություններ* | | | |
| Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ | 14 | 405,858 | 1,653,734 |
| Ֆինանսական վարձակալություն | 14 | - | 2,050 |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 15 | 238,645 | 300,705 |
| | | *644,503* | *1,956,489* |
| ***Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ*** | | **7,259,068** | **7,187,621** |

«ԵՎՐՈԹԵՐՄ» «ЕВРОТЕРМ» «EUROTERM» 02541434

Վահե Ղազարյան
Գլխավոր տնօրեն

Լյուդմիլա Սարգսյան
Գլխավոր հաշվապահ

Վավերացման ամսաթիվ 26/06/2023թ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ

| | Ծանոթ. | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|
| Հասույթ | 16 | 1,837,460 | 2,269,477 |
| Վաճառքի ինքնարժեք | 17 | (1,228,478) | (1,392,764) |
| *Համախառն շահույթ (վնաս)* | | *608,982* | *876,713* |
| Այլ եկամուտ | 18 | 252,243 | 842,759 |
| Հավաքված բերքի իրական արժեք | | 68,734 | 61,972 |
| Այգիների մշակման և պահպանման ծախսեր | 19 | (144,371) | (109,705) |
| Իրացման ծախսեր | 20 | (183,758) | (210,563) |
| Վարչական ծախսեր | 21 | (107,205) | (115,411) |
| Այլ ծախսեր | 22 | (136,419) | (269,429) |
| *Գործառնական գործունեությունից շահույթ(վնաս)* | | *358,206* | *1,076,336* |
| Ֆինանսական հոդվածներ | 23 | (12,811) | (312,340) |
| Այլ ոչ գործառնական օգուտ/վնաս | 24 | 381,897 | 36,374 |
| *Շահույթը (վնասը) մինչև հարկերը* | | *727,292* | *800,370* |
| Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում | 25 | (7,929) | (135,740) |
| Տարվա զուտ արդյունք | | 719,363 | 664,630 |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ | | - | - |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ** | | 719,363 | 664,630 |

Վահե Ղազարյան
Գլխավոր տնօրեն

«ԵՎՐՈԹԵՐՄ» «ЕВРОТЕРМ» «EUROTERM» 02541434

Լյուդմիլա Սարգսյան
Գլխավոր հաշվապահ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

| | Բաժնետիրական կապիտալ | Վերագնահատումից տարբերություններ | Կուտակված շահույթ/ (վնաս) | Սեփական կապիտալի այլ տարրեր | Ընդամենը սեփական կապիտալ |
|---|---|---|---|---|---|
| 2021թ. հունվարի 1-ի դրությամբ | 525,050 | 1,689,413 | 727,063 | - | 2,941,526 |
| Ճշգրտում | - | - | 22,778 | - | 22,778 |
| Շահաբաժիններ | - | - | - | | |
| Տարվա շահույթ | - | - | 664,630 | - | 664,630 |
| Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ | - | - | - | 5,729 | 5,729 |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ | - | - | 664,630 | 5,729 | 670,359 |
| 2021 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ | 525,050 | 1,689,413 | 1,414,471 | 5,729 | 3,634,663 |
| Ճշգրտում | - | - | - | | |
| Շահաբաժիններ | - | - | - | - | |
| Տարվա շահույթ | - | - | 719,363 | - | 719,863 |
| Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ | - | - | - | (544) | (544) |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ | - | - | 719,363 | (544) | 718,819 |
| 2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ | 525,050 | 1,689,413 | 2,133,834 | 5,185 | 4,353,482 |

Վահե Ղազարյան
Գլխավոր տնօրեն

Լյուդմիլա Սարգսյան
Գլխավոր հաշվապահ

«ԵՎՐՈԹԵՐՄ» «ЕВРОТЕРМ» «EUROTERM» 02541434

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ։

# Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

հազար դրամ

| | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր** | | |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառ. իրացումից | 1,931,685 | 2,578,156 |
| Գործառնական այլ գործունեությունից | 180,460 | 2,160 |
| **Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր** | 2,112,145 | 2,580,316 |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր** | | |
| Գնումների գծով | (1,391,454) | (1,676,803) |
| Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից | (321,904) | (301,648) |
| Վճարումներ բյուջե և սոց. վճարումների գծով | (120,501) | (84,051) |
| Գործառնական այլ գործունեությունից ելքեր | (20,258) | (7,988) |
| **Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր** | 1,854,117 | (2,070,490) |
| ***Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր*** | *258,028* | *509,826* |
| | | |
| **Ներդրումային գործունեությունից մուտքեր** | | |
| Ֆինանսական ակտիվներով գործառնություններից | 8,219 | 3,410 |
| Շահաբաժինների և տոկոսների ստացումից | | - |
| **Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր** | 8,219 | 3,410 |
| | | |
| **Ներդրումային գործունեությունից ելքեր** | | |
| Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման գծով | | - |
| -Փոխառությունների տրամադրումից | - | (14,890) |
| **Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր** | - | (14,890) |
| ***Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր*** | *8,219* | *(11,480)* |
| | | |
| **Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների մուտքեր** | | |
| Ստացված վարկերից և փոխառություններից | 1,558,820 | 417,824 |
| **Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից մուտքեր** | 1,558,820 | 417,824 |
| **Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների ելքեր** | | |
| Ստացված վարկերի և փոխառությունների մարումից | (1,724,250) | (928,155) |
| Վճարված շահաբաժիններ և տոկոսներ | (182) | (17) |
| Ֆինանսական այլ գործունեությունից ելքեր | (8,485) | (2,090) |
| **Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ելքեր** | (1,732,917) | (930,262) |
| ***Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր*** | *(174,097)* | *(512,438)* |
| | | |
| **Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր** | 92,150 | (14,092) |
| **Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ** | 8,550 | 2,983 |
| **Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը** | 6,886 | 17,995 |
| **Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին** | 107,586 | 6,886 |

Վահե Ղազարյան
Գլխավոր տնօրեն

Լյուդմիլա Սարգսյան
Գլխավոր հաշվապահ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

# Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

*«Եվրոթերմ» ՓԲԸ*
*2022թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ*

## 1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Եվրոթերմ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է 1998 թ հունիսի 25-ին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Վկայականի գրանցման թիվն է՝ 286.110.03236, վկայականի համարն է 01Ա041738, ՀՎՀՀ՝ 02541434: Ընկերության գործունեության հիմնական բնագավառներն են՝ հյութերի և սննդի արտադրություն, որը ներառում է բնական հյութերի, նեկտարների, խմիչքների և կոնցենտրատների արտադրություն և պահածոյացված բանջարեղենի և մրգերի արտադրություն, ջեռուցման համակարգերի ներկրում, կոմպլեկտավորում և տեղադրում և բեռնափոխադրման ծառայությունների մատուցում:

Սննդամթերքի ողջ արտադրանքն արտադրվում և վաճառվում է Նոյան ապրանքանիշի ներքո, իսկ ջեռուցման համակարգի արտադրությունը և ծառայությունները մատուցվում են Եվրոթերմ ապրանքանիշի ներքո:

Ընկերությունն ունի գյուղատնտեսական նպատակով օգտագործվող հողատարածքներ՝ մրգատու ծառերով: Ընկերությունն ունի տարբեր մրգատու այգիներ, որտեղ առկա են ծիրանենի, դեղձենի, խնձորենի, ընկուզենի, նշենի, սպիտակ կեռասենի և խաղող: Ծառերից ստացված բերքը հիմնականում օգտագործվում է հյութերի և սննդի արտադրության մեջ, իսկ մնացած մասը վաճառվում է երրորդ կողմերին: Ընկերությունն ունի արտադրատեխնոլոգիական լիարժեք ցիկլ, այսինքն՝ մրգի ստացումից և մշակումից, մինչև փաթեթավորում: Ընկերության գյուղատնտեսական նպատակով օգտագործվող հողերը գտնվում են Արմավիրի մարզի Վանանդ գյուղում՝ մոտավորապես 193 հա և Արգինա գյուղում՝ 359 հա:

Ընկերության արտադրանքը վաճառվում է Հայաստանի շուկայում և արտահանվում է Ռուսաստանի Դաշնություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ և այլ երկրներ:
Ծառայությունները մատուցվում են Հայաստանի Հանրապետությունում: Ընկերության վերահսկող անձն է հանդիսանում պրն. Էդիկ Ղազարյանը, որին պատկանում է բաժնետոմսերի 95.23%: Բաժնետոմսերի մնացած 4.77% պատկանում է տկն. Ռիփսիմե Կաուկչյանին:

Ընկերության կողմից իրականացվող գործունեության տեսակներից՝ ըստ ՀՀ օրենսդրության լիցենզավորման են ենթակա՝
Լիցենզիա N 14918-01՝ Շինարարության իրականացումª բնակելի, հասարակական և արտադրական ոլորտի;
Լիցենզիա N 14918-03՝ Շինարարության իրականացումª հիդրոտեխնիկական ոլորտի;
Լիցենզիա N 14918-04՝ Շինարարության իրականացումª էներգետիկ ոլորտի:

Լիցենզիա N 14919-01՝ Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն՝ բնակելի, հասարակական և արտադրական ոլորտի;
Լիցենզիա N 14919-03՝ Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն՝ հիդրոտեխնիկական ոլորտի;
Լիցենզիա N 14919-04՝ Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն՝ էներգետիկ ոլորտի:
Տրամադրված քաղաքաշինության նախարարության կողմից 21.07.2011թ.
Գործողության ժամկետը՝ Անժամկետ:

2022թ. աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 159 մարդ (2021թ.՝ 171 մարդ):

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ամիրյան փողոց 15ա: Ընկերության գործունեության հասցեներն են՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Քոչինյան փողոց 5, ինչպես նաև Արմավիրի մարզ, Վանանդ գյուղ:

## 2. Պատրաստման հիմքերը

### 2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

### 2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքով, բացառությամբ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնական ճանաչման պահին չափվում են իրական արժեքով: Որոշ հիմնական միջոցներ հաշվառվում են վերագնահատված արժեքով:

### 2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույն կերպով է արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական էությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթով ներկայացված տեղեկատվությունն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է հազար միավորի ճշտությամբ:

### 2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կատարի կարևոր գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրությունները և գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 26-ում:

## 2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

### Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ և փոփոխություններ ՖՀՄՍ-ներում առ 31/12/2022թ.

ՀՀՄՍ1 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը». Պարտավորությունների դասակարգումը*

ՀՀՄՍ 1-ում կատարվել է փոփոխություն, ըստ որի եթե կազմակերպությունը իրավունք ունի երկարաձգել պարտավորության մարումը հաշվետու ամսաթվից հետո նվազագույնը 12 ամիս, ապա այն դասակարգվում է որպես ոչ ընթացիկ՝ անկախ այդ իրավունքն օգտագործելու մտադրությունից:

Կատարվել է նաև հետագա պարզաբանում այն մասին, որ եթե պարտավորության մարման ժամկետը կախված է կազմակերպության կողմից որևէ կովենանտների բավարարելու փաստից, ապա պարտավորության դասակարգման նպատակով հաշվի են առնվում միայն այն կովենանտները, որոնց կազմակերպությունը պետք է բավարարեր հաշվետու ամսաթվի դրությամբ: Անհրաժեշտ է նաև կատարել կովենանտների վերաբերյալ ռիսկերի գծով բացահայտումներ:

*ՀՀՄՍ 1-ի այս փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2024թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

ՀՀՄՍ12 *«Շահութահարկեր». Մեկ գործարքով առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկեր*

ՀՀՄՍ 12-ում պարզաբանվել է, որ հետաձգված հարկեր առաջանալու բացառությունը չի վերաբերվում այն իրավիճակներին, երբ գործարքն առաջացնում է ակտիվ, և պարտավորություն, որոնք էլ համապատասխանաբար առաջացնում են և նվազեցվող և հարկվող ժամանակավոր տարբերություններ, և այդ պահին ազդեցությունը զուտ ակտիվների փոփոխության վրա 0 է:

Այս գործարքից առաջացող հետաձգված հարկային պարտավորությունը չպետք է գերազանցի հետաձգված հարկային ակտիվին:

*ՀՀՄՍ 12-ի այս փոփոխությունը ուժի մեջ են մտնում 2023թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

ՀՀՄՍ8 *«Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ». Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանումը*

ՀՀՄՍ 8-ում հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխությունների սահմանումը փոխարինվել է հաշվապահական հաշվառման գնահատման սահմանմամբ: Ըստ նոր սահմանման հաշվապահական հաշվառման գնահատումը ֆինանսական հաշվետվություններում ներկայացվող դրամային ցուցանիշներն են, որոնց գծով առկա են չափման անորոշություններ:

*ՀՀՄՍ 8-ի այս փոփոխությունը ուժի մեջ են մտնում 2023թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

ՖՀՄՍ16 *«Վարձակալություն». Վարձակալության պարտավորություն, որն առաջանում է հետադարձ վարձակալությամբ վաճառքից*

ՖՀՄՍ 16-ում կատարված խմբագրումը պահանջում է, որ վաճառող-վարձակալը վաճառք հետադարձ վարձակալությամբ գործարքում պարտավորությունը հաշվառի այնպես, որ չճանաչվի որևէ օգուտ կամ վնաս վաճառող-վարձակալի կողմից պահվող օգտագործման իրավունքի գծով

Այնուամենայնիվ, վաճառող-վարձակալը կարող է շահույթում կամ վնասում ճանաչել վարձակալության մասնակի կամ ամբողջական դադարեցման գծով օգուտը կամ վնասը:

*ՖՀՄՍ 16-ի այս փոփոխությունը ուժի մեջ են մտնում 2024թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

## 2.6 Նախորդ տարիների սխալների ուղղում

Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդ ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվությունը, ներկայացվում են այնպես, իբր էական սխալներն ուղղվել են այն ժամանակաշրջանում, որում դրանք կատարվել են: Հետևաբար, ներկայացված յուրաքանչյուր ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը ներառվում է այդ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մեջ: Ներկայացված ժամանակաշրջաններից ամենավաղ ժամանակաշրջանի կուտակված արդյունքների սկզբնական մնացորդը կարգավորվում է ճշգրտումների այն գումարով, որը վերաբերում է այն ժամանակաշրջաններին, որոնք նախորդում են վերջին ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների համադրելի տեղեկատվության մեջ ներգրավված ժամանակաշրջաններին: Նախորդող ժամանակաշրջանների վերաբերյալ ներկայացված որևէ այլ տեղեկատվություն նույնպես վերաներկայացվում է:

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

### 3.1 Ընդհանուր դրույթներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:
Հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները կիրառվել են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:
Ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են, բայց դեռևս ուժի մեջ չեն մտել և վաղաժամ չեն ընդունվել Ընկերության կողմից, ներկայացված են ծանոթագրություն 2.5-ում:

Էական հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները, որոնք կիրառվել են ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ներկայացված են ստորև:

### 3.2 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀՄՍ 1. *Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում* ստանդարտի համաձայն: Ընկերությունը որոշել է ներկայացնել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին մեկ հաշվետվություն:

Կազմակերպությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ներկայացնում է ակտիվներն ու պարտավորությունները ընթացիկ և ոչ ընթացիկ դասակարգմամբ: Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ծախսերը դասակարգվում են ըստ գործառույթի: Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը ներկայացվում է ուղղակի մեթոդով, իսկ տոկոսների և շահաբաժինների գծով հոսքերը դասակարգվում են որպես ներդրումային գործունեությունից ներհոսքեր և ֆինանսավորման գործունեությունից արտահոսքեր:

### 3.3 Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար ֆունկցիոնալ արժույթից տարբերվող այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից հրապարակված՝ արտարժութային շուկաներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 393.57 ՀՀ դրամ, 1 Եվրոն կազմում է 420.06 ՀՀ դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 480.14 ՀՀ դրամ, 1 Եվրոն կազմում է 542.61 ՀՀ դրամ, 2021թ. հունվարի 01-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 522.59 ՀՀ դրամ, 1 Եվրոն կազմում է 641.11 ՀՀ դրամ): Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես շահույթ կամ վնաս:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ Խմբի դրամային հոդվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնական գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ Ընկերության դրամային հոդվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնական գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

### 3.4 Հիմնական միջոցներ

Հողերը, շենքերը և սարքավորումները հաշվառվում են վերագնահատված արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի այլ հոդվածները սկզբնական ճանաչման պահին չափվում են սկզբնական արժեքով: Ձեռք բերված հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, տրանսպորտային ծախսումները, ինչպես նաև ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ծախսումները: Գործարկման և նման նախաարտադրական ծախսումները հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում: Սեփական ուժերով կառուցվող հիմնական միջոցների սկզբնական արժեքը որոշվում է նույն սկզբունքներով, ինչ պաշարների ինքնարժեքը: Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, մինչև դրանց նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելը, հանդիսանում են անավարտ հիմնական միջոցներ և հաշվառվում են դրանց ինքնարժեքով:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրս գրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես շահույթ կամ վնաս:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, կապիտալացվում են տեղադրվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ միասին:
Ճանաչման նշված սկզբունքի համաձայն՝ կազմակերպությունը գնահատում է իր հիմնական միջոցների գծով բոլոր ծախսումները դրանց կատարման պահին: Այս ծախսումները ներառում են հիմնական միջոցի միավորի կառուցման կամ ձեռքբերման սկզբնավորման ծախսումները և հետագայում կատարված ծախսումները՝ կապված դրա ավելացման, մի մասի փոխարինման կամ սպասարկման հետ:
Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում՝ որպես շահույթ կամ վնաս:

Հիմնական միջոցների մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ ներառվում է այլ ակտիվի ինքնարժեքում՝ կիրառելով ուղիղ գծային մեթոդը, եթե մաշվածության հաշվարկման այլ մեթոդը չի ապահովում հիմնական միջոցի տնտեսական օգուտների նվազեցման ավելի արժանահավատ պատկերը:
Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

| | |
|---|---|
| Շենքեր | 20-40 տարի |
| Տրանսպորտային միջոցներ | 5-15 տարի |
| Սարքավորումներ | 5-36 տարի |
| Արտադրական գույք, գործիք. | 1-10 տարի |

Քանի որ հողի համար հնարավոր չի որոշել օգտակար ծառայության ժամկետ, ապա համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

## 3.5 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվները ներառում են հաշվապահական հաշվառման ծրագիր, արտոնագրեր և այլն:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ ներառվում է այլ ակտիվի ինքնարժեքում՝ կիրառելով գծային մեթոդը՝ ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի համակարգչային ծրագրի, 5-10 տարի արտոնագրերի, ապրանքային նշանների, դիզայնի և 10 տարի այլ ոչ նյութական ակտիվների համար:

## 3.6 Կենսաբանական ակտիվներ

Կենսաբանական ակտիվը սկզբնական ճանաչման պահին և յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ չափվում է իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն դեպքերի, երբ իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել:
Ընկերության կենսաբանական ակտիվներից ստացվող գյուղատնտեսական արտադրանքը չափվում է բերքահավաքի պահին իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները: Նման չափումը հանդիսանում է սկզբնական արժեք այն ամսաթվի դրությամբ, երբ կիրառվում է ՀՀՄՍ 2 «Պաշարներ» ստանդարտը կամ այլ համապատասխան ստանդարտ:
Օգուտները կամ վնասները, որոնք առաջանում են կենսաբանական ակտիվի վաճառքի հետ կապված ծախսումները՝ հանած իրական արժեքով սկզբնական ճանաչման պահին, ինչպես նաև կենսաբանական ակտիվի վաճառքի հետ կապված ծախսումները՝ հանած իրական արժեքի փոփոխությունից, ներառվում են այն ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, որում դրանք առաջացել են:
Բերքատու բույսեր
Բերքատու բույսերն այն կենսաբանական ակտիվներն են, որոնք բացառապես օգտագործվում են որոշակի ժամանակաշրջանների ընթացքում գյուղատնտեսական արտադրանք ստանալու նպատակով: Իրենց արտադրական կյանքի ավարտին դրանք սովորաբար ենթակա են դուրսգրման: Հասունանալուն պես, բացի գյուղատնտեսական արտադրանք տալուց, բերքատու բույսերի կենսաբանական փոխակերպումները այլևս նշանակալի չեն տնտեսական օգուտներ ստեղծելու հարցում և ապագա տնտեսական օգուտների ստացումը բացառապես պայմանավորված է դրանցից ստացվող գյուղատնտեսական արտադրանքով: Հետևաբար, մինչ հասունացումը, դրանք հաշվառվում են որպես սեփական ուժերով կառուցված հիմնական միջոցներ:
Բերքատու բույսերը հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները՝ համաձայն ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտի: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, ուղղակիորեն վերագրվող ծախսումները և կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության:
Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվները հասնում են իրենց արտադրական բերքատվությանը:

Բերքատու ծառերի գնահատված օգտակար ծառայության ժամկետներն հետևյալն են․

| | |
|---|---|
| Խաղողի որթ | 45 տարի |
| Ծիրանենի | 35 տարի |
| Դեղձենի | 20 տարի |
| Խնձորենի | 25 տարի |
| Ընկուզենի | 50 տարի |
| Բալենի | 32 տարի |
| Նշենի | 50 տարի |
| Սալորենի | 25 տարի |

## 3.7 Ներդրումային գույք

### 3.7.1. Սահմանում

Ներդրումային գույքը գույք է (հող կամ շենք, կամ շենքի մի մաս, կամ և' հող, և' շենք), որը պահվում է Ընկերության կողմից վարձակալությունից եկամուտ վաստակելու կամ դրա արժեքի աճի, կամ էլ միաժամանակ այդ երկու նպատակներով, այլ ոչ թե՝
ա) արտադրությունում օգտագործելու, ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման, կամ վարչական նպատակներով օգտագործելու համար, կամ
բ) սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար:

### 3.7.2. Չափում

Ներդրումային գույքը սկզբնապես չափվում է իր ինքնարժեքով (սկզբնական արժեքով):
Գործառնության հետ կապված ծախսումները ներառվում են սկզբնական չափման մեջ: Գնված ներդրումային գույքի ինքնարժեքը ներառում է դրա գնման գինը և ուղղակիորեն վերագրելի ցանկացած ծախսում:
Ներդրումային գույքի միավորը որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

### 3.7.3. Մաշվածություն

Ներդրումային գույքի միավորի մաշեցնող (մաշվածության միջոցով որպես ծախսում ճանաչման ենթակա) գումարը պարբերաբար բաշխվում է ակտիվի օգտակար ծառայության ընթացքում՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:
Հողի գծով մաշվածություն չի հաշվարկվում:
Ներդրումային գույքի օգտակար ծառայությունը արտահայտված է ժամկետով:
Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

Շենքեր՝ 20-55 տարի:

### 3.7.4. Վերադասակարգումներ

Գույքը որպես ներդրումային վերադասակարգելը կամ հակառակը տեղի է ունենում այն և միայն այն դեպքում, երբ փոփոխվել է դրանց օգտագործումը, որի վկայություններն են՝
ա) Ընկերության կողմից գույքի զբաղեցումը սկսելը. այս դեպքում ներդրումային գույքը վերադասակարգվում է որպես հիմնական միջոց,
բ) Ընկերության կողմից գույքի զբաղեցումն ավարտելը. այս դեպքում Ընկերության կողմից զբաղեցված գույքը վերադասակարգվում է որպես ներդրումային գույք:

## 3.8 Վարձակալված ակտիվներ

Կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականություն

*Ընկերությունը որպես վարձակալ*

Կնքված ցանկացած նոր պայմանագրի դեպքում Ընկերությունը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին․

- Պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացնելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Ընկերությանը,
- Ընկերությունն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Ընկերությունն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Ընկերությունն իրավունք ունի ուղղորդել, թե ինչպես և ինչ նպատակով ակտիվն օգտագործել ընթացքում:

*Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ*

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ Ընկերությունը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Ընկերությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Ընկերությունը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից յկամ դրույքից, գումարներ,

որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:
Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:
Ընկերությունը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

*Ընկերությունը որպես վարձատու*

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը ՖՀՄՍ 16-ի համաձայն համադրելի ժամանակաշրջանի համեմատ չի փոփոխվել:
Որպես վարձատու Ընկերությունը դասակարգում է իր վարձակալությունները որպես գործառնական կամ ֆինանսական:
Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական, եթե այն փոխանցում է հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքի հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և օգուտները և գործառնական , եթե նշվածը տեղի չի ունենում:

Մինչև 2019թ. հունվարի 1-ը կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ընկերությունը որպես վարձակալ
Ֆինանսական վարձակալություն

Վարձակալական պայմանագրի բնույթը դիտարկելիս և որոշելու համար արդյոք այն փոխանցում է վարձակալության տված ակտիվի սեփականության իրավունքի հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և օգուտները, ղեկավարությունը կիրառում է դատողություն: Դիտարկվող առանցքային գործոնները ներառում են վարձակալական ժամկետի երկարությունը ակտիվի տնտեսական ծառայության ժամկետի հետ համադրությամբ, նվազագույն վարձավճարների ներկա արժեքը ակտիվի իրական արժեքի հետ համադրությամբ և այն հանգամանքը, թե արդյոք վարձակալական ժամկետի վերջում Ընկերությունը ստանալու է ակտիվի նկատմամբ սեփականության իրավունք:
Հողի և շենքերի վարձակալության դեպքում նվազագույն վարձավճարները սկզբում բաշխվում են վարձակալության բաղադրիչներին՝ դրանցից յուրաքանչյուրին բաժին ընկնող մասի իրական արժեքին համամասնորեն: Անյուհետև յուրաքանչյուր բաղադրիչը առանձին գնահատվում է որպես ֆինանսական վարձակալություն դիտարկվելու հնարավորության տեսանկյունից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողը սովորաբար ունի անորոշ տնտեսական ծառայության ժամկետ:
Ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվների մաշվածության մեթոդները և օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ծանոթագրություն 2՛՛3-ում:
Վարձավճարների տոկոսային տարրը հաշվեգրվում է շահույթին կամ վնասին վարձակալության ժամկետի ընթացքում՝ որպես ֆինանսական ծախս:

Գործառնական վարձակալության

Մյուս բոլոր վարձակալությունները դիտվում են որպես գործառնական վարձակալություններ: Գործառնական վարձակալության գծով վճարները ճանաչվում են որպես ծախս գծային հիմունքով:

Վարձակալության հետ կապված ծախսերը, ինչպիսիք են պահպանման և ապահովագրության ծախսերը, ծախսագրվում են իրականացման պահին:

## 3.9 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է, հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը ներառում է պաշարների ձեռք բերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսումները: Պաշարների ինքնարժեքը որոշվում է օգտագործելով միջին կշռված մեթոդը:
Կենսաբանական ակտիվներից փոխանցված գյուղատնտեսական բերքի սկզբնական արժեքը դա բերքահավաքի պահին իրական արժեքն է՝ հանած վաճառքի հետ կապված ծախսերը:

## 3.10 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:
Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած կամ հանած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:
Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

### *Ֆինանսական ակտիվներ*

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

- փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և որը ցույց է տալիս, թե իրական արժեքի փոփոխության արդյունքում ստացվող օգուտներն ու վնասները պետք է ճանաչվեն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, թե ուղղակիորեն սեփական կապիտալում: Ընդհանուր առմամբ, Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվի արժեզրկման գնահատումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «ֆինանսական ծախս» և «ֆինանսական եկամուտ» հոդվածներում:

## I. Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշվող չեն ակտիվ շուկայում: Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվելուց հետո հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և ժամանակին չվճարումը ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

## II Մնացորդները դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցներ, բանկային հաշիվների մնացորդներ, որոնք ներկայացված են ֆինանսական ակտիվների «փոխառություններ և դեբիտորական պարտքեր» կատեգորիայում:

## *Ֆինանսական պարտավորություններ*

Ընկերությունը ֆինանսական պարտավորությունները ներառում են փոխառությունները, ինչպես նաև առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

**Հազար դրամ**

| | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| *Ֆինանսական պարտավորություններ* | | |
| Վարկեր և փոխառություններ | 2,305,498 | 2,891,176 |
| Առևտրային կրեդիտորական պարտքեր, այդ թվում շահութահարկ | 96,662 | 127,105 |
| | 2,402,160 | 3,018,281 |

## I Փոխառություններ

Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ ներառյալ գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս:

## II Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

## 3.11 Արժեզրկում

*Հիմնական միջոցների*

Մաշվող ակտիվները վերանայվում են արժեզրկման համար, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է դրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս՝ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև դրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ՝ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

*Ֆինանսական ակտիվների արժեզրկում*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր

ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

## 3.12 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

## 3.13 Շահութահարկ

Ընթացիկ հարկն իրենից ներկայացնում է տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի (վնասի) գծով վճարման (փոխհատուցման) ենթակա շահութահարկի գումարը: Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) պետք է չափվեն այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ընկերության հետաձգված հարկերը (հետաձգված հարկային պարտավորությունները և հետաձգված հարկային ակտիվները) պայմանավորված են ժամանակավոր տարբերությունների (հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ) և չօգտագործված հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ: Ժամանակավոր տարբերությունների հետ կապված հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակով օգտագործվող գումարների (հարկային բազայի) ժամանակավոր տարբերությունների վրա:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմնվելով հարկերի այն դրույքների վրա, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են իրացվել չօգտագործված հարկային վնասները և փոխհատուցումները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այն չափով, որքանով այլևս հավանական չէ, որ դրան առնչվող հարկային օգուտները կիրացվեն:

## 3.14 Պետական շնորհներ

Պետական շնորհները ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ՝ ներկայացվելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պարտավորություններ բաժնում, այն պահին, երբ կա բավարար

հավաստիացում որ կազմակերպությունը ստանալու է շնորհը և բավարարելու է դրան կից պայմանները:

Այն շնորհները որոնց հիմնական պայմանն է գնել, կառուցել կամ այլ կերպ ձեռքբերել երկարաժամկետ ակտիվ (ակտիվներին վերաբերող շնորհներ), սկզբնապես ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, իսկ հետագայում ճանաչվում են շահույթ/վնասում ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Այլ պետական շնորհները (եկամուտներին վերաբերող շնորհներ) սկզբնապես ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, իսկ հետագայում ճանաչվում են շահույթ/վնասում սիստեմատիկ հիմունքով՝ համապատասխան այն ծախսումների ծախս ճանաչմանը, որոնց փոխհատուցման համար նախատեսված են:

Պետական շնորհները, որոնք տրամադրվում են ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն, պետք է ճանաչվեն շահույթ/վնասում այն պահին, երբ դառնում են ստացման ենթակա>:

## 3.15 Պայմանագրերից հասույթ

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով․

1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը

2 Բացահայտել կատարման պարտականությունները

3 Որոշել գործարքի գինը

4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև

5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը (ները) բավարարված են:

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին, կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Ընկերությունը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նման ձևով, եթե Ընկերությունը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Ընկերությունը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Հասույթը գոյանում է հիմնականում՝

- բնական հյութերի, նեկտարների, կոնցենտրատների, պահածոյացված բանջարեղենի և մրգերի վաճառքից,
- ջեռուցման համակարգերի վաճառքից և տեղադրումից,
- բեռնափոխադրման ծառայությունների մատուցումից:

*Ապրանքների վաճառք*

Ֆիքսված գնով ապրանքների վաճառքից եկամուտը ճանաչվում է, երբ Ընկերությունն ակտիվների վերահսկողությունը հաճախորդներին է փոխանցում, երբ ապրանքները հաճախորդին են հասցվում

և երբ հաճախորդի՝ ապրանքը չընդունելու վրա ազդող չիրականացված պարտականություններ առկա չեն: Հանձնումը կատարվում է, երբ ապրանքներն առաքվել են կոնկրետ հասցեով, մաշվածության և կորստի ռիսկերը փոխանցվել են հաճախորդին և այն դեպքում, երբ կա՛մ հաճախորդը գնման պայմանագրի համաձայն ընդունել է ապրանքները, կա՛մ էլ երբ Ընկերությունն օբյեկտիվ ապացույցներ ունի առ այն, որ ընդունման բոլոր չափանիշները բավարարված են: Փոխանցված ապրանքների հաշիվ-ապրանքագրերը ենթակա են վճարման հաճախորդից ստանալու պահին: Հասույթը ճանաչվում է այն գումարով, որն արտահայտում է այն կատարման պարտականությունը, որով Ընկերությունն ակնկալում է իրավունք ստանալ այդ ապրանքների հանդեպ:

*Ծառայությունների մատուցում*

Ընկերությունը ծառայություններ է մատուցում՝ համաձայն ֆիքսված գներով պայմանագրերի: Ծառայությունների մատուցումից ստացված հասույթը ճանաչվում է այն հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, որի ժամանակ ծառայությունները մատուցվել են: Ֆիքսված գնով պայմանագրերի դեպքում հասույթը ճանաչվում է՝ հիմնվելով հաշվետու ժամանակաշրջանի վերջում փաստացի մատուցված ծառայության վրա, որպես մատուցվելիք ընդհանուր ծառայությունների մի մաս, քանի որ հաճախորդն օգուտները միաժամանակ է ստանում և օգտագործում:

Հասույթի և սկզբնական արժեքների գնահատականները կամ ավարտվող գործընթացի մասշտաբները վերանայվում են այն դեպքում, երբ հանգամանքները փոխվում են: Գնահատված հասույթում կամ սկզբնական արժեքներում կատարված աճը կամ նվազումն արտացոլվում են այն ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, որի ընթացքում վերանայման կարիք առաջացրած հանգամանքները հայտնի են դառնում ղեկավարությանը: Ֆիքսված գնով պայմանագրերի դեպքում հաճախորդը ֆիքսված գումար է վճարում՝ հիմնվելով վճարման ժամանակացույցի վրա: Հաճախորդներին ամսական սկզբունքով հաշիվ-ապրանքագրեր են դուրս գրվում, իսկ կատարման պարտականությունը ենթակա է վճարման, երբ հաշիվ-ապրանքագիրը դուրս է գրվում:

### 3.16 Անընդհատության սկզբունք.

Ընկերությունը սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստել է անընդհատության սկզբունքով:

## 4 Հիմնական միջոցներ

**հազար դրամ**

| | Հող. շենքեր և շինություններ | Փոխանցող հարմարանքներ, մեքենասարքավոր., տրանսպորտային միջոցներ | Արտադրական և տնտեսական գույք, այլ և օգտագործման համար ոչ մատչելի ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| *Սկզբնական արժեք* | | | | |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2,388,347 | 6,142,612 | 1,346,780 | 9,877,739 |
| Ճշգրտում | - | 1,180 | 14,994 | 16,174 |
| Ավելացում | - | 42,275 | 487,018 | 529,293 |
| Ներքին տեղաշարժ | - | | | |
| Օտարում և Նվազեցում | - | (429,392) | (474,297) | (903,689) |
| 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2,388,347 | 5,756,675 | 1,374,495 | 9,519,517 |
| *Կուտակված մաշվածություն և արժեզրկում* | | | | |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 607,538 | 4,294,056 | 513,261 | 5,414,855 |
| Ճշգրտում | - | - | - | - |
| Տարվա ծախս | 55,021 | 129,564 | 37,780 | 222,365 |
| Ներքին տեղաշարժ | | | | |
| Նվազեցում | | (315,275) | (3,919) | (319,194) |
| 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 662,559 | 4,108,345 | 547,122 | 5,318,026 |
| *Հաշվեկշռային արժեք* | | | | |
| Հաշվեկշռային արժեք 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 1,780,809 | 1,848,556 | 833,519 | 4,462,884 |
| 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 1,725,788 | 1,648,330 | 827,373 | 4,201,491 |

- ✓ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հող, շենքեր և շինություններ» դասում ներառված են 565.671 հա ընդհանուր մակերեսով հողամաս՝ 929,460 հազար դրամ արժեքով (2021 թ. դեկտեմբերի 31-ի. դրությամբ՝ 929,460 հա ընդհանուր մակերեսով հողամաս):
- ✓ Հիմնական միջոցներ դասում 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառվում են 1,071,578 հազար դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ, որոնք ամբողջությամբ մաշված են, (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՝ 1,077,548 հազար դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ):

## Մաշվածության ծախսը բաշխվել է հետևյալ կերպ՝

**հազար դրամ**

| | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Արտադրական ծախսերին | 192,107 | 278,702 |
| Իրացման ծախսերին | 13,727 | 13,821 |
| Վարչական ծախսերին | 16,531 | 16,238 |
| Ընդամենը | 222,365 | 308,761 |

*Հիմնական միջոցների վերագնահատում*

2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության հողերը, շենքերը և սարքավորումները ներկայացվել են վերագնահատված արժեքով: Վերագնահատումն իրականացվել է լիցենզավորված անկախ գնահատող կազմակերպության կողմից: Շուկայական արժեքը որոշվել է համեմատական և փոխարինման արժեքի (ծախսերի վերլուծության) մեթոդների հիման վրա:

Ղեկավարությունը համոզված է, որ հողերի, շենքերի և սարքավորումների իրական արժեքները էականորեն չեն փոփոխվել:

Համեմատական մեթոդով հաշվարկելիս իրական արժեքը որոշվում է՝ հիմնվելով ներկա ժամանակաշրջանում նույն աշխարհագրական դիրքում գտնվող նման անշարժ գույքի վաճառքների տվյալների հիման վրա:
Փոխարինման մեթոդով հաշվարկելիս շուկայական արժեքը որոշվում է՝ հիմնվելով նման ակտիվի կառուցման համար անհրաժեշտ ընդհանուր ծախսերի վրա՝ հանած գնահատված մաշվածությունը, որը ներառում է գնահատման ամսաթվի դրությամբ ֆիզիկական, տնտեսական և ֆունկցիոնալ մաշվածությունները:

Եթե Ընկերության հողերը, շենքերը և սարքավորումները ներկայացված լինեին սկզբնական արժեքով հանած կուտակված մաշվածությունը, ապա 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրանց հաշվեկշռային արժեքները կկազմեին 2,582,383 հազար դրամ (2021թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,716,190 հազար դրամ):

## 5 Ոչ նյութական ակտիվներ

հազար դրամ

| | Լիցենզիաներ, վստահագրեր, հեղինակային իրավունքներ | Համակարգչային ծրագիր | Բանաձևեր, մոդելներ, նախագծեր, բաղադրատոմսեր և փորձանմուշներ | Այլ և անավարտ ՈՆԱ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| *Սկզբնական արժեք* | | | | | |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 5,853 | 10,244 | 5,105 | 12,769 | 33,971 |
| Ճշգրտում | - | - | - | - | - |
| Ներխմբային վերադասակարգում | - | - | | | |
| Ավելացում | 480 | - | 1,097 | 3,221 | 4,798 |
| Նվազեցում | - | (2,306) | (977) | (95) | (3,378) |
| 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 6,333 | 7,938 | 5,225 | 15,895 | 35,391 |
| *Կուտակված մաշվածություն և արժեզրկում* | | | | | |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 3,459 | 8,444 | 4,087 | 7,725 | 23,715 |
| Ճշգրտում | - | - | | | |
| Տարվա ծախս | 541 | 534 | 84 | 2,611 | 3,770 |
| Նվազեցում | | (2,306) | (976) | | (3,282) |
| 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 4,000 | 6,672 | 3,195 | 10,336 | 24,203 |
| *Հաշվեկշռային արժեք* | | | | | |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2,394 | 1,800 | 1,018 | 5,044 | 10,256 |
| 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2,333 | 1,266 | 2,030 | 5,559 | 11,188 |

## 6 Բերքատու բույսեր

**հազար դրամ**

| | Բերքատու ծառեր | Ընդամենը |
|---|---|---|
| Սկզբնական արժեք | | |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 1,021,291 | 1,021,291 |
| Ավելացում | 29,208 | 29,208 |
| Օտարում և Նվազեցում | | |
| 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 1,050,499 | 1,050,499 |
| *Կուտակված մաշվածություն և արժեզրկում* | | |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 147,363 | 147,363 |
| Տարվա ծախս | 38,289 | 38,289 |
| Նվազեցում | | |
| 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 185,652 | 185,652 |
| *Հաշվեկշռային արժեք* | | |
| 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 873,928 | 873,928 |
| 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 864,847 | 864,847 |

Այգիներում առկա պտղատու ծառերի վերաբերյալ քանակական տվյալները ներկայացված են ստորև.
**հազար դրամ**

| | Տարիքը 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2022Ã. | 2021Ã. |
|---|---|---|---|
| Դեղձի տնկի | 9-21 տարի | 10,012 | 10,012 |
| Ծիրանի տնկի | 2-20 տարի | 10,712 | 10,712 |
| Խնձորի տնկի | 6-9 տարի | 18,650 | 18,650 |
| Խաղողի որթ | 13 տարի | 55,690 | 55,690 |
| Սև սալորենի | 7 տարի | 9,050 | 9,050 |
| Կեռասի տնկի | 7-12 տարի | 3,750 | 3,750 |
| Պիստակի տնկի | 4 տարի | 2,830 | 2,830 |
| Այլ տնկիներ | 7-22 տարի | 2,768 | 2,768 |
| | | 113,462 | 113,462 |

## 7 Հարկային ակտիվներ (պարտավորություններ)

**հազար դրամ**

| | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Նվազագույն շահութահարկ | - | - |
| Հետաձգված շահութահարկ | (361,442) | (353,632) |
| Ընդամենը | (361,442) | (353,632) |

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ

| | 2022թ. հունվարի 01-ի դրությամբ | Ճանաչված սեփական կապիտալում | Ճանաչված ֆինանսական արդյունք | 2022թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ |
|---|---|---|---|---|
| *Հետաձգված հարկային ակտիվներ* | | | | |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 5,810 | - | (1,862) | 3,948 |
| Աշխատակիցներին փոխհատուցումների գծով | 5,052 | - | 1,629 | 6,681 |
| Հարկային վնաս | 38,519 | | (20,105) | 18,414 |
| Պարտքային կորուստ | 1,156 | - | 828 | 1,984 |
| Տրված փոխառություններ | 543 | - | (415) | 128 |
| | 51,080 | - | (19,925) | 31,155 |
| *Հետաձգված հարկային պարտավորություններ* | | | | |
| Բերքատու բույսեր | 80,920 | - | (2,229) | 78,691 |
| Հիմնական միջոցների գծով | 316,935 | - | (20,028) | 296,907 |
| Ֆինանսական ներդրումներ | 6,857 | (119) | 10,261 | 16,999 |
| | 404,712 | (119) | (11,996) | 392,597 |
| Ընդամենը | (353,632) | 119 | (7,929) | (361,442) |

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ

| | 2022թ. հունվարի 01-ի դրությամբ | Ճանաչված սեփական կապիտալում | Ճանաչված ֆինանսական արդյունք | 2022թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ |
|---|---|---|---|---|
| *Հետաձգված հարկային ակտիվներ* | | | | |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 5,810 | - | - | 5,810 |
| Աշխատակիցներին փոխհատուցումների գծով | 2,419 | - | 2,633 | 5,052 |
| Հարկային վնաս | 183,239 | | (144,720) | 38,519 |
| Պարտքային կորուստ | - | - | 1,156 | 1,156 |
| Տրված փոխառություններ | - | - | 543 | 543 |
| | 191,468 | - | (140,388) | 51,080 |
| *Հետաձգված հարկային պարտավորություններ* | | | | |
| Բերքատու բույսեր | 83,569 | - | (2,649) | 80,920 |
| Հիմնական միջոցների գծով | 313,917 | - | 3,018 | 316,935 |
| Ֆինանսական ներդրումներ | 5,616 | 1,257 | (16) | 6,857 |
| | 403,102 | 1,257 | 353 | 404,712 |
| Ընդամենը | (211,634) | (1,257) | (140,741) | (353,632) |

## 8 Այլ ոչ ընթացիկ ակտիվներ

*Հազար դրամ*

| | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | Ավելացում | Նվազում | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|---|
| Լիզինգ | 18,329 | 21,000 | - | 39,329 |
| Լիզինգի մաշվածություն | (4,277) | (4,673) | - | (8,950) |
| Ընդամենը | 14,052 | 16,327 | - | 30,379 |

## 9 Պաշարներ

*Հազար դրամ*

| | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Հումք և նյութեր | 311,854 | 254,882 |
| Անավարտ արտադրանք | 580,385 | 3,293 |
| Պատրաստի արտադրանք | 53 | 550,952 |
| Ապրանքներ | 265,554 | 267,930 |
| | 1,157,846 | 1,077,057 |

## 10 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

*Հազար դրամ*

| | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 659,668 | 558,225 |
| Տրված կանխավճարներ | 217,667 | 157,829 |
| Տրամադրված փոխառություն * | 5,958 | 11,874 |
| Այլ | 2,436 | 4,993 |
| | 885,729 | 732,921 |
| Դեբիտորական պարտքեր պետական բյուջեի հանդեպ | 2 | 9,637 |
| Ընդամենը | 885,731 | 742,558 |

Առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրելիությունը որոշելիս հաշվի է առնվում պարտքի մարման ժամանակացույցի ցանկացած փոփոխություն՝ սկսած պարտքերի առաջացման պահից մինչև հաշվետու ամսաթիվը:

Ընկերության սպասվող պարտքային կորուստները գնահատվել է 11,024 հազար դրամ, իսկ անհուսալի դեբիտորական պարտքերի մասով ստեղծված պահուստը 21,935 հազար դրամ: Առևտրայի դեբիտորական պարտքերը ներկայացված են զուտ արժեքով: Ապրանքների վաճառքի և ծառայությունների մատուցումից առաջացած առևտրային դեբիտորական պարտքերի միջին տևողությունը գնահատվում է 60 օր: Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

** Տրամադրված անտոկոս փոխառություն*

| | Արժույթ | | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|---|
| ՀՀ քաղաքացի փոխկապակցված անձից | Հազ․ Դրամ | Անվանական արժեք | 6,671 | 14,890 |
| | | Չվաստակած ֆինանսական եկամուտներ | (713) | (3,016) |
| | | | 5,958 | 11,874 |

## 11 ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

Դրամական հոսքերի հաշվետությունում ներկայացված դրամական միջոցները և դրա համարժեքները ներառում են հետևյալը.

*Հազար դրամ*

| | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Հաշիվներ բանկում | 70,037 | 6,205 |
| Կանխիկ դրամ | 37,549 | 681 |
| Ընդամենը | 107,586 | 6,886 |

## 12 Բաժնետիրական կապիտալ

**հազար դրամ**

| | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնեմասեր | 525,050 | 525,050 |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ չվճարված բաժնետիրական կապիտ | - | - |
| Դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնետիրական կապիտալի զուտ գումար | 525,050 | 525,050 |

| Բաժնետերեր | Գումար |
|---|---|
| *Էդիկ Ղազարյան* | *500,000,000 ՀՀ դրամ* |
| *Ռիփսիմե Կասուկյան* | *25,050,000 ՀՀ դրամ* |

***Պահուստային կապիտալ***

Համաձայն Բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենքի և Ընկերության կանոնադրության՝ Ընկերության բաշխման ենթակա գումարները սահմանափակվում են չբաշխված շահույթի մնացորդով, ինչպես նաև գրանցված է նաև Ընկերության՝ հրապարակման ենթակա ֆինանսական հաշվետվություններում:

Համաձայն օրենսդրության՝ Ընկերությունը պետք է ստեղծի պահուստ իր կուտակված շահույթի հաշվին, որը հավասար կլինի բաժնետիրական կապիտալի նվազագույնը 15 տոկոսին: Պահուստի նպատակն է ապագա կորուստների ծածկումը: Համաձայն կանոնադրության 9-րդ պարբերության Ընկերությունում ստեղծվում է պահուստային ֆոնդ ոչ պակաս, քան կանոնադրական կապիտալի 15 տոկոսը: 2022 թվականի դրությամբ այն կազմում է 78,758 հազար դրամ:

## 13 Վերագնահատման պահուստ

Վերագնահատման պահուստը առաջանում է հողի, շենքերի և սարքավորումների վերագնահատման արդյունքում: Վերագնահատված ակտիվների օտարման ժամանակ դրանց գծով վերագնահատման պահուստը հաշվեգրվում է ուղղակիորեն կուտակված շահույթին: Վերագնահատման պահուստը ներկայացված է սեփական կապիտալում՝ համապատասխան հետաձգված հարկերից դուրս:

## 14 Վարկեր, փոխառություններ և լիզինգ

### *14.1 Բանկային վարկեր*

| *Հազար դրամ* | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| *Ոչ ընթացիկ պարտավորություններ* | | |
| Երկարաժամկետ վարկեր | 1,064,481 | 1,106,772 |
| Չկրած տոկոսային ծախսեր ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով | (42,226) | (45,311) |
| | 1,022,255 | 1,061,461 |
| Կարճաժամկետ վարկեր | 340,230 | 1,616,974 |
| Չկրած տոկոսային ծախսեր ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունների գծով | (49,609) | (98,576) |
| | 290,621 | 1,518,398 |
| Ընդամենը | 1,312,876 | 2,579,859 |

Բանկային վարկերը ստացված են ռեզիդենտ բանկերից և Միջազգային ֆինանսական հաստատություններից:

- ✓ *Սեւծովյան Առևտրի և Զարգացման Բանկ BSTDB(Black Sea Trade & Development Bank)*

| Արժույթ | Տոկոսադրույք | Մարման տարի | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|---|
| ԵՎՐՈ | EURIBOR +5.7% | 2022 | - | 479,872 |

- ✓ *Միջազգային ֆինանսական կորպորացիա IFC (International Finance Corporation)*

| Արժույթ | Տոկոսադրույք | Մարման տարի | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|---|
| ԱՄՆ դոլար | LIBOR +6% | 2022 | - | 531,371 |

- ✓ *Ռեզիդենտ բանկեր*

| | Արժույթ | % | Մարման տարի | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|---|---|
| ԲԱՆԿ [1] | ԱՄՆ դոլար | 7.5% | 2023 | 585,847 | 860,529 |
| ԲԱՆԿ [2] | ԱՄՆ դոլար | 9% | 2022-2025 | 138,040 | 255,229 |
| ԲԱՆԿ [3] | ԱՄՆ դոլար | 8.5% | 2023-2025 | 410,638 | 373,250 |
| | ՀՀ դրամով | 12-13% | 2024-2025 | 178,351 | 79,608 |

Այլ տեղեկատվություն վարկերի մասին.

- ✓ ԲԱՆԿ [1]-ից ստացված վարկի ապահովման առարկա է հանդիսացել Ագրինկո ՍՊԸ-ի հետ 2018 թվականին կնքված կորպորատիվ երաշխավորության պայմանագիրը, ինչպես նաև նույն ժամանակահատվածում կնքված անշարժ գույքի հաջորդող գրավի (հիփոթեքի) պայմանագիրը, որոնցով Ագրինկո ՍՊԸ-ն հանդես է եկել համապատասխանաբար որպես երաշխավոր և գրավատու Արմավիրի մարզում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույքերի (երեք սեփականության վկայականներ):
- ✓ ԲԱՆԿ [2]-ից ստացված վարկի ապահովման առարկա է հանդիսացել Բանկի հետ 2018 թվականին կնքված Գլխավոր վարկային պայմանագրի շրջանակներում կնքված մեկ անշարժ գույքի հաջորդող գրավի (հիփոթեքի) պայմանագիրը և երեք Երաշխավորության պայմանագրերը: Ինչպես նաև Ընկերությունը դրամական պահանջների և/կամ այլ պարտքերի կատարման ապահովման նպատակով գրավ է դնում բանկային երաշխիքի և/կամ ակրեդիտիվի ապահովությամբ ապագայում ձեռքբերվելիք ներմուծված ապրանքները: Ապագայում ձեռքբերվելիք ներմուծված ապրանքների ցանկը սահմանվում է Վարկի տրամադրման պայմաններով կամ այլ պայմանագրով:
- ✓ ԲԱՆԿ [3]-ի հետ վարկային հարաբերությունները կարգավորվում են 2015 թվականին կնքված Հիմնական վարկային պայմանագրի շրջանակներում: Այդ Հիմնական պայմանագրի շրջանակներում կնքված բոլոր պայմանագրերը ապահոված են գրավով և կնքված են առանձին պայմանագրեր: ՀՀ կառավարության աջակցությամբ <Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի> շրջանակներում Բանկի և Ընկերության միջև կնքվել են զգալի քանակի վարկային պայմանագրեր: Սուբսիդավորմա գումարը փոփոխական է:

*14.2 Փոխառություններ*

| | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Ոչ ընթացիկ պարտավորություններ | 941,544 | 192,055 |
| Երկարաժամկետ փոխառության համախառն գումար | (86,677) | (20,173) |
| | 854,867 | 171,882 |
| Կարճաժամկետ փոխառության համախառն գումար | 122,998 | 153,260 |
| Չկրած տոկոսային ծախսեր | (7,761) | (17,924) |
| | 115,237 | 135,336 |
| | 970,104 | 307,218 |

Ներգրավված ցպահանջ և ժամկետային անտոկոս պայմանագրերը գրավով ապահոված չեն:

### *14.3 Ֆինանսական վարձակալություն*

| **Հազար դրամ** | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Ոչ ընթացիկ պարտավորություններ | 27,970 | 10,588 |
| Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ | (5,451) | (1,093) |
| | 22,519 | 9,495 |
| Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս | - | 2,050 |
| Չկրած տոկոսային ծախսեր ֆինանսական վարձակալության գծով | | - |
| | - | 2,050 |
| | 22,519 | 11,545 |

Ընկերությունը 2019 թվականին կնքել է «Ֆինանսական վարձակալության (լիզինգի)» պայմանագիր ԲԱՆԿ [2]-ի հետ:

- ✓ Թիվ LAB18-00300501 պայմանագրով ձեռք է բերվել սարքավորում՝ 16,756 հազար դրամ ընդհանուր արժեքով: Տարեկան տոկոսադրույքը կազմում է 11 տոկոս: Պայմանագրի գործողության ժամկետն է 2027 թվականը:

Ընկերությունը կնքել է նոր §Ֆինանսական վարձակալության (լիզինգի)¦ երկու պայմանագիր Վարկային կազմակերպություն հետ: Թիվ ALC00388LO և ALC00399LO պայմանագրերով ձեռք է բերվել երկու Բելոռուս մակնիշի գյուղատնտեսական տրարկոր 21,000 հազար դրամ ընդհանուր արժեքով:

## 15 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

*Հազար դրամ*

| | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 37,906 | 76,265 |
| Հատուցումներ աշխատակիցներին | 58,188 | 36,210 |
| Վճարվելիք սոց. հատկացումներ | 845 | 625 |
| Կանխավճարներ հաճախորդներից | 128,784 | 160,172 |
| Հարկերի գծով պարտավորություններ՝ բացառությամբ շահութահարկի | 12,922 | 10,721 |
| Ընթացիկ պահուստներ | - | 14,630 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | - | 2,082 |
| Ընդամենը | 238,645 | 300,705 |

Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է մեկ ամիս: Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

## 16 Հասույթ

*Հազար դրամ*

| | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Արտադրանքի իրացումից հասույթ | 1,605,987 | 2,105,689 |
| Ապրանքների իրացումից հասույթ | 173,886 | 56,924 |
| Աշխատանքների կատարումից հասույթ | 420 | 639 |
| Ծառայության մատուցումից հասույթ | 57,167 | 106,225 |
| | 1,837,460 | 2,269,477 |

## 17 Վաճառքի ինքնարժեք

*Հազար դրամ*

| | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Վաճառված արտադրանքի ինքնարժեք | 1,055,268 | 1,303,870 |
| Վաճառված ապրանքների ինքնարժեք | 131,259 | 41,099 |
| Կատարված աշխատանքների ինքնարժեք | 87 | - |
| Ծառայության մատուցման ինքնարժեք | 41,864 | 47,795 |
| | 1,228,478 | 1,392,764 |

## 18 Այլ եկամուտ

*Հազար դրամ*

| | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Այլ պաշարների վաճառքից եկամուտ | 57,294 | 161,116 |
| Ներած պարտավորություն վարկերի գծով | - | 679,394 |
| Եկամուտներ տույժեր, տուգանքներից | 828 | - |
| Նյութական վնասի փոխհատուցումից եկամոտներ | 1,010 | - |
| Գույքագրմամբ հայտնաբերված արժեքներից եկամուտներ | 1,772 | - |
| Ծախսի փոխհատուցում | - | 1,800 |
| Արտարժույթի փոխանակումից եկամուտներ | 190,547 | - |
| Այլ | 792 | 449 |
| | 252,243 | 842,759 |

## 19 Այգիների մշակման և պահպանման ծախսեր

*Հազար դրամ*

| | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Հատուցումներ աշխատակիցներին | 28,250 | 19,080 |
| Հիմնական միջոցների մաշվածության | 77,389 | 55,183 |
| Ոռոգման և ջրի ծախս | 21,810 | 15,332 |
| Վարձակալություն | - | 2,800 |
| Նյութածախս | 14,385 | 13,454 |
| Այլ | 2,537 | 3,856 |
| | 144,371 | 109,705 |

## 20 Իրացման ծախսեր

*Հազար դրամ*

| | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Հատուցումներ աշխատակիցներին | 72,102 | 74,658 |
| Հիմնական միջոցների մաշվածության, նորոգման և սպասարկման ծախսեր | 14,917 | 15,294 |
| Արտադրանքի, ապրանքների փաթեթավորման, պահպանման ծախսեր | 2,667 | 2,349 |
| Տրանսպորտի և ապահովագրության ծախսեր | 79,193 | 100,384 |
| Մարքեթինգի և գովազդի ծախսեր | 4,080 | 3,542 |
| Այլ | 10,799 | 14,336 |
| | 183,758 | 210,563 |

## 21 Վարչական ծախսեր

*Հազար դրամ*

| | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Հատուցումներ աշխատակիցներին | 62,820 | 69,870 |
| Հիմնական միջոցների մաշվածության, վերանորոգման ծախսեր | 20,600 | 21,432 |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | 5,644 | 4,576 |
| Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր | 1,803 | 2,095 |
| Գրասենյակային և կոմունալ ծախսեր | 3,884 | 7,971 |
| Խորհրդատվական ծախսեր | 2,060 | 980 |
| Բանկային,ապահովագրության ծախսեր | 3,099 | 1,519 |
| Չփոխհատուցվող հարկերից ծախսեր | 5,252 | 4,943 |
| Այլ | 2,043 | 2,025 |
| | 107,205 | 115,411 |

## 22 Այլ ծախսեր

*Հազար դրամ*

| | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Այլ պաշարների օտարումից ծախսեր | 41,410 | 133,304 |
| Պաշարների արժեքի փոփոխությունից ծախսսեր, դեբիտորական պարտքերի կորուստների գծով ծախսեր | 9,771 | 293 |
| Տույժեր, տուգանքներ, դատական ծախսեր | 1,478 | 1,792 |
| Արժեքների պակասորդներ և փչացումից կորուստներ | 2,484 | 2,731 |
| Հ/Մ պահպանման, լուծարման ծախսեր | 41,255 | 105,140 |
| Փոխհատուցելի բացակայությունների գծով ծախսեր | 9,048 | |
| Այլ | 30,973 | 26,169 |
| | 136,419 | 269,429 |

## 23 Ֆինանսական հոդվածներ

**Հազար դրամ**

| | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Տոկոսային եկամուտներ | 845 | 4 |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ գործառնական ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաչափումից օգուտներ | - 181,580 | - |
| Տոկոսային ծախսեր | (195,236) | (302,901) |
| Այլ ֆինանսական ծախսեր | - | (9,443) |
| | (12,811) | (312,340) |

## 24 Այլ ոչ գործառնական շահույթ/վնաս

**Հազար դրամ**

| | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից եկամուտ | 1,251,970 | 710,497 |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից ծախսեր | (872,402) | (405,619) |
| Հիմնական միջոցների օտարումից եկամուտ | 122,467 | 1,033 |
| Հիմնական միջոցների օտարումից ծախսեր | (109,719) | (540) |
| Ոչ ընթացիկ նյութական և ՈՆԱ վերաչափումից կորուստներ | (6,642) | (265,393) |
| Անհատույց տրված ակտիվներից ծախսեր | (3,777) | (2,305) |
| | 381,897 | 37,673 |

## 25 Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)

**Հազար դրամ**

| | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Ընթացիկ հարկ | - | |
| Հետաձգված հարկ | 7,929 | 135,740 |
| Ընդամենը | 7,929 | 135,740 |

2022թ. Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը 18 տոկոս է (2021թ.՝ 18%):

**Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.**

**Հազար դրամ**

| | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | Արդյունավետ հարկային դրույքաչափ (%) | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | Արդյունավետ հարկային դրույքաչափ (%) |
|---|---|---|---|---|
| Շահույթը մինչև հարկումը | 727,292 | | 800,370 | |
| Շահութահարկի հաշվարկ սահմանված հարկային դրույքով | 130,913 | 18.00 | 144,067 | 18.00 |
| Չնվազեցվող / չհարկվող հոդվածներ | (122,984) | (16.9) | (8,327) | (1.04) |
| Հարկային վնասի ապաճանաչում | | | | |
| Շահութահարկի գծով ծախս/ (փոխհատուցում) | 7,929 | 1.1 | 135,740 | 16.96 |

## 26 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի և այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք համարվում են ընդունելի տվյալ հանգամանքներում:

Ընկերությունը կատարում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Հաշվապահական գնահատումները, սակայն, երբեմն չեն համապատասխանում իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

*Դեբիտորական պարտքերի և*
*կանխավճարների վերականգնում*

Դեբիտորական պարտքերի մնացորդը ներառում է նաև պետական բյուջեի հանդեպ ունեցած դեբիտորական պարտքերը: Ղեկավարության համոզմամբ պետական բյուջեի հանդեպ ունեցած դեբիտորական պարտքերն ամբողջովին փոխհատուցվող են:

## 27 Պայմանական պարտավորություններ

### 27.1 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացրած գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով:

Այնուամենայնիվ, շուկայական ավելի խիստ ցնցումների պայմաններում Հայաստանի տնտեսությունը, ինչպես նաև Ընկերությունը կարող են ընկնել այդ ճգնաժամի ազդեցության տակ, ինչի հետևանքները կարող են լինել նշանակալի: Ընկերության վրա հնարավոր հետևանքները կարող են ներառել անվճարունակությունը, թուլացած հեղինակությունը, ապրանքների և ծառայությունների վաճառքի, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ ընկերության ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքների վրա:

### 27.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում:

### 27.3 Պայմանական հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ պահանջում է մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ կատարել է համապատասխան հատկացումներ հարկային պարտավորությունների գծով՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա:

### 27.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ընկերությունը բավարարում է ՀՀ կառավարության պահանջները՝ կապված շրջակա միջավայրի հետ և չունի պարտավորություններ կապված շրջակա միջավայրի հետ:

### 27.5 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է երկու բաժնետերերի կողմից որոնց պատկանում է ընկերության բաժնետոմսերի 100 տոկոսը:

### 27.6 Իրավական հարցեր

Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման պահին դատական ատյաններում գտնվող հաշվեկշռի վրա էական ազդեցություն ունեցող դատական գործեր չկան:

### 27.7 Ընկերության հետ փոխկապակցված անձիք

- ✓ Ղազարյան Էդիկ Սմբատի-Հիմնադիր, Նոյան ՍՊԸ՝ /ՌԴ/ Հիմնադիր,
- ✓ Ղազարյան Վահե Էդիկի-Գլխավոր տնօրեն, Էկներկ ՍՊԸ՝ Համահիմնադիր, Ագրիկո ՍՊԸ՝ Հիմնադիր,
- ✓ Ղազարյան Մերի Էդիկի-Գործադիր տնօրեն, Նովոտեք ՍՊԸ՝ Հիմնադիր:

### 27.8 Գործարքներ անձնակազմի հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը՝

**Հազար դրամ**

| | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Աշխատավարձ և պարգևատրումներ՝ | 63,200 | 63,295 |

Հիմնական անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը՝

| | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| Աշխատավարձ | 357,337 | 353,628 |
| Արձակուրդային | 20,291 | 20,167 |
| Պարգևատրումներ | 12,879 | 2,838 |
| Ապահովագրություն/ գործատուի կողմից | | - |
| Կուտակային ֆոնդին հատկացումներ | | - |
| Այլ | 3,124 | 3,426 |

## 28. Ֆինանսական գործիքներ

28.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականության դրույթներ․

Ֆինանսական ակտիվների, ֆինանսական պարտավորությունների և բաժնային գործիքների յուրաքանչյուր դասի համար կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, ընդունված մեթոդների մանրամասները և եկամուտների ու ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն 3-ում:

Ֆինանսական գործիքների կատեգորիաներ․

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված ակտիվների և պարտավորությունների մնացորդները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

***Ֆինանսական ակտիվներ***

*(հազ․ դրամ)*

| | 2022թ․ դեկտեմբերի 31-ի ավարտված տարի | 2022թ․ դեկտեմբերի 31-ի ավարտված տարի |
|---|---|---|
| *Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ* | | |
| Տրված փոխառություններ | 5,958 | 11,874 |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 659,668 | 558,225 |
| Բանկային ավանդներ | - | - |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, բացառությամբ՝ դրամարկղի մնացորդի | 70,037 | 6,205 |
| Ընդհանուր ֆինանսական ակտիվներ | 741,579 | 570,388 |

***Ֆինանսական պարտավորություններ***

*(հազ․ դրամ)*

| | 2022թ․ դեկտեմբերի 31-ի ավարտված տարի | 2021թ․ դեկտեմբերի 31-ի ավարտված տարի |
|---|---|---|
| *Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ* | | |
| Ստացված փոխառություններ | 970,103 | 307,218 |
| Բանկային վարկեր | 1,312,876 | 2,572,413 |
| Երկարաժամկետ վարձակալության գծով պարտավորություններ | 22,519 | 11,545 |
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 96,662 | 127,105 |
| Ընդհանուր ֆինանսական պարտավորություններ | 2,402,160 | 3,018,281 |

## 29. Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ընկերությունը ենթարկվում է ֆինանսական գործիքների հետ կապված տարբեր ռիսկերի: Ռիսկերի հիմնական տեսակներն են շուկայական ռիսկը, վարկային (պարտքային) ռիսկը և իրացվելիության ռիսկը: Ընկերությունը ֆինանսական ակտիվների ակտիվ առևտուր չի իրականացնում սպեկուլյատիվ նպատակներով և չի գրում օպցիոններ:
Ամենաէական ֆինանսական ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, նկարագրված են ստորև:

### Ֆինանսական ռիսկի գործոններ

### ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման արդյունքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես արժութային ռիսկի, որը բխում է ինչպես իր գործառնական, այնպես էլ ֆինանսական գործունեությունից:
Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ շուկայական գների փոփոխությունները, ինչպիսիք են արտարժույթի փոխարժեքները, տոկոսադրույքները, բաժնետոմսերի գները, կազդեն Ընկերության շահույթ կամ վնասի և ֆինանսական գործիքների արժեքների վրա: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է շուկայական ռիսկին ենթարկվածությունը պահպանել ընդունելի սահմաններում՝ միաժամանակ օպտիմիզացնելով հատույցը: Ընկերությունը իր շուկայական ռիսկերը չի հեջավորում:

**Արտարժութային ռիսկին ենթարկվածությունը**
*Արժութային ռիսկ*

Ընկերությունը ենթարկված է արտարժութային ռիսկին արտարժույթային փոխառությունների և արտարժութային դրամական մնացորդների գծով:

**Արտարժութային ռիսկին ենթարկվածությունը**

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հավանաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությունը ենթարկում է արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև, արտահայտված հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով:

***Ֆինանսական ակտիվներ***

*(հազ. դրամ)*

| | Արտարժույթով արտահայտված 31.12.2022թ | Արտարժույթով արտահայտված 31.12.2021թ |
|---|---|---|
| Տրված փոխառություններ | 5,958 | 11,874 |
| Առևտրային դեբիտորական պարտքեր | 659,668 | 558,225 |
| Բանկային ավանդներ | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, բացառությամբ՝ դրամարկղի մնացորդի | 70,037 | 6,205 |
| | 741,579 | 570,388 |

***Ֆինանսական պարտավորություններ***

*(հազ. դրամ)*

| | Արտարժույթով արտահայտված 31.12.2022թ. | Արտարժույթով արտահայտված 31.12.2021թ |
|---|---|---|
| Ստացված փոխառություններ | 970,103 | 307,218 |
| Բանկային վարկեր | 1,312,876 | 2,572,413 |
| Երկարաժամկետ վարձակալության գծով պարտավորություններ | 22,519 | 11,545 |
| Առևտրային կրեդիտորական պարտքեր | 96,662 | 127,105 |
| Ընդհանուր ֆինանսական պարտավորություններ | 2,402,160 | 3,018,281 |
| **Զուտ արդյունք** | (1,660,581) | (2,447,893) |

Տարվա ընթացքում կիրառված միջին փոխարժեքներ:

| **Դրամով** | **Միջին փոխարժեքներ** | | **Հաշվետու ամսաթվի փոխարժեք** | |
|---|---|---|---|---|
| | **2022** | **2021** | | |
| | **12 ամիս** | **12 ամիս** | **31.12.2022թ** | **31.12.2021թ** |
| 1 Դոլար | 435.87 | 503.83 | 393.57 | 480.14 |

## բ) Վարկային (պարտքային) ռիսկ

Վարկային ռիսկը հաճախորդի կամ այլ գործընկերոջ կողմից իր պարտավորությունները չկատարելու հետևանքով Ընկերության կողմից ֆինանսական կորուստներ կրելու ռիսկն է: Այս ռիսկի ազդեցությունը Ընկերության վրա առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը, փոխառությունները և այլն: Վարկային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքներով.

| *(հազ. դրամ)* | 2022թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2021թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ. |
|---|---|---|
| *Ֆինանսական ակտիվներ՝ հաշվեկշռային արժեքներ* | | |
| Դեբիտորական պարտքեր | 5,958 | 11,874 |
| Տրամադրված փոխառություններ | 659,668 | 558,225 |
| Բանկային ավանդներ | - | - |
| Բանկային հաշիվների մնացորդներ | 70,037 | 6,205 |
| | 741,579 | 570,388 |

## *գ) Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկը իրենից ներկայացնում է այն ռիսկը, երբ ընկերությունը չի կարողանա կատարել իր պարտավորությունները:

Ընկերության քաղաքականությունը ներառում է իրացվելիության կառավարման զգուշավոր քաղաքականություն, որը նախատեսում է դրամական միջոցների եւ բանկային հաշիվների մնացորդների, ինչպես նաեւ բարձր իրացվելի ակտիվների բավարար քանակ՝ ժամանակին պարտավորությունների համար բոլոր վճարումները ապահովելու համար:

Իրացվելիության ռիսկը գնահատելիս և կառավարելիս Ընկերությունը հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից դրամական միջոցների հոսքերը, մասնավորապես, դրամական միջոցներից և դեբիտորական պարտքերից: Ընկերության դրամական և առևտրային դեբիտորական պարտքերը զգալիորեն գերազանցում են պահանջվող ընթացիկ դրամական միջոցների արտահոսքի պահանջները: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերից պայմանագրային դրամական հոսքերը մարվում են 30 օրվա ընթացքում:

## 30 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունը կառավարում է իր կապիտալն այնպես, որ տեսանելի ապագայում կարողանա շարունակել իր գործունեությունը, միաժամանակ փորձելով առավելագույնի հասցնել շահույթը բաժնետիրոջ համար:

Ընկերության կապիտալը բաղկացած է սեփական կապիտալից, որը ներառում է կանոնադրական կապիտալը և կուտակված շահույթը:

Ընկերության ղեկավարությունը գնահատում է Ընկերության կապիտալի պահանջները՝ ապահովելու ֆինանսավորման կառուցվածքի ընդհանուր արդյունավետությունը և խուսափելու չափից ավելի վարկավորումից (լեվերինգից): Սա հաշվի է առնում Ընկերության ստորադաս պարտքի տարբեր դասեր: Ընկերությունը կարգավորում է կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ՝ ելնելով տնտեսական միջավայրի փոփոխություններից և ակտիվների հետ կապված ռիսկերից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ կատարելագործելու համար Ընկերությունը հնարավորություն ունի փոխել բաժնետիրոջը վճարված շահաբաժինների չափը, վերադարձնել կապիտալը բաժնետիրոջը, թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվներ՝ պարտքը նվազեցնելու համար:

Հաշվետու ժամանակաշրջանի համար Ընկերության կապիտալի ճշգրտումներ կատարող գումարները հետևյալն են.

| *(հազ. դրամ)* | 2022թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2021թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Ընդհանուր փոխառություններ, վարկեր և ֆին. | 2,305,498 | 2,891,176 |
| Հանած՝ մնացորդներ դրամարկղում և բանկերում | (107,586) | (6,886) |
| Զուտ փոխառություններ, վարկեր և ֆին. վարձակալություն | 2,197,912 | 2,884,290 |
| Ընդհանուր սեփական կապիտալ | 4,353,482 | 3,634,663 |
| Պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցություն | 0,50 | 0,79 |

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

30 հունիսի 2023թ. դրությամբ

հազար դրամ

| Ցուցանիշի անվանումը | 2023թ. 1-ին կիսամյակ (աուդիտ չանցած) |
|---|---|
| Ակտիվներ | |
| *Ընթացիկ ակտիվներ* | |
| Դրամական միջոցներ և համարժեքներ | 60,546 |
| Պաշարներ/նյութեր | 300,908 |
| Ապրանքներ /արտադրանք/ | 763,579 |
| Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով | 516,084 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 172,618 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 1,211 |
| Անավարտ արտադրություն | |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | |
| Այլ ընթացիկ ակտիվներ | 16,010 |
| ***Ընդամենը ընթացիկ ակտիվներ*** | ***1,830,956*** |
| *Ոչ Ընթացիկ ակտիվներ* | |
| Հողամասեր | 929,460 |
| Շենքեր, շինություններ | 1,458,961 |
| Մեքենաներ, սարքավորումներ | 5,390,184 |
| Տրանսպորտային միջոցներ | 526,608 |
| Կահույք, կահավորանք և այլ սարքեր | 425,073 |
| Այլ հիմնական միջոցներ | 172,409 |
| Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ | 775,186 |
| Ոչ նյութական ակտիվներ | 37,127 |
| Բիոլոգիական ակտիվներ | 1,050,499 |
| Ֆինանս.վարձակալ. ստացված ակտիվներ | 39,329 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | |
| Կուտակված մաշվածք | (5,616,925) |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | |
| ***Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ*** | ***5,187,911*** |
| | |
| **Ընդամենը ակտիվներ** | **7,018,867** |
| | |
| Պասիվներ | |
| *Ընթացիկ պարտավորություններ* | |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 67,564 |
| Կրեդիտորական պարտքեր գնումների գծով | 55,800 |
| Այլ կրեդիտորական պարտքեր | |

| | |
|---|---|
| Կարճաժամկետ վարկեր | 358,975 |
| Կարճաժամկետ փոխառություններ | 76,462 |
| Վճարվելիք հարկային պարտքեր | 13,116 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների գծով | 63,648 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին | |
| Այլ ընթացիկ պարտքեր | 4 |
| ***Ընդամենը ընթացիկ պարտավորություններ*** | ***635,569*** |
| *Երկարաժամկետ պարտավորություններ* | |
| Երկարաժամկետ վարկեր | 841,636 |
| Երկարաժամկետ փոխառություններ | 836,993 |
| Ֆինանս.վարձակալ. գծով պարտքեր | 19,582 |
| Այլ երկարաժամկետ պարտքեր | |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 361,442 |
| Ոչ ընթացիկ պահուստներ | |
| ***Ընդամենը երկարաժամկետ պարտավորություններ*** | ***2,059,653*** |
| *Կապիտալ* | |
| Կանոնադրական կապիտալ և պահուստներ | 525,050 |
| Վերագնահատումից տարբերություն | 1,689,413 |
| Կուտակված շահույթ/վնաս | 2,103,997 |
| Հիմնադիրների ներդրումներ | |
| Սեփական կապիտալի այլ տարրեր | 5,185 |
| ***Ընդամենը կապիտալ*** | ***4,323,645*** |
| | |
| **Ընդամենը պասիվներ** | **7,018,867** |

Վահե Ղազարյան

Գլխավոր տնօրեն

Լյուդմիլա Սարգսյան

Գլխավոր հաշվապահ

# Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

30 հունիսի 2023թ. դրությամբ

| հազար դրամ | 2023թ. 1-ին կիսամյակ (աուդիտ չանցած) |
|---|---|
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 862,171 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | (589,822) |
| Համախառն հասույթ | 272,348 |
| Իրացման ծախսեր | (97,380) |
| Վարչական ծախսեր | (55,516) |
| Ապրանքների, ծառայությունների իրացումից շահույթ | 119,453 |
| Գործառնական այլ եկամուտներ | 82,019 |
| Գյուղատնտեսական գործունեությունից եկամուտ | 13,884 |
| Գործառնական այլ ծախսեր | (66,081) |
| Գյուղատնտեսական գործունեությունից ծախսեր | (96,305) |
| Գործառնական գործունեությունից շահույթ | 52,969 |
| Ֆինանսական ծախսեր | (46,430) |
| Այլ ոչ գործառնական շահույթ, այդ թվում | (35,759) |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից զուտ արդյունք | (35,950) |
| Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստներ | |
| Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսեր/եկամուտ | 1,612 |
| Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր | (1,421) |
| Զուտ շահույթ մինչև հարկումը | (29,219) |
| Շահութահարկի գծով ծախս | |
| Զուտ շահույթ | (29,219) |

Վահե Ղազարյան

Գլխավոր տնօրեն

«ԷԼՊՐՈՏԵՐՄ» 02541134

Լյուդմիլա Սարգսյան

Գլխավոր հաշվապահ

# Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

30 հունիս 2023թ. դրությամբ

| | 2023թ. հունիսի 30-դրությամբ | 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր** | | |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառ. իրացումից | 942,034 | 1,931,685 |
| Գործառնական այլ գործունեությունից | 62,813 | 180,460 |
| **Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր** | **1,004,847** | **2,112,145** |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր** | | |
| Գնումների գծով | (650,530) | (1,391,454) |
| Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից | (144,076) | (321,904) |
| Վճարումներ բյուջե և սոց. վճարումների գծով | (67,060) | (120,501) |
| Գործառնական այլ գործունեությունից ելքեր | (2,664) | (20,258) |
| **Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր** | **864,330** | **1,854,117** |
| **Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | ***140,517*** | ***258,028*** |
| **Ներդրումային գործունեությունից մուտքեր** | | |
| Ֆինանսական ակտիվներով գործառնություններից | - | 8,219 |
| Շահաբաժինների և տոկոսների ստացումից | | |
| **Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր** | - | **8,219** |
| **Ներդրումային գործունեությունից ելքեր** | | |
| Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման գծով | | |
| -Փոխառությունների տրամադրումից | (7,676) | - |
| Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր | - | - |
| **Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր** | ***(7,676)*** | ***8,219*** |
| **Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների մուտքեր** | | |
| Ստացված վարկերից և փոխառություններից | 633,511 | 1,558,820 |
| **Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից մուտքեր** | **633,511** | **1,558,820** |
| **Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների ելքեր** | | |
| Ստացված վարկերի և փոխառությունների մարումից | (834,155) | (1,724,250) |
| Վճարված շահաբաժիններ և տոկոսներ | (5) | (182) |
| Ֆինանսական այլ գործունեությունից ելքեր | (3,227) | (8,485) |

| | | |
|---|---|---|
| Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ելքեր | (837,387) | (1,732,917) |
| *Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր* | *(203,876)* | *(174,097)* |
| Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր | (71,036) | **92,150** |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ | 23,909 | 8,550 |
| Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը | **107,586** | **6,886** |
| Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը | **60,545** | **107,586** |

Վահե Ղազարյան

Գլխավոր տնօրեն

Լյուդմիլա Սարգսյան

Գլխավոր հաշվապահ